

ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ԱՐԱՅԻՆ
ՏԻԳՐԱՆՑԱՆ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
СЕКТОР ИСТОРИИ И ТЕОРИИ ИСКУССТВ

Р. АТАЯН, М. МУРАДЯН

АРМЕН ТИГРАНЯН

ЖИЗНЬ, МУЗЫКАЛЬНО-ОБЩЕСТВЕННАЯ
ДЕЯТЕЛЬНОСТЬ И ТВОРЧЕСТВО

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1955

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՐ

78(47.925)(092 Տրգրակյան)
Ա-26

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1957 թ.

Ռ. ԱԹԱՅԱՆ, Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԱՐՄԵՆ ՏԻԳՐԱՆՅԱՆ

ԿՅԱՆՔԸ, ԵՐԱԺՇՏԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՏԵՂՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

A 20185



Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
Խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ:



Արտուր Գևորգյան



ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Ա. Տիգրանյանը պատկանում է հայկական սովետական կոմպոզիտորների ավագ սերնդին: Նա մեկն է բազմավաստակ այն կոմպոզիտորներից, որոնք շնայած իրենց պատկասելի տարիքին, երիտասարդական ավյունով առաջ են տարել սովետական կարգերում վերածնված հայկական երաժշտական կուլտուրայի զարգացման գործը:

Անդրկովկասում սովետական կարգերի հաստատման առաջին իսկ օրերից նա ակտիվորեն մասնակցել է ժողովրդական լայն զանգվածների երաժշտական դաստիարակության, երաժշտական-հասարակական գործունեության ծավալման և սովետական երաժշտական ստեղծագործության կարելավորագույն խնդիրների իրականացման գործին: Կանգնած լինելով սովետական առաջավոր կոմպոզիտորների շարքում, նա իր գործունեությամբ միշտ էլ արձագանքել է սովետական արվեստի զարգացման բնագավառում Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության առաջադրած հրատապ հարցերի լուծմանը:

Ա. Տիգրանյանը ստեղծագործական և մանկավարժական մեծ աշխատանք է կատարել նաև սովետական կարգերի հաստատումից առաջ: Նա, ականավոր հայ կոմպոզիտորներ Կոմիտասի, Ա. Սպենդիարյանի և Ռ. Մելիքյանի ժամանակակիցն է: Նախասովետական շրջանի կուլտուրական կյանքի զբժվարագույն պայմաններում, երբ հայկական կլասիկ երաժշտական ստեղծագործության հիմքերն էին դրվում, Ա. Տիգրանյանը կարևորագույն ժանրերից մեկի՝ օպերային ստեղծագոր-

ծուրյան ասպարեզում անզնահատելի ծառայություն է մատուցել:

Ա. Տիգրանյանի բե՛ նախասովետական և բե՛ սովետական տարիների առավել կարևոր վաստակը օպերային ստեղծագործությունն է: Նրա կոմպոզիտորական համրավը կապված է հանրածանոթ «Անուշ» օպերայի ստեղծման հետ:

«Անուշ»-ը իսկական ժողովրդական երաժշտական ստեղծագործության փայլուն նմուշ է: Ավելի քան քառասուն տարվա ընթացքում բազմիցս բեմադրվելով, այդ ստեղծագործությունն այժմ էլ չի կորցրել բարձրությունը և լիովին պահպանելով իր հմայքը, շարունակ նոր ունկնդիրներ է գրավում: Ժողովրդական երաժշտությանը և ժողովրդական արվեստի տրագիգիաներին հարազատ, բարձր գեղարվեստական ձևերով ու ոնալիստորեն ժողովրդի կյանքն արտացոլելով, «Անուշ»-ը վաղուց արդեն դարձել է լայն զանգվածների սեփականություն, բառիս բուն իմաստով ժողովրդականացել, մտել է ժողովրդի կենցաղի մեջ:

Ա. Տիգրանյանի կոմպոզիտորական գործունեությունն առանձնապես ծաղկել ու ընդարձակվել է Սովետական իշխանության տարիներին, երբ երաժշտական արվեստը հասարակական խոշոր նշանակություն և պետական զնահատումն ձեռք բերեց՝ դառնալով սովետական ժողովրդի գեղարվեստական դաստիարակության կարևորագույն միջոցներից մեկը: Հենց «Անուշ» օպերան, որ Ա. Տիգրանյանի նախասովետական տարիների ամենախոշոր ստեղծագործությունն է, իր վերջնական, ավարտուն և լավագույն հեղինակային խմբագրությունն ստացել և առաջին անգամ արժանավայել կերպով բեմ է հանվել սովետական պայմաններում, Նրևանի Այ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի Պետական բառուհում:

Ա. Տիգրանյանը հայկական ազգային օպերային ստեղծագործությունը հարստացրել է ևս մեկ արժեքավոր գործով՝ պատմահերոսական «Դավիթ բեկ» օպերայով և հանդես է եկել սովետական կյանքը գովերգող վոկալ և օրկեստրային բազմաբով ստեղծագործություններով:

Իր խորապես դեմոկրատական ստեղծագործություններով Ա. Տիգրանյանը խոշոր ներդրում է կատարել սովետական երաժշտական կուլտուրայի զանձարանը: Մշտապես կապված լինելով ժողովրդի լայն զանգվածների հետ և սնվելով ժողովրդական երաժշտության բուն ակունքներից, Ա. Տիգրանյանը հանդիսացել է իսկական սովետական ֆալանգու և առաջավոր արվեստագետի տիպար: Եվ շնայած այն մեծ ժողովրդականությանը, որ վայելում է Ա. Տիգրանյանը, հրապարակի վրա այժմ չկա նրա գործունեությանը նվիրված երաժշտագիտական որևէ աշխատություն: Այդպիսի աշխատության հույժ անհրաժեշտությունը վաղուց է հասունացել:

Հետագային բողնելով Ա. Տիգրանյանի ստեղծագործական ժառանգության երաժշտագիտական մանրամասն վերլուծությունը, ներկա գրույկը նպատակ ունի սեղմ գծերով լուսաբանել նրա կյանքը, գործունեությունը և երաժշտական ստեղծագործությունը:

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանի ստեղծագործական ուղին գնահատելու համար անհրաժեշտ է ծանոթանալ երաժրշտական այն միջավայրին, ուր հիմնադրվեց և զարգանալ սկսեց հայ կլասիկ երաժշտական արվեստը:

Հայ ժողովուրդն իր բազմադարյա գոյության ընթացքում ստեղծել է արվեստի բարձրարժեք կոմպոզիցիեր: Դրանցից են՝ հնուց պահպանված աղջային ճարտարապետության և կերպարվեստի հուշարձանները, դարերի ընթացքում կերտված և մեղոդիական զեղեցիկությամբ ու զրավիչ անմիջականությամբ աչքի ընկնող ժողովրդական երգը:

Հայկական արվեստը զարգանալով օտար բնակալության և տեղական ֆեոդալական շահագործման դեմ աշխատավոր ժողովրդի անդուլ պայքարի պայմաններում, զեղարվեստական խորը ընդհանրացման է ենթարկել այդ ազատագրական պայքարի հերոսական գրվազները, որոնք իրենց առավել ցայտուն արտահայտությունն են գտել հերոսական էպոսի անմահ ստեղծագործություններում:

Սակայն պատմական առանձնահատուկ պայմանները՝ ինքնուրույն պետականության կորուստը, օտար բռնակալությունն ու անվերջ պատերազմները և դրա հետևանքով ժողովրդի ստեղծագործական ուժերի շարունակական շլատումը մեծ հարված են հասցրել հայկական կուլտուրայի և մասնավորապես սլոֆիստիոնալ երաժշտական կուլտուրայի նորմալ զարգացմանը: Դարեր շարունակ որպես մոնոդիկ արվեստ զարգացման բարձր աստիճանի վրա գտնվելով, հայկական

երաժշտությունը պրոֆեսիոնալ բազմաձայնության ուղին թևակոխել է միայն XIX դարի երկրորդ կեսից:

XIX դարը հայ ժողովրդի կյանքում նշանակալից ժամանակաշրջան է: Գարի երկրորդ քառորդից Արևելյան Հայաստանը միացվեց Ռուսաստանին, որի հետևանքով այդ ժամանակից սկսած պարսկական հետամնաց ֆեոդալական բռնապետութունից ազատագրված հայ ժողովրդի մի մասը իր բախտը կապեց ազատասեր ռուս մեծ ժողովրդի բախտի հետ: Հայ ժողովրդի ծոցից ելած առաջադեմ գործիչները մեծ ոգևորությամբ և երախտագիտության խոր զղացմունքով դնահատեցին Հայաստանի ազատագրման փաստը: «Թրհնվի էն սհաթը,— գրում էր հայ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանը,— որ ուխտ օրհնված ոտը հայոց լիս աշխարհը մտավ, և Ղզլբաշի անիծած շար շունչը մեր երկրից հալածեց»¹:

Ռուսաստանին միացված Արևելյան Հայաստանում ժողովուրդը ոչ միայն ապահովություն ձեռք բերեց ֆիզիկական խստառ քնաչնչումից, այլև դարգացման անհամեմատ նպաստավոր պայմաններ ստացավ: Աստիճանաբար դուրս գալով ֆեոդալական հետամնացությունից, հայ ժողովուրդը կապվեց ռուսական ազատագրական շարժման հետ: Ընդարմացած հասարակական կյանքում աշխուժացում սկսվեց: Հայկական կուլտուրան շփվելով բարձր դարգացման հասած ռուսական կուլտուրայի հետ, սնվելով նրա դեմոկրատական-ազատագրական առաջադեմ իդեաններով, վերակենդանացման ու զարգացման նոր շրջան թևակոխեց:

Զարգացումն ամենից վաղ և ցայտուն կերպով հանդես եկավ գրականության բնագավառում: Շնորհիվ հայ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի, հիմք դրվեց հայ աշխարհաբար գրական լեզվին և նոր գրականությանը: Խորապես գիտակցելով ռուս ժողովրդի հետ սերտ կապ հաստատելու պատմական անհրաժեշտությունը և հանդես գալով որպես ռուսական լեզվի ու գրականության խոշոր պրոպագանդիստ, Աբովյանը ռուսա-

¹ Խ. Աբովյան, Վերջ հայաստանի, Հայդեհերա, 1939, էջ 71:

կան կուլտուրայի օրինակով ստեղծեց ժողովրդի կյանքը ճշմարտացի արտացոլող և ժողովրդական լեզվով գրականութիւն: Հակադրվելով կղերա-ֆեոդալական խավարամիտ պահպանողականութեանը, Արուսեան իր ամբողջ գործունեութեան ընթացքում պայքարեց ժողովրդի լուսավորութեան համար, ժողովուրդների եղբայրութիւն քարոզեց և առաջ քաշեց ազգային ինքնաճանաչման ու ազատագրութեան գաղափարը:

Հայկական նոր կուլտուրայի զարգացման մեջ բացառիկ նշանակութիւն ունեցան Միքայել Նալբանդյանի ռուսացիոն դաղափարները: Սերասրեն կապված լինելով 60-ական թվականների ռուս ռուսացիոն-դեմոկրատների հետ և հանդիսանալով նրանց գաղափարական զինակիցը, Նալբանդյանը մեր գրականութեան մեջ քերեց նրանց առաջադիմական գաղափարները և հարազատ ժողովրդի ազատագրութեան գործը կապեց ռուսական ռուսացիոն շարժման հետ: Նալբանդյանը միաժամանակ հանդիսացավ հայ ռեալիստական էսթետիկայի հիմնադիրը և իր գրական, քննադատական ու հրապարակախոսական բեղմնավոր գործունեութեամբ ուղի հարթեց հայկական կուլտուրայի հետագա զարգացման համար:

Արուսեանի և Նալբանդյանի գործունեութեան ընթացքով հասարակական-քաղաքական տարբեր հոսանքների սուր պայքարի մթնոլորտում: Նրանց դեմոկրատական և ռուսացիոն գործունեութեանը սուր կերպով հակադրվեցին մի կողմից կղերա-պահպանողական անակցիոն, իսկ մյուս կողմից լիբերալ-բուրժուական հոսանքները: Գաղափարական այդ պայքարը բորբոքվելով դարի կեսերին, հետագայում շարունակվեց և հետզհետե ընդգրկեց հայկական արվեստի բոլոր բնագավառները:

XIX դարի 60-ական թվականների ռուս դեմոկրատական առաջավոր կուլտուրայի բարերար ազդեցութեամբ ձևավորված հայ դեմոկրատական ուղղութիւնը՝ դարի երկրորդ կեսում նշանակալից արդյունքների հասավ գրականութեան ու արվեստի բոլոր բնագավառներում: Խոշոր դեմոկրատ գրողներ Պ. Պոռշյանը, Ղ. Աղայանը, Հ. Պարոնյանը, Գ. Սունդուկյանը

և ուրիշներն իրենց ստեղծագործություններում անալիստորեն պատկերեցին կապիտալիզմի զարգացման հետևանքով առաջացած աշխատավոր ժողովրդի ծանր կացությունը, քննադատության ենթարկեցին սուլթանիզմի և ցարիզմի քաղաքական բեթիմը՝ շաղկապելով իրենց քննադատությունը ազգային ազատագրության մոտիվների հետ:

Ռեալիստական, դեմոկրատական ուղղության հետ միաժամանակ զրահանության մեջ հանդես եկավ և հակադրվեց նրան ազգային-սոցիալական ուղղությունը, որը լիբերալ բուրժուազիայի գաղափարախոսությունն էր արտահայտում:

Ռեալիստական զրահանության զարգացումը և մասնավորապես ականավոր զրամատուրգ Գ. Սունդուկյանի ստեղծագործությունը պայմանավորեցին հայ նոր, անալիստական թատրոնի հիմնադրումն ու զարգացումը: Հանձին Սունդուկյանի զրամատուրգիայի հայ թատերական արվեստի մեջ մուտք գործեցին ռուսական անալիստական թատրոնի և մասնավորապես ռուս մեծ զրամատուրգ Ա. Ն. Օստրովսկու ստեղծագործության տրադիցիաները: Գ. Սունդուկյանի և նրա հետ միաժամանակ ասպարեզ եկած հայ տաղանդավոր արտիստներ Գ. Զմշկյանի, Պ. Աղամյանի, Մ. Ամբիկյանի և ուրիշների պայքարի շնորհիվ հայկական թատրոնից աստիճանաբար դուրս մղվեցին ազգային ոտմանտիկական, կղերա-ֆեոդալական պատմական ողբերգությունն ու կեղծ-կրասիցիզմը և ասպահովվեց անալիստական ուղղության հաղթանակը:

Կերպարվեստի ասպարեզում նմանապես ամրապնդվեց անալիստական ուղղությունը: Հանդես եկան մի շարք տաղանդավոր նկարիչներ (Հ. Հովնաթանյան, Ստ. Ներսիսյան, Վ. Սուրենյան, Գ. Բաշինշաղյան, Վ. Մախոխյան և ուրիշներ), որոնք իրենց ստեղծագործություններում վարպետորեն պատկերեցին հարադատ երկրի բնությունը և ժողովրդի կենցաղը: Ռուսական և հայկական կերպարվեստի խոշոր գործիչ, հանձարեզ Ալվազովսկին իր ստեղծագործությամբ ձեռք բերեց համաշխարհային հռչակ: Հայ կերպարվեստի մեջ նա հիմնադրեց ծովանկարչության զարոց և ունեցավ իր հետևորդները:

Խոշոր տեղաշարժեր եղան հայկական երաժշտության ասպարեզում: XIX դարի երկրորդ կեսում հանդես եկած հայ նշանավոր երաժիշտ գործիչներն իրենց գործունեությամբ հող պատրաստեցին հայկական կլասիկ երաժշտության կազմավորման համար:

Նոր պրոֆեսիոնալ երաժշտական արվեստի կազմավորումն անմիջականորեն հիմնված էր ժողովրդական ստեղծագործության օգտագործման վրա: Հետաքրքրությունը դեպի ժողովրդի ստեղծագործությունը բնորոշ դժերից մեկն էր հանդիսանում ամենից առաջ հայ գրականության մեջ ամրապնդված դեմոկրատական ուղղության համար: Ժողովրդական և հատկապես դյուշացիական հարուստ և բազմաժանր բանահյուսությունը, որ երկար դարերի ընթացքում հալածվել և մոռացություն էր մատնվել կղերա-ֆեոդալական տիրող իդեոլոգիայի ներկայացուցիչների կողմից, հիմք հանդիսացավ մի շարք դեմոկրատ գրողների՝ Խ. Արուսյանի, Պ. Պոռչյանի, Ղ. Աղայանի, Հ. Հովհաննիսյանի, Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի և ուրիշների ստեղծագործության համար:

70—80-ական թվականներին գրի առնված ժողովրդական բանահյուսության նմուշների ժողովածուների հրատարակումը սկիզբ դրեց անգիր բանահյուսությունը գնահատելու և վեր հանելու նպատակը հետապնդող մի-շարժման, որը հետըզհետե ընդարձակվելով ընդգրկեց նաև երաժշտության բնագավառը: Հանդես եկան մի շարք հայ կոմպոզիտորներ՝ Ք. Կարա-Մուրզա, Մ. Եկմալյան, Ն. Տիգրանյան և ուրիշներ, որոնք գրի առան, մշակեցին և լայն պրոպագանդայի նյութ դարձրին դյուշական և քաղաքային ժողովրդական երգերն ու դրժիբային ստեղծագործությունները: Այդ ասպարեզում առանձնապես կարևոր նշանակություն ունեցավ խոշոր երաժշտական պրոպագանդիստ և կոմպոզիտոր Կարա-Մուրզայի (1853—1902) գործունեությունը: Շփվելով ռուսական կյանքի և երաժշտական կուլտուրայի հետ, խորապես ըմբռնելով այն հակասությունը, որ գոյություն ուներ հարազատ ժողովրդի ստեղծագործական մեծ հնարավորությունների ու պրոֆեսիոնալ երա-

ժրշտական արվեստի զարգացման ցածր մակարդակի միջև, Կարա-Մուրզան երաժշտական-հասարակական լայն գործունեությունն ծավալեց: Նա իր վրա վերցրեց ժողովրդի մեջ բազմաձայն երաժշտության արմատավորման շնորհակալ աշխատանքը, որը պրոֆեսիոնալ երաժշտական արվեստի զարգացման գործում ունեցավ հսկայական նշանակություն: Այդ խնդիրը իրականացվեց առավել հաջողությամբ շնորհիվ նրա, որ Կարա-Մուրզան իր համերգային և ստեղծագործական գործունեության նյութը դարձրեց հիմնականում ժողովրդական երգը: Ինչպես Կարա-Մուրզայի, նույնպես և հետագայում Կոմիտասի կողմից ժողովրդական երգն ստեղծագործարեն վերամշակելը պատմականորեն անհրաժեշտ և մի կարևոր էտապ հանդիսացավ ազգային երաժշտական ոճի մշակման գործում: Կարա-Մուրզայի ջանքերի շնորհիվ հայկական ազգային պրոֆեսիոնալ երաժշտական կուլտուրայի զարգացումը զրվեց ճիշտ ճանապարհի վրա և պարզ հեռանկար ստացավ:

Հայկական ազգային երաժշտական դպրոցը ձևավորեց և կլասիկ երաժշտության հիմքը դրեց հանճարեղ Կոմիտասը (1869—1935): Իր ստեղծագործության համար որպես նյութ վերցնելով ժողովրդական երգն ու երաժշտությունը, Կոմիտասն ստեղծեց խորասլան ժողովրդական, գեղարվեստական ներգործության մեծ ուժով և հուզական հագեցվածությամբ աչքի ընկնող ունիվերսալական գործեր: Գողտրիկ մեներգերում և ծավալուն խմբական ստեղծագործություններում նա գեղարվեստական խորը ընդհանրացումներով վերստեղծեց հայ աշխատական խորը ընդհանրացումներով վերստեղծեց հայ աշխատավոր գյուղացիության հոգեկան ներքնաշխարհը պատկերող ցայտուն կերպարներ, գեղարվեստագետի նուրբ վրձինով պատկերեց մարդկային բազմազան ապրումների մի աշխարհ սիրտ զգացմունքների տարբեր նրբերանգներից մինչև սոցիալական անարդարությունն արտահայտող հուզական պոսթիվումներ: Իր ստեղծագործությունների խորությամբն ու ինքնատիպությամբ Կոմիտասը հասավ շնորհիվ այն քանի, որ նա վարպետորեն կիրառեց ժողովրդական երաժշտությանն առավելապես հարադատ գեղարվեստական արտահայտության

միջոցներ, որոնք նպաստեցին ազգային ոճի մշակմանն ու վերջնական ձևավորմանը:

Կոմիտասի գործունեությունն ընթացավ հայ հասարակության ռեակցիոն խավերի ուժեղ դիմադրության և նրանց դեմ տարվող մշտական պայքարի միջոցով: Դեռևս Կարա-Մուրզայի առաջադիմական գործունեությունը խստորեն դիմադրում էին խավարամիտ կղերականությունը և հասարակության այլ հետադեմ տարրերը, որոնք համառ կերպով հանդես եկան նաև Կոմիտասի գործունեության ժամանակ: Կոմիտասն ստիպված էր պայքարել ոչ միայն այդ տարրերի, այլև հայկական ազգային երաժշտության գոյությունը ժխտող կոսմոպոլիտների դեմ: Ծավալված այդ պայքարում Կոմիտասը լիակատար հաղթանակ տարավ թե՛ իր ստեղծագործությամբ և թե՛ իր երաժշտական-հրապարակախոսական փայլուն ելույթներով:

Կոմիտասի գործունեությունը նշանավորվեց նաև նրանով, որ նա հայկական երաժշտությունը դուրս բերեց նեղ ազգային սահմաններից և ցուցադրեց եվրոպական մի շարք երկրներում՝ ամենուրեք ապահովելով նրա ճանաչումը:

Հայկական երաժշտական արվեստի զարգացման բազմաթիվ և բազմազան հարցեր լուծելով հանդերձ, Կոմիտասը շկարողացավ ընդգրկել երաժշտական ստեղծագործության բոլոր ասպարեղները: Մի կողմից Հայաստանում երաժշտական թատրոնի և սիմֆոնիկ նվագախմբի բացակայությունը, մյուս կողմից Կոմիտասի ստեղծագործական աշխատանքի աննրպաստ պայմաններն ու տրագիկ ընդհատված կյանքը հնարավորություն չստացան նրան լուծել սիմֆոնիկ և օպերային ստեղծագործության հարցերը, որոնք նա ծրագրել էր: Կոմիտասի մի քանի խոշոր գործեր մնացին թերավարտ, դրանց հետ միասին ավարտված գործերի մի զգալի մասն էլ հետագայում անհետ կորավ:

Հայկական կլասիկ երաժշտության մեջ սիմֆոնիկ ստեղծագործության բնագավառը հիմնադրեց և զարգացրեց Ալեքսանդր Սպենդիարյանը (1871—1928): Հատկապես մեծ է

Իրա դերը ռուսական առաջավոր երաժշտական կուլտուրայի ռեալիստական տրադիցիաները հայկական երաժշտության մեջ արմատավորելու գործում: Լինելով Ռիմսկի-Կորսակովի տաղանդավոր աշակերտն ու հետևողը, Սպենդիարյանը հայկական երաժշտության մեջ անմիջականորեն կիրառեց ռուսական կլասիկ երաժշտության և հատկապես «Հլոր խմբակի» ստեղծագործական սկզբունքները. նա հիմք դրեց ծրագրային սիմֆոնիզմին, լուծեց ժողովրդական երաժշտության, երգի սիմֆոնիզացիայի հարցը, սիմֆոնիզմի միջոցներով տվեց ռեալիստական, գաղափարական, խոշոր մասշտաբի ստեղծագործություններ: Իր սիմֆոնիկ ստեղծագործություններից բացի, Սպենդիարյանը կերտեց նաև հերոսական «Ալմաստ» օպերան, որը սովետական երաժշտության մեջ նշանակալից ներդրում հանդիսացավ:

XX դարի առաջին տասնամյակներում հանդես եկած՝ Կոմիտասի և Սպենդիարյանի ստեղծագործություններն իրենց ժողովրդայնությամբ, գաղափարայնությամբ, բարձր վարպետությամբ դարձան հայկական կլասիկ երաժշտության հիմնական ֆոնդը և խոշոր դեր խաղացին երաժշտական արվեստի հետագա զարգացման գործում:

Կոմիտասի և Սպենդիարյանի հետ գրեթե միաժամանակ հայ երաժշտության մեջ հանդես եկան Ռոմանոս Մելիքյանը (1883—1935) և Արմեն Տիգրանյանը, որոնցից առաջինը բարձր կատարելության հասավ հատկապես երգի և զեղարվեստական ուսմանի ասպարեզում, իսկ երկրորդն իր ուժերը նվիրեց հայկական աղջային ժողովրդական օպերայի ստեղծման գործին:

Հայկական իրականության մեջ օպերային ժանրի զարգացման անհրաժեշտությունը վաղուց էր հաստատացել: Ծիշա է, այդ ասպարեզում գոյություն ունեին ոչ միայն Տիգրան Զուխաշյանի (1836—1898) օպերաները¹, այլև մի շարք հե-

¹ Տ. Զուխաշյանը գրել է «Կոմա-հայրենասիրտկան Վերջի Բ» և հեքիաթային «Հիմեբե» օպերաները, «Լերլերիջի», «Արիֆ», (բուս. Ն. Գաղոյի «Մեհիգոր» կոմիկայի), «Բյուսա-բեհիս» և «Ջեյրեկիկ» կոմիկական օպերաները:



Ա. Տիգրանյանը երիտասարդ հասակում

դինականների անավարտ գործեր, սակայն ազգային-ժողովրդական ոճի հարցը դեռևս չէր լուծվել: Կոմիտասի խորապես ժողովրդական ստեղծագործությունների կողքին դեռևս շունկինք նման ոճի լիարժեք օպերային ստեղծագործություն: Ուստի Ա. Տիգրանյանի վաստակն այդ գործում առանձնապես կարևոր և դնահատեղի էր:

Օպերային դրամատուրգիային տիրապետելու իմաստով նրա համար օրինակ հանդիսացան ռուսական և արևմտեվրոպական կլասիկ օպերային ստեղծագործությունները, որոնք լայն մասշտաբով բեմադրվում էին Քիֆլիսում, իսկ ազգային ոճի մշակման գործում կարևոր նշանակություն ունեցան Կարա-Մուրզայի և Կոմիտասի վսկալ ստեղծագործությունները, որոնք այդ տեսակետից հետագա զարգացման բուրր սաղմերն ու հնարավորություններն ունեին:

Այսպիսով XIX դարի վերջին և XX դարի առաջին տասնամյակներում հայկական բազմադարյան հարուստ ժողովրդական ստեղծագործության լավագույն նմուշները վեր էին հանվել և ստեղծագործորեն վերամշակվելով դարձել էին սլոճային ստեղծագործության հիմնական նյութ: Անհրաժեշտ շարժով յուրացվել էր ռուսական և արևմտաեվրոպական կլասիկ երաժշտության փորձը և ստեղծվել էր սլոճային ստեղծագործության բավականաչափ բարձր մակարդակ: Առանձնապես կարևոր նշանակություն ունեցավ ռուսական կլասիկ երաժշտության ստեղծագործական սկզբունքների՝ ժողովրդականության և ռեալիզմի կիրառումը: Այս բոլորի հիման վրա մշակվել էր հայկական ազգային ոճը երաժշտական ստեղծագործության տարբեր բնագավառներում, ստեղծվել էին բարձրարվեստ ժողովրդական ստեղծագործություններ և ձևավորվել էր հայկական կլասիկ երաժշտությունը:



**ԱՐՄԵՆ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ
ՍՏԵՂՄԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈՒՂԸ**

Արմեն Տիգրանյանը ծնվել է 1879 թվականի գեկտեմբերի 14-ին (26-ին) Ալեքսանդրապոլում (այժմ Լենինական)։ Նրա երաժշտական հակումների ձևավորման մեջ կարևոր նշանակություն է ունեցել հայրենի քաղաքի յուրահատուկ միջավայրը։

Շիրակի գավառը հնուց հայտնի է եղել ժողովրդական և զուսանական երաժշտության կենդանի տրադիցիաներով։ Որպես հայկական ժողովրդական երգաստեղծության կարևոր օջախներից մեկը, Շիրակը պահպանել ու զարգացրել էր ժողովրդական երգի բազմաթիվ նմուշներ, որոնցից լավագույնները գրի են առնվել Ն. Տիգրանյանի, Կոմիտասի, Ա. Բրուսյանի և հետագայում Սպ. Մելիքյանի ու Ան. Տեր-Ղևոնդյանի կողմից։ Սովետական կարգերում վերածնված Լենինականն այսօր էլ հանդիսանում է ժողովրդական երաժշտության և ինքնազործ արվեստի աչքի ընկնող կենտրոններից մեկը։

Շիրակի կենտրոնը՝ Գյումրին (Ալեքսանդրապոլի հին անունը) ցարական Ռուսաստանի պայմաններում տիպիկ ծայրամասային քաղաք էր, փոքրաթիվ ազգաբնակչությամբ, գրեթե առանց արդյունաբերության (բայց զարգացած արհեստագործությամբ), նեղ ու սահմանափակ գավառական կյանքով։ Չնայած դրան, նա իրավամբ հանդիսացել է զուսանների քաղաք։ Հայ զուսանների մի քանի սերունդներ այստեղ են մշակել ու պահպանել զուսանական արվեստի տրադիցիաները,

աշխտեղ են ապրել ու ստեղծագործել հայ նշանավոր գուսաններ Ջիվանին, Ջամալին, Շերամը և շատ ուրիշներ:

Քրեկնց երգերով ու նվագով նրանք (գուսանները) զարդարում էին նշանագրության և հարսանյաց հանդեսները, ժողովրդրդական տոնախմբությունները: Տեղական և այլ քաղաքների գուսան-երգիչները սլարերհարար հավաքվում էին, որպեսզի քաղմաթիվ ունկնդիրների ներկայությամբ մրցեն միմյանց հետ: Այսպիսով քաղաքում ստեղծվել էր յուրահատուկ գուսանական կուլտուրա իր տրագիցիաներով, ավանդություններով և տարբեր ուղղություններով¹:

XIX դարի վերջին քառորդում և XX դարասկզբում Ալեքսանդրապոլում ծավալվեց նշանավոր գուսաններ Ջիվանու (1848—1909) և Շերամի (1857—1938) գործունեությունը: Նրանք զգալի չափով հարստացրին ու զարգացրին հայկական գուսանական արվեստը: Գրանցից առաջինի համար բնորոշ էր սիրային լիրիկայի հետ մեկտեղ կյանքի սոցիալական էության քմբանումը և սոցիալական հակասությունների փիլիսոփայական ընկալումը, թեմատիկայի ակտուալությունն ու քաղաքական սրությունը, բարոյագիտական-խրատական սկզբունքը և խոհականությունը: Այս բոլորը կանխորոշել էին Ջիվանու երաժշտության բնորոշ առանձնահատկությունները: Սայաթ-Նովայի երգային լիրիկային Ջիվանին հակադրեց զեկլամացիոն ոճը, արտահայտիչ սեչիտատիվը: Նրա հորինած երգերի մի զգալի մասին հատուկ են առնականությունն ու էպիկական շունչը:

Այլ է գուսան Շերամի ոճը: Շերամը սիրտ և զեղեցկության երգիչ է: Թեև նա նույնպես իր երգերում անդրադարձել է քաղաքական թեմատիկային, սակայն նրա ստեղծագործության հիմնական մոտիվը սերն է, կյանքի վայելքը: Նրա երաժշտությունը բնորոշ է նուրբ լիրիզմը, հուզական հազեցվածությունն ու զեղեցիկ մեկոդիան: Շերամի թե՛ բանաստեղծությունը և թե՛

¹ Аветик Исаакян, Памяти народного поэта-певца (к 10-летию со дня смерти Шерама). „Коммунист“, Ереван, 1948. № 156.

երաժշտությունը մի միջին տեղ է բռնում հայկական գուսանական և բուն ժողովրդական (քաղաքային և գյուղական) ստեղծագործության միջև:

Զիվանու և Շերամի երաժշտությունը, որ ճանաչում էր գտել ամբողջ Անդրկովկասում, հանգիսանում էր Ալեքսանդրապոլի երաժշտական կյանքի մի կարևոր մասը:

Ալեքսանդրապոլում ծնվել, ապրել և գործել է հայկական սովետական կոմպոզիտորներից ավագագույնը՝ Նիկողայոս Տիգրանյանը (1856—1951): Նա եղել է հայկական երաժշտության զարգացման տարբեր էտապների մասնակիցը: Հայկական իրականության մեջ նա առաջիններից մեկն էր, որ ձայնագրեց ու մշակեց ժողովրդական երգն ու երաժշտությունը, ստեղծեց ազգային-ժողովրդական ոճով դաշնամուսիկային գրականություն՝ հարազատորեն անդրադարձնելով Շիրակի ժողովրդական պարեղանակների կատարողական ոճը: Իր ստեղծագործությամբ և երաժշտական-հասարակական գործունեությամբ ն. Տիգրանյանը նշանակալից տեղ է գրավել նաև հայրենի քաղաքում¹:

Ալեքսանդրապոլի քաղաքային երաժշտական կենցաղը բնորոշ էր նաև զարգացման զգալի բարձրության հասած ժողովրդական գործիքային երաժշտությամբ ու վարպետ կատարողներով: Չնայած ցարական իշխանության տեղական օրդանների կիրառած ազգային սահմանափակումներին և հարուցած արգելքներին, Ալեքսանդրապոլի ժողովրդական ակումբում կամ զպրոցական դահլիճում տեղի էին ունենում ինքնագործ թատերական ներկայացումներ և համերգներ, որոնք ներդրվում էին շատ սիրողներ և աշխուժություն էին մտցնում դավառական քաղաքի կյանքում:

Վերջապես երբեմն Ալեքսանդրապոլ էր գալիս նաև Կարա-Մուրզան, որն իր կազմակերպած երգեցիկ խմբերի հա-

¹ Նիկողայոս և Արմեն Տիգրանյանները կազմած են հեռավոր ազգակցական կապերով: Տիգրանյանների առժեռ ավել է աչքի ընկնող մի շարք երաժիշտներ:

մերդներով մեծ ապավորութիւն էր գործում տեղի հասարակութեան վրա:

Արմեն Տիգրանյանի սկզբնական երաժշտական տպավորութիւնները կապված են եղել Ալեքսանդրապոլի վերը նկարագրված երաժշտական կյանքի հետ: Մանկութեան տարիներին նրա երաժշտական ընդունակութիւնների ձևավորման գործում զգալի դեր են կատարել նաև ծնողները:

Ա. Տիգրանյանի հայրը՝ Տիգրան Տիգրանյանը դրազվում էր ժամադործութեամբ, բայց բազմակողմանի ընդունակութիւնների տեր և քանիմաց մարդ էր: Նա ժամանակին բավարար կրթութիւն էր ստացել և երկար տարիներ ճանապարհորդելով, մոտիկից ծանոթացել էր ռուսական առաջավոր կուլտուրայի հետ: Հայրենի քաղաքում, վանքին կից դպրոցի հոգաբարձուներից մեկը լինելով, նա մեծ ջանքեր էր գործադրում դպրոցի աշխարհականացման համար: Հակառակ հողերականութեան դիմադրութեանը, նա նախաձեռնեց և հաջողացրեց տեղի դպրոցում աշխատանքի հրավիրել հայ խոշոր գեմոկրատ գրող Ղազարոս Աղայանին, որը ժամանակի աշքի ընկնող կուլտուրական գործիչներից և առաջնակարգ մանկավարժներից մեկն էր: Տիգրանյանի հայրը միաժամանակ գեթասանական հակամենք ուներ և գործոն մասնակցութիւն էր ցույց տալիս քաղաքի սիրողների գրամտտիկական խմբի ներկայացումների կազմակերպմանը:

Ա. Տիգրանյանի մայրը՝ Տիրուն Տիգրանյանը, նույնպես քաղմակողմանի ընդունակութիւններով օժտված անձնավորութիւն էր: Երաժշտական ընդունակութիւններ և լավ ձայն ունենալով, նա հաճախ երգում էր, գրազվում էր նաև բանաստեղծութեամբ:

Ա. Տիգրանյանի ծնողները գրականութեան, արվեստի և երաժշտութեան սիրահարներ էին: Նրանք շարունակ իրենց տուն էին հրավիրում գրողներ, բանաստեղծներ և երաժիշտներ ու կազմակերպում էին գրական-երաժշտական երեկոներ: Բե՛ ալս երեկոները և թե՛ շնորհալի ծնողների գեղարվեստա-

կան դաստիարակութիւնն ասպարհ կամպոզիտորի մեջ սեր արթնացրին զեպի գրականութիւնն ու երաժշտութիւնը:

Ա. Տիգրանյանի նախնական երաժշտական կրթութիւնն սկսվել է զեռ քաղաքի շորերգասցան դպրոցում սովորելու տարիներին՝ դպրոցին կից փողային նվագախմբում: Այստեղ նա սովորում է ֆլեյտա նվագել և կարճ ժամանակում բավական վարժվելով՝ ժողովրդական երգերի իմպրովիզացիաներ է կատարում: Նա առանց դժվարութեան վերաբարտւում էր ժողովրդական և գուսանական բոլոր այն երգերն ու պարեղանակները, որոնք լսում էր առօրյա կենցաղում: Պատանի Տիգրանյանի մեջ աստիճանաբար ամրապնդվում էր երաժշտ դասնալու բուռն ցանկութիւնը:

1894 թվականին Տիգրանյանների ընտանիքը տեղափոխվում է Թբիլիսի, Անդրկովկասի այն ժամանակվա խոշոր կուլտուրական, ինչպես և երաժշտական կենտրոնը: Այնտեղ գեներ 1851 թվականից հիմնվել էր օպերային մշտական թատրոն, 1883 թվականից՝ Ռուսական կայսերական երաժշտական ընկերութեան Թբիլիսիի բաժանմունքը և ասպ նաև երաժշտական ուսումնարանը, որոնք լայն աշխատանք էին ծավալել ուսանական և համաշխարհային կլասիկ երաժշտական ստեղծագործութիւնների պրոպագանդայի, ինչպես և երաժշտական կադրերի դաստիարակութեան ուղղութեամբ: Երաժշտական ընկերութեան բաժանմունքի և երաժշտական ուսումնարանի շուրջն էին համախմբվել ուսանական և տեղական երաժշտական գործիչներ, որոնք երաժշտական-հասարակական և կադրերի պատրաստման աշխատանքից բացի, զբաղվում էին նաև Անդրկովկասյան ժողովուրդների երաժշտութեան ուսումնասիրութեամբ:

Թբիլիսին միաժամանակ հանդիսանում էր հայկական կուլտուրայի կենտրոններից մեկը: Այստեղ կար մեծաքանակ հայ ազգաբնակչութիւն, կենտրոնացված էր հայկական առևտրական բուրժուազիայի մի խոշոր հասակած, գործում էին հայ առաջավոր ինտելիգենցիայի բազմաթիւ ներկայացուցիչներ, հրատարակվում էին բազմաթիւ պարբերականներ, որոնք

հանդիսանում էին հայ հասարակության տարբեր խավերի զաղափարախոսության արտահայտիչները: Գեռևս 60-ական թվականներից գոյություն ունեւր նաև հայ դրամատիկական թատրոնը: Թրիլիսիում էին ծավալել իրենց գործունեությունը մի շարք ականավոր հայ գրողներ, նկարիչներ և երաժիշտներ: Պետերբուրգի կոնսերվատորիան ավարտելուց հետո այստեղ էր հիմնվել կոմպոզիտոր Մ. Նկմալյանը, համերգային լայն գործունեություն էր ծավալել Կարա-Մուրզան, իսկ ավելի ուշ իր համերգներով և դասախոսություններով հանդես եկավ նաև Կոմիտասը:

Թրիլիսի տեղափոխվելով, Արմեն Տիգրանյանն սկզբնական շրջանում հնարավորություն չունեցավ ձեռնարկել սիստեմատիկ երաժշտական կրթություն ստանալու գործը: Ընտանիքի նյութական ծանր դրությունն ստիպեց նրան աշխատանքի մտնել մի առևտրական տան մեջ, ուր նա նվաստացուցիչ պայմաններում աշխատում էր որպես գործակատար:

1896 թվականին նրան հաջողվում է մտնել դիմնազիա՝ շարունակելու ընդհանուր ուսումը, իսկ երկու տարի անց ընդունվում է երաժշտական ուսումնարանի Ֆլելյուայի դասարանը: Ուսումնարանում անցկացրած տարիներին նա առանձին հետաքրքրություն է ցուցաբերում դեպի երաժշտական-տեսական առարկաները, սովորելով ռուս կոմպոզիտոր և էտնոգրաֆ Ն. Կլենովսկու մոտ: Հետագայում ուսումնարանում ձեռք բերած իր գիտելիքները նա լրացնում է մասնավոր կերպով՝ հարմոնիայի և կոմպոզիցիայի տեսության դասեր վերցնելով կոմպոզիտոր Մ. Նկմալյանից:

Ա. Տիգրանյանի երաժշտական դաստիարակության գործում կարևոր նշանակություն ունեցավ օպերային թատրոնը, որի մշտական հաճախորդն էր նա: Թրիլիսիի օպերային թատրոնն այդ տարիներին հարստ առաջնորդությամբ ունեւր Իրար ետևից բեմադրվում էին ռուսական և արևմտաեվրոպական կոմպոզիտորների օպերային ստեղծագործության լավագույն նմուշները: Ռուսաստանի կենտրոնական քաղաքներից և արտասահմանից գաստրոլներ էին գալիս նշանավոր օպերային

արտիստներ: Առանձնապես խորը տպավորություն էին թողնում հռչակավոր առաջ երգիչ Շալվապինը, իսալացի Բրողջին և ուրիշները: Հայ արտիստական ուժերից իր վրդալ և բնական բարձր արվեստով աչքի էր ընկնում Մոսկվայում, Պետերբուրգում և այլ քաղաքներում անուն վաստակած օպերային արտիստուհի Նադեժդա Պապայանը: Հայկական մամուլում լայնորեն լուսաբանվում էր Քրիլիսիի օպերային կյանքը:

Ա. Տիգրանյանին առանձնապես զբաղվում էին Չայկովսկու և Վերդիի օպերային անմահ ստեղծագործությունները: Այդ տարիներին Քրիլիսիի օպերային թատրոնի ղեկավարում տեղ էին դրել Չայկովսկու 7 և Վերդիի 18 օպերաները: Իր լսած հենց այդ օպերաների ազդեցությամբ դեռևս երիտասարդ երաժշտի մեջ ամրաստվում է հայկական օպերա գրելու փափագը:

1902 թվականին Ա. Տիգրանյանը, ավարտելով երաժշտական ուսումնարանը, վերադառնում է հայրենի քաղաքը, նպատակ ունենալով աշխուժացնել և կազմակերպված հունի մեջ դնել տեղի երաժշտական կյանքը, բարձրացնել նրա մակարդակը: Այդ ժամանակից էլ սկսվում է Տիգրանյանի ինքնուրույն ստեղծագործական և երաժշտական-հասարակական գործունեությունը:

Այդ տարիներին Ալեքսանդրապոլի գեղարվեստական-կուլտուրական կյանքը բնորոշ էր նրանով, որ հարուստ ժողովրդական ստեղծագործության և ինքնագործունեության հետ միասին գոյություն ուներ հայկական կիսապրոֆեսիոնալ դրամատիկական խումբ, որը պարբերաբար ներկայացումներ էր կազմակերպում, աշխատում էին նաև առաջին և ուկրաինական սիրողների դրամատիկական խմբեր: Բացի այդ, հաճախակի դաստրոլների էին գալիս նշանավոր հայ արտիստները: Համեմատաբար ետ էր մնում երաժշտական բնագավառը, որովհետև մշտական գործող միավորներ չկային: Պրոֆեսիոնալ կատարողների համերգներն այստեղ խիստ բացառիկ երևույթներ էին:

Քաղաքի երաժշտական կյանքի այդպիսի վիճակը թե-

ՎՅՈՒՄՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԿԻՒՐԱԿԻ, ՅՈՒՆԻՍԻ 1-ԻՆ 1903 Թ.

ՎՅՈՒՄՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԿՅՈՒՄՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ

ՎՅՈՒՄՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ա. ՏԻԳՐԱՆԵԱՆԻ

ԿԸՏՐՈՒ

Հ Ա Մ Ե Ր Գ

ԿՅՈՒՄՆԱԿԱՆ Կ. Ա. ՏԻԳՐԱՆԵԱՆԸ

ԾՐԱԳԻՐ

I.

- 1. Այս քերական
- 2. Այս քերականի հոգի
- 3. Այս քերականի հոգի
- 4. Այս քերականի հոգի
- 5. Այս քերականի հոգի

II.

- 1. Այս քերականի հոգի
- 2. Այս քերականի հոգի
- 3. Այս քերականի հոգի
- 4. Այս քերականի հոգի
- 5. Այս քերականի հոգի

III.

ՎՅՈՒՄՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ

ԿՅՈՒՄՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ

IV.

- 1. Այս քերականի հոգի
- 2. Այս քերականի հոգի
- 3. Այս քերականի հոգի
- 4. Այս քերականի հոգի
- 5. Այս քերականի հոգի

ՎՅՈՒՄՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ

ԿՅՈՒՄՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ

ԿՅՈՒՄՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ

ԿՅՈՒՄՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ

Ա. Տիգրանյանի համերգի փիլիսոփայություն (1903 թ.):

լազրում է Տիգրանյանին շահմանափակվել միայն ստեղծագործական աշխատանքով: Իր նախորդներ Կարա-Մուրզայի, Եկմալյանի և Կոմիտասի նման Տիգրանյանն ևս ծավալում է երաժշտական-հասարակական բազմակողմանի գործունեություն: Նա դպրոցներում երաժշտության դասեր է տալիս, կազմակերպում է սիրողների երգեցիկ խումբ, ելույթներ է ունենում Ալեքսանդրապոլում և այլ քաղաքներում:

Համերգների կազմակերպումը և այդ միջոցով դավառական քաղաքների երաժշտական կյանքի աշխուժացումը մեծ դժվարությունների հետ էր կապված: Ցարական ցենզուրայի հարուցած խոչընդոտներից բացի, անհրաժեշտ էր հաղթահարել նյութական բազայի բացակայության հետևանքով առաջացած կազմակերպչական դժվարությունները և ցարական շինովնիկների, խավարամիտ կղերականության և պահպանողական այլ տարրերի դիմադրությունը: Անհրաժեշտ էր գործին նվիրվածություն և մեծ տոկոսություն, որպեսզի հաղթահարվեն այդ բոլոր դժվարությունները:

1902 թվականի հոկտեմբերի 20-ին Ա. Տիգրանյանին հաջողվում է տալ իր կազմակերպած երգեցիկ խմբի անդրանիկ համերգը: Ծրագրի մեջ տեղ են գտնում ինչպես հայկական, այնպես էլ սուսական և ուկրաինական ժողովրդական երգեր: Հայկական ժողովրդական երգերը ներկայացվում են Կարա-Մուրզայի և իր մշակումներով:

Հետագա տարիներին Ա. Տիգրանյանը համերգներ է կազմակերպում Երևանում, Կարսում, Քաբլում և այլ տեղերում: Հայկական մամուլը նրա համերգներին դրական գնահատական է տալիս և նրան համարում է Կարա-Մուրզայի համերգային գործունեության արժանավոր շարունակող: Համերգային գործունեությունը Տիգրանյանին հնարավորություն է տալիս մոտիկից շփվել կատարողների և ունկնդիր հասարակության լայն խավերի հետ, հարազատ մնալ ժողովրդական երաժշտության արագիցիաներին և ստեղծագործությամբ արձագանքել ժողովրդի լայն զանգվածների պահանջներին:

Կարա-Մուրզայի և Կոմիտասի նման, Ա. Տիգրանյանն ևս

իր ստեղծագործական գործունեությունն սկսում է ժողովրդական երգերի մշակումներից և դրանց սճով գրված երգերից ու ոտմանաներից: Նրա պահպանված տետրերում կան հայկական ժողովրդական երգերի արժեքավոր նմուշների ձայնագրումներ և մշակման էսքիզներ, որոնք վկայում են այդ ուղղությամբ նրա կատարած աշխատանքի մասին: Հայկական դյուզական և քաղաքային ժողովրդական երգի ոճական տարբեր տեսակների լայն ընկալումը բնորոշ դիժ է դառնում Ա. Տիգրանյանի ստեղծագործական գործունեության համար նրա ողջ կյանքի ընթացքում: Այդ երգերի ոճական առանձնահատկությունների մեջ խորը թափանցումը և դրանց ստեղծագործական յուրացումը ապահովում են նրա ստեղծագործության ինտոնացիոն ակունքների հարստությունն ու բազմազանությունը:

1905 թ. ուռաական ուսույցիայի արձագանքները հասնում են նաև Հայաստան: Ռևույուցիոն սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ղեկավարությամբ բռնկվում են գործադուլներ արդյունաբերության, երկաթգծի և այլ ձևոնարկությունների բանվորների ու ծառայողների շրջանում: Ռևույուցիոն շարժումն ընդգրկում է նաև դյուզացիական մաստաներին: Մավալված ուսույցիոն շարժման վերելքն ստիպում է ցարական կառավարությանը թույլատրել 1903 թվականին փակված հայկական դպրոցների վերաբացումը:

Վերաբացվում են նաև Ալեքսանդրապոլի դպրոցները, որոնցից մեկում աշխատանքի է հրավիրվում Ա. Տիգրանյանը: Առաջին օրերից սկսած նա վճռականորեն դեմ է դուրս գալիս դպրոցում երգվող եկեղեցական և ազգայնական երգերին: Գրանց փոխարեն նա դասարանական և խմբական երգեցողության նյութն ամբողջապես վերցնում է ժողովրդական ստեղծագործության լավագույն նմուշներից, պրոպագանդա է անում ժողովրդական երգը: Բացի այդ, 1905 թվականին նա Ալեքսանդրապոլի կայսրանի դեպոյի բանվորներից և ծառայողներից կազմակերպում է երգեցիկ խումբ, սովորեցնելով ժողովրդական և ուսույցիոն երգեր:

Ա. Տիգրանյանի ինչպես այս, նույնպես և հետագա տա-

ՄԷԼՔԱՆԴՐՈՊՈԼՅ

Երկուշաբթի 4-րդ 1912 թ.

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԲՈՒԿՍԵՐԱԿԱՆ ՏԵՄԸ

ՈՒՆՔԱՆԴՐՈՊՈԼՅԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

Մ Ա Ն Ո Ւ Ծ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ



ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈԼՅ

Երկուշաբթի 4-րդ 1912 թ.

ՎԵՐԳՐԱԿԱՆ ԲՈՒԿՍԵՐԱԿԱՆ ՏԵՄԸ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

Մ Ա Ն Ո Ւ Ծ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆԻ

րինների ստեղծագործութեան մեջ զգալի տեղ է դրավում սիրային լիրիկան: Այդ շրջանի հայկական բանաստեղծութեան համար բնորոշ լիրիկական մոտիվները, որոնք իրենց ցայտուն արտահայտությունն են գտել Ավ. Իսահակյանի և Հ. Հովհաննիսյանի ստեղծագործություններում, համակում են նաև Ա. Տիգրանյանին: Նա իր երգերը և ոտմանաները հորինում է հենց այս վարպետների բանաստեղծությունների վրա: Տիգրանյանի երգերը, զրված լինելով ժողովրդական երաժշտության լեզվով, ունենալով արտահայտիչ և մատչելի մելոդիաներ, մեծ արագությամբ տարածվում և մասսայականանում են: Հատկապես մեծ ժողովրդականություն են ձեռք բերում հայ խոշորագույն քնարերգու Ավ. Իսահակյանի խոսքերով զրված՝ «Հովերն առան սար ու դարեր», «Ախ իմ ճամբեն» և «Սև աշերեն շատ վախեցիր» երգերը:

Ա. Տիգրանյանի ստեղծագործության համար առավել կարևոր նշանակություն է ունենում ժողովրդական մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի պոեզիան: Թումանյանին բնորոշ՝ ժողովրդի կյանքի ու կենցաղի, հոգևկան աշխարհի գեղարվեստական խոր բնդգրկումը, ժողովրդական բանահյուսության ձևերի վարպետորեն օգտագործումը, նրա ժողովրդայնությունն ու ռեալիզմը շափազանց հարազատ էին Ա. Տիգրանյանի ստեղծագործական նկարագրին: Տիգրանյանին առանձնապես զրավում է Թումանյանի անմահ «Անուշ»-ը:

Հայկական ժողովրդական երաժշտության դձով ազգային օպերա ստեղծելու գաղափարը վաղուց էր հուզում Ա. Տիգրանյանին: Դեռևս ուսանողական տարիներից սկսած այդ նպատակի համար նա մի շարք սյուժեներ է փորձում, բայց վերջնականապես կանգ է առնում «Անուշ»-ի վրա: 1908 թվականից նա ձեռնարկում է իր այդ նպատակի իրագործմանը: Նա ինքն է կազմում օպերայի լիրիկոսն և ըստ արժանվույն գնահատելով պոեմի գաղափարական խորությունը, ձևի կոտորելությունն ու ստանավորի երաժշտականությունը, Թումանյանի տեքստը թողնում է անփոփոխ՝ բեմական գործողությանը:

2013 APR 20 11 41 AM
ST. AUGUSTINE
FLORIDA
U.S. AIR MAIL

հարմարեցնելու նպատակով որոշ վերադասավորում և հավելումներ կատարելով:

Այդ տարիներին իր կատարած աշխատանքների մասին Ա. Տիգրանյանը հետադաշում գրում է. «Հովհաննես Քոմանյանի «Անուշ»-ի թեման ինձ ամբողջապես հափշտակեց: Չխոսելով պոեմի բարձր ղեզարվեստականության մասին, նրա կառուցվածքը, նրա հիանալի նախերգանքը, փերիների վիշտը՝ սիրահարների դժբախտ սիրո մասին, Սարոյի սերենագան (լուսարացին) և այլն, — այս բոլորը պահանջում էր համապատասխան երաժշտական ձևեր՝ հիասքանչ այդ պոեմը օպերայի վերածելու համար»¹:

Մի քանի տարվա քրտնաշան ստեղծագործական աշխատանքը տալիս է իր ցանկալի արդյունքները: Ինչպես երևում է Թ. Մելիքյանի՝ Տիգրանյանին դրած նամակից², օպերայի ստեղծման աշխատանքն այնքան հաջող էր ընթացել, որ դեռևս 1910 թ. Տիգրանյանը մտածում էր նրա առանձին պատկերները Թբիլիսիում բեմադրելու մասին:

«Անուշ» օպերան առաջին անգամ բեմադրվել է 1912 թ. օգոստոսի 4-ին (17-ին) Ալեքսանդրապոլում³: Երաժշտազևտ Ա. Ծահվերդյանը ծանոթանալով այդ բեմադրության պատմությանը, այն նկարագրում է հետևյալ կերպ.

¹ А. Тигранян, Несколько слов об опере „Ануш“, в сборнике „Гос. театр оперы и балета Армении им. А. А. Спендиарова“, изд. Искусство, Москва, 1939, стр. 63.

² Թ. Մելիքյանի այս նամակը գտնվում է Ա. Տիգրանյանի որդու, կոմպոզիտոր Վ. Տիգրանյանի մոտ:

³ Գրանից առաջ էլ տարբեր առիթներով կատարվել են օպերայի առանձին հատվածները: Այսպես, հայանի է, որ 1908 թ. «Ազգայուր-Տարագ» ամսագրի 25-ամյա հոբելյանի առթիվ Թբիլիսիում բեմադրվել է «Անուշ»-ի երկրորդ գործողության առաջին պատկերը (Համբարձման տոներ): 1911 թ. Ալեքսանդրապոլի օրիորդաց միջնակարգ դպրոցում, որտեղ պաշտոնավարում էր Ա. Տիգրանյանը, աշակերտական երկուսյթներից մեկում կատարվել են օպերայից երկու պատկեր: Հետաքրքրությունից դուրկ չէ նշել, որ Սարոյի սերենագան («Ազգի անստոված») բեմի հետևից կատարել է ինքը հեղինակը:



Սարս - Շարա Տալլան (1912 թ. Ալեքսանդրապոլ)։



«1912 թ. Ալեքսանդրապոլում, «Անուշ» օպերան առաջին անգամ բեմադրվեց Ա. Տիգրանյանի ստեղծած և սովորեցրած սիրողների խմբակի ուժերով: Հիբրավի, կլասիկական օպերան ծնվեց ցնցոտիների մեջ: Բավական է ասել, որ նվագախումբը կազմված էր միայն 12 երաժշտից: Կատարողների մեջ, թե՛ բեմում և թե՛ մենակատարների մեջ, զերակշռում էր դարոցական հասակի երիտասարդությունը, սրը նրզում էր անկեղծ ոգևորությամբ և ջանասիրությամբ. բայց զուրկ էր անհրաժեշտ փորձասությունից և պրոֆեսիոնալ վաճաղատությունից: Ենթի անհարմարություն, միջոցների ծայրահեղ սահմանափակություն, հագուստների և դեկորների աղքատություն — ահա այսպիսի պայմաններում իրազորվեց «Անուշ»-ի առաջին բեմադրությունը: Եվ այնուամենայնիվ ներկայացումն ունեցավ անօրինակ հաջողություն: Հասարակությունը, ցրվելով, իր հետ տանում էր հիշողության մեջ տպավորված և սիրված մեյրդիաները, որոնք այնքան օրգանապես միաձուլվել էին Թումանյանի հերոսների կերպարներին: Հայկական կուլտուրական կյանքում որպես աչքի ընկնող իրազարձություն հանաչված այդ նոր ստեղծագործության համբավը տարածվեց Ալեքսանդրապոլի սահմաններից դուրս»¹:

«Անուշ»-ի այս ներկայացումը, որն իրազորվեց այդքան դժվարին պայմաններում, ունեցավ պատմական կարևոր նշանակություն: Գրանով սկիզբ դրվեց Հայաստանում օպերային արվեստի զարգացմանը: Հատկանշական է, որ այդ ներկայացման դիտավոր մասնակիցներից մեկը՝ Շարա Տալլանը², որն այն ժամանակ հանդիսանում էր Թբիլիսիի ներսիսյան դարոցի վերջին դասարանի աշակերտ և առաջին անգամ իր ուժերը փորձեց Սարոյի պատասխանատու դերում, հետագայում դարձավ հայկական սովետական օպերային թատրոնի ակտիվ կառուցողներից մեկը և որպես Սարոյի դերակատար մնաց շգերազանցված:

¹ А. Илавердян, Армен Тигранян, «Советская музыка» — «Ժողովուրդ», 1950, № 4, էջ 55—56:

² Այժմ հայկական ՄՍԹ ժողովրդական արվեստ:

Առաջին բեմադրությունից հետո «Անուշ»-ը շուտով բեմադրվում է Հայաստանի և Անդրկովկասի շատ քաղաքներում և ավաններում՝ Երևանում, Կարսում, Դիլիջանում, Աշտարակում, Էջմիածնում, Բրիլիսիում, Թելավում, Ախալքալախում, Ախալցխայում, Բաթումում, Բաքվում, Փանձակում: Փոքր բացառությամբ այս քաղաքներում ևս օպերային բեմադրության համար որևէ չափով համապատասխան պայմաններ չկային: Օրկեստրային երաժիշտների քաղաքացույցության հետևվանքով հեղինակը հաճախ ստիպված էր լինում ներկայացումները վարել դաշնամուրի նվագակցությամբ, հրդեցիկ խումբը կազմակերպվում էր սիրող-երգիչներից՝ տեղն ու տեղը, չկային հարմարավոր բեմեր և բեմական սեկվիդիտ: Չնայած այս մեկնին, հեղինակի և դերակատարների երիտասարդական եռանդի ու նվիրվածության շնորհիվ հաղթահարվում էին բոլոր դժվարությունները և ներկայացումներն ամենուրեք ընդունվում էին մեծ խանդավառությամբ:

«Անուշ»-ի ժողովրդականությունն աճում էր արագորեն: Օպերայի սրտառուշ ու դեղեցիկ մեներգերն ու խմբերգերը խորապես մուտք էին գործում ժողովրդի կենցաղի մեջ՝ վերածվելով ժողովրդական երգերի: Այս հանգամանքը ոգևորում էր հեղինակին նոր երաժշտական գործեր ստեղծելու հետ միասին, շարունակաբար վերադառնալ իր սիրած օպերային, հարջատացնել և կատարելագործել այն:

1914 թվականին բռնկվում է առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմը: Հայ ժողովրդի կյանքում սկսվում է աղետալի ժամանակաշրջան: Սուլթանական Բյուրքիայի վարած արյունոտ քաղաքականության հետևանքով տեղահան է արվում ու բնաջնջվում ավելի քան մեկ միլիոն բնակչություն: Հատկապես հետապնդվում և ոչնչացվում է հայ ինտելիգենցիան, որի բաղամաթիվ ներկայացուցիչների հետ միասին Բյուրքական բարբարոսության զոհն է դառնում նաև մեծատաղանդ Կոմիտասը:

Պատմական այդ իրադրության մեջ հայկական կուլտուրայի առաջավոր գործիչները հանդես եկան պատերազմի դեմ,



Անուշ - Տիկին Աստղիկ (1912 թ. Ալեքսանդրապոլ)

ժողովուրդների միջև եղբայրական դաշինքի և փոխգործակցության գաղափարների պրոպագանդայով: Նրանք գիտակցում էին, որ հայ ժողովրդի փրկության միակ հույսը ռուս ժողովրդի օգնությունն է:

Իմպերիալիստական պատերազմի ժամանակաշրջանի ծանր պայմաններում հայ գրականության, թատրոնի, կերպարվեստի, ինչպես նաև երաժշտության զարգացման բնագավառում առանձնապես կարևոր նշանակություն ունեցան հայ-ռուսական կուլտուրական կապերի հետագա խորացումն ու ամրապնդումը: Ռուս նշանավոր գրական գործիչների կատարած աշխատանքը հայ գրականության ուսումնասիրության ու պոպուլյարիզացիայի ուղղությամբ (Յու. Վեսելովսկի, Վ. Բրյուսով, Մ. Գորկի), ռուսական կլասիկ գրականությունից հայ գրողների կատարած արժեքավոր թարգմանությունները (Հ. Թումանյան, Ալ. Մատուրյան, Հ. Հովհաննիսյան, Վ. Տերյան և ուրիշներ), Ռուսաստանի քաղաքներում ռեալիստական արվեստի արագիցիաներով դաստիարակված երիտասարդ հայ երաժիշտների ու նկարիչների գործունեությունը հանդիսացան փոխգործակցության այն օղակները, որոնք խոշոր շափերով նպաստեցին հայ գրականության և արվեստի զարգացման գործին:

Երիտասարդ կադրերի աճման շնորհիվ Բրիլիսիում այդ շրջանում նկատելի չափով աշխուժանում է հայկական երաժշտական կյանքը: Դեռ 1908 թվականից կազմակերպվել էր «Երաժշտական լիգա» (Ռ. Մելիքյան, Ա. Մանուկյան և ուրիշներ), որը հայկական դպրոցներում զգալի չափով բարելավեց երգ-երաժշտության դասավանդման գործը, ստեղծեց բարձրորակ մանկական երաժշտական գրականություն, կազմակերպեց դպրոցական երեկույթներ, մանկական օպերային ներկայացումներ և այլն:

1912 թվականին հիմնադրվել էր «Թիֆլիսի հայկական երաժշտական ընկերությունը» (Սպ. Մելիքյան, Մ. Միրզոյան, Հ. Տեր-Գավթյան և ուրիշներ): Իր շուրջը համախմբելով հայ երիտասարդ կոմպոզիտորներին և երաժշտական գործիչներին

րին, ընկերությունը կովհասահայերի մեջ բազմակողմանի գործունեություն ծավալեց՝ կազմակերպեց սիմֆոնիկ և կամերային համերգներ ինչպես հայ, այնպես էլ այլ ժողովուրդների կոմպոզիտորների նոր գործերից, հրատարակեց հայ հեղինակների երաժշտական ստեղծագործություններ և պատմա-տեսական աշխատություններ, զգալի աշխատանք կատարեց երաժշտական կրթության ծավալման, ինչպես և Ռուսաստանի կոնսերվատորիաներում երիտասարդ հայ կոմպոզիտորների մասնագիտական ուսուցումը կազմակերպելու ուղղությամբ, երաժշտական-ազգագրական էքսպեդիցիանների միջոցով զրի առավ և հրատարակեց մեծ քանակությամբ հայկական ժողովրդական երգեր և այլն: Ընկերության կարևոր նախաձեռնություններից մեկը եղավ Ալ. Սպենդիարյանի հեղինակային համերգների կազմակերպումը Թբիլիսիում, որի հետևանքով ամբաստանվեցին Սպենդիարյանի կապերը հայ կուլտուրայի գործիչների հետ:

Այդ տարիներին հայկական երաժշտության զարգացմանը նպաստեցին նաև «Գեղարվեստ» (հիմնադիր՝ արվեստաբան Գ. Լեոնյան) ու «Թատրոն և երաժշտություն» (հիմնադիր՝ կոմպոզիտոր Ա. Մայիլյան) պարբերականները և Թբիլիսիի ու Բաքվի մի շարք այլ երաժշտական ընկերություններ¹:

1913 թվականից Ա. Տիգրանյանը մշտական բնակություն է հաստատում Թբիլիսիում և շարունակում է իր ստեղծագործական ու մանկավարժական աշխատանքը: Նա ներգրավվում է երաժշտական-հասարակական կյանքի մեջ և հատկապես գործոն մասնակցություն է ցուցաբերում «Թիֆլիսի հայկական երաժշտական ընկերության» աշխատանքներին, դառնալով ընկերության վարչության անդամներից մեկը: Պարբերաբար հանդես է դալիս նաև մամուլում՝ երաժշտության հարցերին նվիրված հոդվածներով:

¹ Բացի գերոհիշյալ ընկերություններից Թբիլիսիում այդ տարիներին գործում էին՝ «Կովհաստան խմբերգային ընկերությունը», «Արևելյան երաժիշտների ընկերությունը», «Հայ երաժիշտ-խեղճերիկների ընկերությունը» և այլն:



«Անուշ օմբոյն առաջին ներկայումս կին գերատեսչները
կամպոզիտոր Ա. Տիգրանյանի հետ»



Ա. Տիգրանյանի այս տարիների ստեղծագործական աշխատանքը նախ և առաջ ընդգրկում է «Անուշ» օպերայի հետագա մշակումը: Նոր բեմադրությունների կապակցությամբ նա վերանայում է օպերայի գործիքավորումը և մի շարք խմբերգերի պարտիաները: Դրա հետ զուգընթաց նա կատարում է ժողովրդական երգերի մշակումներ, գրում է մեներգեր և խմբերգեր, ինչպես նաև գործիքային ու օրկեստրային պիեսներ:

Այս տարիների ստեղծագործության մեջ առանձին տեղ է գրավում Ա. Տիգրանյանի գրած երաժշտությունը «Լեյլի և Մեշնուն» գրամատիկական ներկայացման համար:

Այդ երաժշտությունից ժամանակին ավելի մեծ հաջողություն են դասել 1-ին և 2-րդ գործողության պարերը, 2-րդ գործողության վերջին նովայուրնը և այլ հատվածներ, որոնցից մի քանիսը հետագայում Ա. Տիգրանյանը վերամշակել է որպես դաշնամուրային և օրկեստրային պիեսներ¹: «Լեյլի և Մեշնուն»-ի առաջին ներկայացումներին (1918 թ., Թբիլիսի) որպես դիրիժյոր հանդես է եկել երաժշտության հեղինակը, Մեշնունի դերը կատարել է երգիչ Շարա Տալլանը: Ներկայացումներին մասնակցել և մեծ հաջողություն է ունեցել նաև Արուս Ոսկանյանը՝ այն ժամանակ երիտասարդ դերասանուհի, հետագայում Հայկական ՍՍԻ ժողովրդական արտիստուհի:

1919 թ. փետրվարին տոնվում է հայ ժողովրդի մեծ բախտակցած Հ. Թումանյանի ծննդյան 50-ամյակը: Ամենուրեք տեղի են ունենում հանդեսներ՝ նվիրված փառապանծ հորեւյժանին: Հանդեսներն առանձին շուրջով են անցնում Թբիլիսիում, որտեղ այն ժամանակ գտնվում էր Հ. Թումանյանը: Հորեւյժանական օրերին Կովկասյան խմբերգային ընկերության նախաձեռնությամբ Թբիլիսիի Արտիստական թատրոնում բեմադրվում է Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերան: Մեծ բեմի վրա, օրկեստրի և երգեցիկ խմբի ավելի մեծ կազմով ու հա-

¹ Ա. Տիգրանյանի նախառովկական տարիների այս ստեղծագործությունները ցավոք որտե՛ր ասպարված չեն, իսկ ձեռագրերն էլ տարբեր տեղեր ցրված լինելու հետևանքով առայժմ գրեթե անմատչելի են:

մապատասխան դեկորացիաներով բեմադրվելով, Արտիստական թատրոնում կայացած ներկայացումները և մասնավորապես այս ներկայացումն անհամեմատ մեծ հաջողություն են ունենում: Հասարակությունը առանձին ջերմությամբ է դիմավորում հորեկյարին և օպերայի հեղինակին:

2. Թումանյանի հորեկյանի առթիվ տեղի ունեցած այս ներկայացումը «Անուշ» օպերայի ժողովրդականության շարունակական աճման կարևոր էտապներից մեկն է դառնում:



Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ուսուցիհան, Սովետական իշխանության հաստատումը Հայաստանում նոր և լուսավոր էջ բացեցին հայ ժողովրդի պատմության մեջ: Նախկինում ճնշված հայ ժողովուրդը, փերկվելով ֆիզիկական բնաջնջման ահավոր վտանգից, որին նա հասել էր դաշնակների անփառունակ տիրապետության տարիներին, ձևոք բերեց ազատություն, իսկական անկախություն և տնտեսական ու կուլտուրական վերածննդի լայն հարավորություններ: Անտանտայի և անգրկովկասյան նացիոնալիստական կոնտրոկուլուցիոն պարտիանների կործանարար քաղաքականության հետևանքով միմյանցից արհեստականորեն անջրպետված Անգրկովկասի ժողովուրդները կազմեցին սովետական եղբայրական ընտանիք և ձեռնամուխ եղան տնտեսական ու կուլտուրական շինարարության: Անգրկովկասի ինտելիգենցիայի առաջադեմ ներկայացուցիչները՝ գիտության և կուլտուրայի գործիչները Սովետական իշխանության հաստատման առաջին իսկ օրերից ամբողջապես նվիրվեցին իրենց ժողովուրդների կուլտուրական վերածնության գործին: Գիտության և արվեստի բոլոր բնագավառներում սկսվեց աննախընթաց վերելքի մի շրջան: Երաժշտական արվեստը դարձավ սովետական ժողովրդի գեղարվեստական դաստիարակության կարևոր միջոցներից մեկը:

Կոմպոզիտոր Ա. Տիգրանյանը, որպես հայ գեմեկրատա-

կան ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչներից մեկը, աշխատանքային դպրոցներում լայն գործունեություն ծավալեց: Իր ընկերների հետ միասին նա ձեռնամուխ եղավ աշակերտության գեղարվեստական դաստիարակության գործի վերակառուցմանը: Գրա հետ միասին նա Թբիլիսիի Հայ տրվեստների տան (Հայարտուն) երաժշտական սեկցիան կազմակերպողներից և նրա աշխատանքների ակտիվ մասնակիցներից մեկը հանդիսացավ:

Հայարտան երաժշտական սեկցիան, օգտագործելով նսխորդ շրջանում գոյություն ունեցած երաժշտական կազմակերպությունների փորձը, սովետական պայմաններում կազմակերպված հունի մեջ դրեց հայ կոմպոզիտորների ստեղծագործական աշխատանքը: Երաժշտական սեկցիայի մեջ միավորված կոմպոզիտորների ուշադրությունը կենտրոնացվում է սովետական թեմատիկայով մասսայական երգեր ստեղծելու խնդրի վրա: Գրա հետ միաժամանակ սեկցիան ծավալում է համերգային գործունեություն, երաժշտական մասսայական աշխատանք, կազմակերպում է ստուդիա, որտեղ դաստիարակվում են երիտասարդ երաժիշտ կադրեր: Հայարտան երաժշտական սեկցիան սերտ կապ է հաստատում նաև վրացական երաժշտական հասարակայնության հետ, կազմակերպում է համերգներ նվիրված վրացի անվանի կոմպոզիտորների ստեղծագործությունը, աշակցում է հայ և վրացի կոմպոզիտորների ստեղծագործական փոխգործակցությանը:

Ա. Տիգրանյանը Հայարտան երաժշտական սեկցիայի հիմնադրման օրից աշխատում է որպես քարտուղար, իսկ հետագայում որպես նախագահ: Հասարակական աշխատանքի իր փորձով, հայ ժողովրդական երաժշտության ասպարեզում ունեցած խոր դիտելիքներով և երիտասարդ կադրերի նկատմամբ ցուցաբերած հոգատար վերաբերմունքով նա շատ բանով նպաստեց այդ տարիներին հանդես եկած կոմպոզիտորների ստեղծագործական ուժին: Մասնավորապես կարևոր է նրա գործունեությունը հայ և վրաց ժողովուրդների կրթության կապերի ամրապնդման գործում: Տիգրանյանը մշտապես

պահպանել է սերտ բարեկամական և ստեղծագործական կապեր վրացի նշանավոր կոմպոզիտորների և հատկապես Ջ. Պալիաշվիլու հետ, հաճախակի լսել նրանց կարծիքն իր ստեղծագործությունների մասին, իր հերթին մասնակցելով նրանց նոր ստեղծագործությունների քննարկմանը: Փոխադարձ այդ կապերն ու շփումը, որոնք շարունակվել են նրա ամբողջ գործունեության ընթացքում, Տիգրանյանի ստեղծագործական կյանքում, անկասկած, դրական նշանակություն են ունեցել:

Նրա ժշտական-հասարակական աշխատանքի հետ միասին սովետական տարիներին առանձնապես ընդարձակվում է Ա. Տիգրանյանի ստեղծագործությունը: Դրա համար որպես հուսալի հիմք ծառայեց նախորդ շրջանում կուսակաժ ստեղծագործական փորձը: Նրա ստեղծագործական սկզբունքները՝ դադափարայնությունը և սերտ կապը ժողովրդի հետ, լիակատար դրսևորումն ստանալով նաև սովետական շրջանի ստեղծագործության մեջ, նոր իմաստավորում ձևաք բերեցին և մնացին որպես ղեկավար սկզբունքներ:

Ա. Տիգրանյանի սովետական շրջանի ստեղծագործությունը բնորոշվում է դադափարական նոր բովանդակությամբ, նոր իդեաներով, ժանրային բազմազանությամբ և սրբֆեսիոնալ վարպետության բարձրացումով:

Սովետական առաջին իսկ տարիներից նոր թեմատիկան հաստատուն կերպով մուտք է գործում Ա. Տիգրանյանի ստեղծագործության մեջ: Իր մաստայական և էստրադային երգերում («Փարնան լալա», «Գյուղում», «Հեյ ջանե, ջանե», «Իմ երգը», «Փարնանացան» և այլն) նա գովերգում է Մեծ Հոկտեմբերը, Սովետական բանակը, նոր կյանքը, կոլխոզային դյուրը, սոցիալիստական շինարարությունը: Այդ երգերի մեկտրոֆիկան հիմնված է հայ ժողովրդական երգի հարուստ ինտոնացիոն բազայի վրա: Ուշադրության արժանի է այն, որ Ա. Տիգրանյանին հաջողվել է վեր հանել և ընդգծել ժողովրդական երգի այն կողմերը, ինտոնացիոն և ռիթմական այն տարրերը, որոնք ամենից ավելի համապատասխանում էին նոր բովանդակու-



Քրիկինի հայաստան երամ շտական սեղանի մի խումբ՝ առաջը՝ արքունի շարքում՝ հովտովանը
Լ. Տիգրանյան, երկուսն էլ Ա. Բարսեղյան, զաջնակահայրուսն էր Մ. Տեր-Մարտիրոսյան, երկ-
րորդ շարքում՝ հովտովանը երկուսն էլ Տալան, Թ. Մեխիկյան և Կ. Զաքարյան



Սյանը, հնարավորություն էին տալիս ստեղծել կենսախինդ, օպտիմիստական կերպարներ:

Ժողովրդական երգ-երաժշտության լավագույն կողմերի ստեղծագործական մշակմամբ են բնորոշ նաև Ա. Տիգրանյանի դաշնամուրային ստեղծագործությունները («Շիրակ գմբուխ», «Արևելյան ֆանտազիա», «Հայկական պարերի սյուիտա», «Հինգ պիես դաշնամուրի համար» և այլն): Դրանք մեծ մասամբ միևնույնություն են, որոնց մեջ օգտագործելով զլխավորապես ժողովրդական պարերի ութմոտ-ինտոնացիոն էլեմենտների բազմազանությունը և լադային երանգավորությունը, հեղինակն ստեղծել է գեղարվեստորեն ամբողջացած, պարզ և էմոցիոնալ պատկերներ: Այս պիեսներից էմոցիոնալ հագեցվածության տեսակետից առանձնապես աչքի են ընկնում «Արևելյան ֆանտազիան» և «Հայկական պարերի սյուիտան»: Վերջինս հետագայում մտցվել է «Անուշ» օպերայի մեջ և օրկեստրային վերամշակմամբ դարձել է օպերայի 3-րդ գործողության պարերի լավագույն հատվածներից մեկը: «Հինգ պիես»-ը մանկական բնաշխարհին հատուկ միևնույն ժանրային պատկերներից կազմված սյուիտա է և մանկական դաշնամուրային սեպտետարի մեջ նշանակալից արժեք է ներկայացնում:

Բացի վոկալ և դաշնամուրային մանր գործերից և օպերաներից, սովետական տարիներին Ա. Տիգրանյանը գրել է նաև խմբական և օրկեստրային մի շարք ստեղծագործություններ: Դրանցից են՝ «Կանտատա Հայաստանի խորհրդայնացման 15-րդ տարեգարձին», «Արյունոտ գիշեր. Քսանվեց կոմունարներին» խմբական խոշոր ստեղծագործությունը, «Պարային սյուիտա օրկեստրի համար, նվիրված Սովետական Վրաստանի 25-ամյակին» և այլն:

Ա. Տիգրանյանի ստեղծագործության մեջ նշանակալից տեղ է զբաղում գրամատիկական ներկայացումների համար գրված երաժշտությունը: Թբիլիսիի պատանի հանդիսատեսի և հայկական ու ազգրեչանական գրամատիկ թատրոններում բնագործված բազմաթիվ պիեսաների համար նա գրել է երա-

ժըշտություն: Գրանց թվին են պատկանում՝ «Գիրքոր» և «Մի կաթիլ մեղր» (ըստ Հ. Բումանյանի), «Անահիտ» (ըստ Ղ. Աղայանի), «Նամուս» (ըստ Ա. Ծիրվանզյանի), «Նավարի ճանկերում» (ըստ Պ. Պոստյանի), «Դավիթ բեկ», «Մամվել» (ըստ Բաֆֆու), «Արշալույսին» (Ա. Գուլակյանի) և այլն:

1932 թ. նրանում հիմնվեց օպերայի և բալետի պետական թատրոն: Դա պատմական խոշոր նշանակություն ունեցող իրադարձություն էր հայ ժողովրդի կյանքում: Ժողովրդի և նրա լավագույն զավակների երազանքները աղղային օպերային թատրոն ունենալու մասին իրենց իրադրոժումը գտան միայն սովետական պայմաններում: Օպերային թատրոնը դարձավ կուլտուրական կարևոր մի օջախ, որտեղ ժողովրդի լայն զանգվածները հազորդակից են դառնում սուսական և համաշխարհային օպերային և բալետային արվեստի լավագույն ստեղծագործություններին: Հանդիսանալով հայկական առաջին մշտական օպերային թատրոնը և վալեիլով Սովետական կառավարության, Կոմունիստական պարտիայի և ամբողջ հասարակայնության լայն աջակցությունը, թատրոնը մեծապես նպաստեց նաև սովետահայ օպերային ստեղծագործության զարգացմանը: Այդ հանգամանքն առանձնապես ակնառու կերպով կարելի է տեսնել Ա. Տիգրանյանի օրինակով:

Նրանի օպերայի և բալետի պետական թատրոնն իր առաջին թատերաշրջանն սկսեց 1933 թվականի հունվարի 20-ին՝ բեմադրելով Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ» պատմահերոսական օպերան: Դա հայկական կլասիկ օպերաների բեմադրման առաջին փորձն էր նորաստեղծ թատրոնի բեմի վրա: Հետագայում շարունակելով սկսված դրական աշխատանքն աղղային օպերայի զարգացման բնադավառում, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի Պետական թատրոնը ձեռնամուխ է լինում Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի բեմադրությանը:

Մի քով ընդառաջելով Սովետական Հայաստանի Լուստողոմատի առաջարկին, Ա. Տիգրանյանը մեծ ոգևորությամբ վերանայում է իր օպերան, հարստացնում է նրա վեկալ պար-

տիան՝ ավիացնելով նոր համարներ և հիմնովին վերանայում է գործիքավորումը՝ հարմարեցնելով այն սիմֆոնիկ մեծ օրկեստրի պահանջներին: Այս նոր խմբադրությունը «Անուշ» օպերան Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի Պետական թատրոնում բեմադրվում է 1935 թվականի մարտի 27-ին:

Սովետական Հայաստանի կյանքում այդ բեմադրությունը նշանավորվեց որպես ազգային օպերայի զարգացման կարևոր էտապ, որովհետև դա «Անուշ» օպերայի առաջին լիարժեք բեմադրությունն էր ինչպես երաժշտական-բեմական կատարման, այնպես էլ ներկայացման զեղարվեստական ձևավորման ու տեխնիկական հագեցվածության տեսակետից¹: «Անուշ»-ի հիասքանչ մեղոդիաները հնչեցին զեղարվեստական նոր ուժով ու թարմությամբ: Բեմադրության հաջողությունն այնքան մեծ էր, որ առաջին երկու թատերաշրջանի ընթացքում մշտապես հանդիսականներով լեցուն դահլիճում ներկայացումը կրկնվեց հարյուր անգամ: Երևանի հասարակությունից բացի, հատկապես ներկայացումը դիտելու էին զալիս Հայաստանի տարբեր շրջանների կուլտուրականները և աշխատավորության կուլեկտիվները: «Անուշ»-ի յուրաքանչյուր բեմադրությունը վերածվում էր ժողովրդական տոնախմբության, օպերայի ժողովրդականությունն աճում էր աննախընթաց շափերով:

Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ»-ի և ազգային օպերային մի քանի այլ ներկայացումների հետ միասին Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերան հաստատուն տեղ դրավեց Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի Պետական թատրոնի ռեպերտուարում և դարձավ նրա զարդը:

Հետագա տարիներին, երբ մեր ժողովուրդը նախապատրաստվում էր կուլտուրական մեծ տոնին՝ հայ արվեստի տասնօրյակին Սովետական Միության փառապանծ մայրաքաղաքում ցուցադրելու իր նվաճումները, Ա. Տիգրանյանը և թատ-

¹ Այս բեմադրությունը մասնակցել են՝ Հ. Գանիեյանը (Անուշ), Ե. Տալյանը (Սաբո), Ն. Սերգորովը (Մոսի), զերիժյուր Ս. Եսթիբյան, ակտիսյուր Ա. Գուլակյան, նկարիչ Գ. Անանյան:

րոնի ստեղծագործական կուլկտիվը ձեռնարկեցին «Անուշ»-ի վերջնական խմբագրման¹ և նոր բեմադրություն իրագործանելու: Հեղինակը հարստացրեց օպերայի լիբրետոն, որի հիման վրա գրեց վոկալ (խմբակուսն ու սոլո) և օրկեստրային նոր համարներ: Մեծացվեցին ներկայացման մասշտաբները՝ հարմարեցնելով Մոսկվայի Մեծ Թատրոնի բեմին, կատարվեց գեղարվեստական նոր ձևավորում: Այս բոլորի հետևանքով «Անուշ»-ը հնչեց որպես գեղարվեստորեն ամբողջացած լիարժեք օպերա:

1939 թվականի հոկտեմբերի 22-ին Մոսկվայի Մեծ Թատրոնի դահլիճում տեղի ունեցավ «Անուշ»-ի բեմադրությունը, որին ներկա էին Սովետական կառավարության և Կոմունիստական պարտիայի ղեկավարները: Մայրաքաղաքի երաժշտասեր հասարակությունը բացառիկ խանդավառությամբ դիմավորեց Ա. Տիգրանյանի «Անուշ»-ի բեմադրությունը: Գնահատելով այն որպես մի փայլուն, հուշիչ, իսկական-ժողովրդական ներկայացում», «Պրավդա»-ն «Անուշ»-ը համարում է Ապլենդիարյանի անվան թատրոնի ստեղծագործական նշանակալից հաղթանակը²:

Երաժշտական քննադատությունը միահամուռ կերպով բարձր գնահատեց «Անուշ» օպերան, բնութագրելով այն «որպես մի անվերջանալի հիասթափելի սրբ, որը լի է խորը զգացմունքով, հուզական է, սրտառուչ և պարզ: Երգայնությունը ոչ միայն տիրապետում, այլև առաջիորեն ներթափանցում է ողջ օպերայում, նրա սկզբից մինչև վերջին տակտը»:

ՍՍՌՄ ժողովրդական արտիստուհի Վ. Բարսովան հետևյալ կերպ է գնահատում «Անուշ»-ի բեմադրությունը.

«Կոմպոզիտորի կողմից Մոսկվայում ցուցադրելու համար մշակված և լրացված «Անուշ» օպերան ձեռք է բերել նոր դուլներ, նոր հմայք, որոնք ըստ արժանվույն գնահատվեցին

¹ «Անուշ» օպերայի գործիքավորումն ևս մի բանի խմբագրությունն է ունեցել: 1939 թ. բեմադրության համար գործիքավորման խմբագրությունը մասնակցել է նաև կոմպոզիտոր Ա. Տիգր-Ղեկանյանի:

² «Правда», № 294, 24 октября, 1939.

ունկնդիրներին կողմից: Այդ օպերան ՍՍՌՄ մայրաքաղաքում կայացած հայկական արվեստի տասնօրյակի զարդն էր¹:

Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը բարձր են գնահատում սովետահայ արվեստի ասպարեզում ձևեր բերված նվաճումները: Թատերական և երաժշտական արվեստի զարգացման գործում ունեցած աչքի բնկնող ծառայությունների համար ՍՍՌՄ Գերագույն Սովետի նախագահության հրամանագրով տասնօրյակի բաղձաթիվ մասնակիցներ պարգևատրվում են ՍՍՌՄ շքանշաններով ու մեդալներով: Նույն հրամանագրով կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանը պարգևատրվում է Լենինի շքանշանով:

Ոգեշնչված կառավարական բարձր պարզևով և «Անուշ» օպերայի մեծ հաջողությամբ, Ա. Տիգրանյանը ձեռնամուխ է լինում ստեղծագործական նոր աշխատանքների: Դեռևս 30-ական թվականների սկզբից «Անուշ» օպերայի վերամշակման հետ զուգընթաց, նա սյուժեներ է որոնում օպերային նոր ստեղծագործություն գրելու համար: Նրա արխիվում պահպանվել են «Արտավազը» հայկական ավանդավապի և «Անահիտ» ժողովրդական հերիաթի իր կազմած լիբրետոները: Որոշ ժամանակ նա աշխատում է ժողովրդահայերոսական «Քյոռ-օղլի» օպերայի վրա²: Մոսկվայի հայկական արվեստի տասնօրյակից հետո Ա. Տիգրանյանը ձեռնարկում է պատմահայերոսական «Դավիթ բեկ» օպերայի ստեղծմանը:

«Դավիթ բեկ» օպերայի նյութը վերցված է օտար բնակալների դեմ XVIII դարի սկզբում հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի պատմությունից: Պատմական կոնկրետ իրադարձությունների և ժողովրդի բնգեղերից ելած հերոսների սխրագործությունների պատկերման միջոցով օպերայում գովերգվում է հայրենասիրությունը և ժողովուրդների բարեկամությունը, անարգանքի սյունին են դամվում ժողովրդական գործի թշնամիներն ու դավաճանները:

¹ «Иллюстрированная газета», № 21, 7 ноября, 1939.

² Պահպանվել են օպերայի առաջին գործողության կազմերը և առանձին հատվածների էսքիզները:

«Դավիթ բեկ» օպերայի ստեղծման աշխատանքը հիմնականում ընթացել է Հայրենական Մեծ պատերազմի տարիներին: Օտար բռնակալություն դեմ մղած ժողովրդի ազատագրական պայքարի հերոսական զրվադները վեր հանելով և վերակենդանացնելով ժողովրդական հերոսների կերպարները, սովետական արվեստագետներն իրենց ստեղծագործություններով ժողովրդին ոգեշնչում էին նորանոր սխրագործությունների՝ ընդդեմ գերմանա-ֆաշիստական զավթիչների:

Ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից վերցված նյութի ընտրությունը լիովին համապատասխանում էր Ա. Տիգրանյանի խորը հայրենասիրական ըմբռնումներին: Բազմազանատուկ կոմպոզիտորը, ժողովրդի գործին սրտանց նվիրված արվեստագետը, որը Հայրենական Մեծ պատերազմի ծանր օրերին իր պատրաստակամությունն էր հայտնում որպես աշխարհազորական անձամբ մասնակցելու Հայրենիքի պաշտպանության գործին, նույնիսկ փորձում էր իր համեստ ուժերը ներդնել հայրենական ռազմական տեխնիկայի զարգացման գործում և այդ բնագավառում մեծ եռանդ էր ցուցաբերում, — սովետական այդ ազնիվ քաղաքացին «Դավիթ բեկ» օպերայի ստեղծումը զիտում էր որպես իր հայրենասիրական պարտքը կատարելու կարևոր միջոց: Նա մեծ ոգևորությամբ իր ամբողջ կարողությունը գործադրեց այդ օպերայի ստեղծման համար: Զգալով ձեռնարկած խնդրի լրջությունն ու պատասխանատվությունը, նա նախապատրաստական լուրջ աշխատանք կատարեց. մանրամասն ուսումնասիրեց Դավիթ բեկի ժամանակաշրջանը, հայ ազգային-ազատագրական շարժումների պատմությունը և Դավիթ բեկի գործունեությունը:

«Դավիթ բեկ» օպերան հանդիսացավ հեղինակի՝ տասնյակ տարիների ընթացքում մշակված և նրա լավագույն գործերում փորձարկված ստեղծագործական սկզբունքների հաջող կիրառման փայլուն արտահայտություն: Շնորհիվ գաղափարական հազեցվածություն և քաղաքական նպատակասույցություն, ռեալիստական արվեստի և ժողովրդական երաժշտա-

կան լեզվի, «Դավիթ բեկ» օպերան մի նոր քայլ է սովետահայ օպերային ստեղծագործության զարգացման ճանապարհին:

Ա. Տիգրանյանի «Դավիթ բեկ» օպերայի մի շարք հատվածներ հաջողությամբ կատարվել են դեռևս Հայրենական Մեծ պատերազմի տարիներին, իսկ օպերայի կլավիրն ամբողջությամբ հեղինակն ավարտել է 1949 թվականին¹: Անժամանակ մահը Տիգրանյանին հնարավորություն չտվեց տեսնել իր նոր օպերայի բեմադրությունը, որը սեղի ունեցավ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 30-ամյակի հանդիսավոր օրերին:

«Դավիթ բեկ» օպերան մեծ հաջողություն ունեցավ ունկընդիր հասարակության մեջ և արժանի տեղ գրավեց օպերային թատրոնի ռեպերտուարում:

«Դավիթ բեկ» օպերայի երաժշտության ստեղծմանը ղուգընթաց Ա. Տիգրանյանը նույն տարիներին գրել է վոկալ ու գործիքային մի քանի այլ գործեր և երաժշտություն թատերական ներկայացումների համար:

Ա. Տիգրանյանի արդյունավետ գործունեությունն արժանացել է Սովետական կառավարության և Կոմունիստական պարտիայի բարձր գնահատականին: Անինի շքանշանով, մեդալներով ու պատվոգրերով պարգևատրվելուց բացի, նրան շնորհվել է Հայկական ՍՍՌ և Վրացական ՍՍՌ Արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

Ա. Տիգրանյանը մահացավ 1950 թվականի փետրվարի 10-ին Քրիլիախում: Չնայած իր պատկառելի տարիքին, նա լի էր ստեղծագործական եռանդով և նորանոր գործեր ստեղծելու պատրաստակամությամբ: Ա. Տիգրանյանի աճյունը փոխադրվեց Երևան և մայրաքաղաքի բաղձահազար աշխատավորության ուղեկցությամբ թաղվեց Արվեստի աշխատողների պանթեոնում:

¹ Ա. Տիգրանյանը չհասցրեց գործիքավորել «Դավիթ բեկ» օպերան: Նրա արտիֆուս կան միայն առանձին հատվածների պարաֆուրաները: Բեմադրության համար օպերան խմբագրել է զինգերթյուր Գ. Բուզադյանը, գործիքավորել է կոմպոզիտոր Լ. Խոջանյանը:

Ա. ՏԻԳՐԱՆՅԱՆԻ «ԱՆՈՒՇ» ԹՊԵՐԱՆ

Ինչպես վերը տեսանք, Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերան գրված է հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանի համանուն պոեմի հիման վրա:

Հ. Թումանյանի «Անուշ» պոեմը, ինչպես և նրա ամբողջ ստեղծագործությունը, իր մեջ խառնցնելով հայ ժողովրդի բազմադարյա բանահյուսության լավագույն դանձերը, նախասովետական շրջանի հայ գրականությունը հասցրել է դարդացման բարձրակետին: Հանդես գալով XIX դարի վերջին տասնամյակում և XX դարասկզբում, Թումանյանը, հիմնվելով ուսուսական կլասիկ գրականության ռեալիստական տրագիգիաների վրա, հարազատ ժողովրդի բազմահարուստ բանահյուսությունը ծառայիցրեց որպես ստեղծագործության անըսպառ աղբյուր:

Առանձնապես մեծ է Հ. Թումանյանի պատմական դերը հայ պոեզիայի դարդացման գործում: Իր ստեղծագործությամբ Հ. Թումանյանը հայկական պոեզիայում հաստատեց ռեալիզմը և ժողովրդայնությունը: Ժողովրդի կյանքը, կենցաղը և հոգեկան աշխարհը, հայրենի երկրի բնությունն ու նրա ճակատագիրը կազմել են մեծ բանաստեղծի ստեղծագործության մըշտական առարկան: Ժողովրդի անցյալն ու ներկան, ինչպես և նրա ապագան խորապես հուզել են պոետին: Եվ չնայած այն բանին, որ նա ականատես է եղել իր ժողովրդի ֆիզիկական բնաշնչման ցնցող ողբերգությունը և խորապես վերապրել նրա հետ կապված բոլոր արհավիրքները, այնուամենայնիվ չի

կորցրել իր հոգու արիությունը և մշտապես հավատացել է ժողովրդի վերածնմանն ու պայծառ ապագային: Անկեղծ լիրիզմով, նվիրական հույզերով ու զգացմունքներով ներթափանցված նրա պոեզիան միշտ ողեշնչել է ինչպես ամբողջ ժողովրդին, նույնպես և նրա ծոցից դուրս եկած ստեղծագործական ուժերին: Հատկապես բացառիկ է Հ. Թումանյանի պոեզիայի նշանակությունը հայկական երաժշտության զարգացման համար: Աչքի բնկնելով բովանդակության խորությունամբ, հուզական հագեցվածությամբ և միաժամանակ տաղաչափական արվեստի հարստությամբ, պատկերների բազմազանությամբ, լեզվի հստակությամբ և բացառիկ երաժշտականությամբ, նրա բանաստեղծություններն ու պոեմները հիմք են դարձել բազմաթիվ երաժշտական ստեղծագործությունների համար¹: Թումանյանի պոեզիան այսօր էլ հանդիսանում է ստեղծագործական ոգևորության հորդարուխ և անհատնելի աղբյուր:

Լինելով Հ. Թումանյանի ժամանակակիցը և ղեկավարվելով ստեղծագործական նույն սկզբունքներով, Արմեն Տիգրանյանը միշտ էլ հոգեկան մոտիկություն է զգացել նրա նկատմամբ և մեծ սիրով ու հարգանքով է վերաբերվել նրա ստեղծագործություններին: Բավական է ասել, որ նա իր կյանքի նպատակն է դարձրել ստեղծել Թումանյանի «Անուշ» պոեմին

1 Հ. Թումանյանի ստեղծագործությունների հիման վրա են զբղվել Ա. Տիգրանյանի «Անուշ» և Ա. Սպենդիարյանի «Ամստա» օպերաները, Ա. Մանուկյանի «Չարի վերջը», Ս. Մուրադյանի «Շունն ու կատուն» և այլ մանկական օպերաներ, Ա. Տեր-Ղևոնդյանի «Արթուր» սիմֆոնիկ պոեմը, ինչպես և Կոմիտասի, Ռ. Մելիքյանի և այլ կոմպոզիտորների բազմաթիվ մեներգերը, խմբերգերը, ուսմանները և այլ ստեղծագործություններ:

Հետաքրքրական է նշել, որ մասնավորապես «Անուշ» պոեմը բացի Ա. Տիգրանյանից, ստեղծագործության նյութ են դարձրել Կոմիտասը, Ե. Բաղդասարյանը, Ս. Բաբխուղարյանը, Վ. Մարգարյանը: Հայտնի է, որ Հ. Թումանյանի պոեմով մեծապես աարվել է նաև ռուս կոմպոզիտոր Ա. Գրեչանինովը: Երբ ցանկություն է ունեցել օպերայի վերածել այն:

համարժեք օպերային ստեղծագործություն և ամբողջ 30 տարի շարունակ զբաղվել է իր օպերայի մշակման ու հարստացման աշխատանքներով՝ լիակատար շափով հասնելով իր նպատակի իրագործմանը:

2. Թումանյանի «Անուշ» պոեմը հանդիսանում է նախա-
նետույնցիոն շրջանի հայկական նահապետական գյուղական
կյանքի հանրադրատարանը: Նրա մեջ քացառիկ վարպետու-
թյամբ պատկերված է XIX դարի վերջի հայ գյուղի ամբողջ
կյանքն իր տիպական կողմերով, խավարի ու տղիտության
թագավորությամբ, նահապետական բարոյական հասկացո-
ղություններով ու ազաթներով, վշտով և ուրախությամբ: Այս
տեսակետից միանգամայն իրավացի էր Վ. Բրյուսովը, գրե-
լով, թե՝

«Այլազգի ընթերցողի համար Թումանյանի պոեմների
(օրինակ, նրա «Անուշ»-ի) հետ ծանոթանալն ավելի շատ բան
է տալիս, քան կարող են տալ մասնադրատական հետազոտու-
թյունների սովոր հատորները: Բանաստեղծը ցայտուն և վառ
գծերով վերաստեղծում է հարազատ ժողովրդի կենցաղը, բայց
այդ նա անում է որպես գեղարվեստագետ, կյանքի կոշեղով
անմոռանալի կերպարներ՝ ոչ այնքան անհատականացված,
որքան տիպական»¹:

2. Թումանյանի «Անուշ»-ի հիմքում ընկած է անհատի՝
միջավայրի հետ ունեցած ընդհարման սոցիալական պորբե-
մը: Այդ ընդհարման հետևանքով խորտակվում է անհատի
երջանկությունը՝ զարնվելով խավարի, տղիտության, քարա-
ցած սովորությունների և անդուրթ ազաթի անհաղթահարելի
պատենեշներին: Պոեմի սյուժեն կազմում է Անուշի և Սարսի
դժբախտ սիրո պատմությունը: Պոեմի նյութը վերցված է իրա-
կան կյանքից, բայց հեղինակի կողմից ենթարկված է գեղար-
վեստական ընդհանրացման ու տիպականացման:

Ահա պոեմի համառոտ բովանդակությունը:

Գեղջկուհի Անուշը օժտված է արտաքին անզուգական

¹ В. Брюсов, Поэзия Армении, СПб, 1916, стр. 78—79.

գեղեցկութիամբ և հոգեկան քարձք հատկութիւններով: Նա սիրում է հովիվ Սարոյին: Վերջինս Անուշի եղբայր գառնարած Մոսիի մտերիմ ընկերն է և երիտասարդական բուն սիրով սիրում է շքնաղ Անուշին: Արբած իր սրտի անկեղծ զգացմունքով Սարոն կարծես աշուղ է դարձել:

... Աշուղ ես շինել,
 Չեմ հանգստանում,
 Խաղեր կապելով,
 Չուեր շափելով,
 Ոչխարս անտեր,
 Ընկել եմ հանդեր, — երգում է նա:

Իր նպատակին հասնելու համար Սարոն պատրաստ է ամեն ինչի, նույնիսկ արյուն թափելու և զոռով Անուշին փախցնելու, եթե նրա ծնողները չհամաձայնվեն իրենց ամուսնութիւնը:

Երիտասարդ զույգի փոխադարձ սերը ապագա երջանկութիւն է խոստանում: Սակայն սիրո պայծառ երկնակամարը շուտով մոայլվում է, երբ համբարձման տոնին վիճակահանութեան ժամանակ Անուշին «սև վիճակ» է ընկնում:

Ա՛յ թուխ մազավոր աղջիկ,
 Ա՛յ սարի սովոր աղջիկ,
 Ջիղյարին գյուլա գիպշի
 Քեզ սիրի ով որ աղջիկ:

Որքան էլ ընկերուհիներն աշխատում են հանգստացնել նրան, թե «լուկ պատահական մի շար խոսք է սա», Անուշը գանդատվում է, թե ինքը միշտ էլ անբախտ է եղել և որ պառավ գերվիշը իրեն անիծել է, երբ ինքը դեռ օրորոցումն է եղել:

Ախ էն դարվիշի անեծքին անգութ
 Ու էս վիճակին տեղյակ է աստված.

Անուշի դժբախտության առիթն է դառնում իր եղբոր՝ Մոսիի ու Սարոյի կոխը գյուղական հարսանիքում, երբ գյուղի երիտասարդությունը նրանց ընկերական ըմբռամարտի է դուրս բերում:

Ազաթ կա սահայն էն մութ ձորերում,
Ու միշտ հնազանդ հնոց ազաթին,
Ամբոխի առջև իգիթն իր օրում
Գեախն շի զարկիլ ընկեր իգիթին:

Այնինչ Սարոն, նկատելով Անուշին աղջիկների մեջ կանգնած, մոտանում է և՛ ընկեր, և՛ ազաթ, և՛ ամեն ինչ, ու ինքնամոռացության մեջ, կատակախաղի դուրս եկած ընկերոջը գեախն է տապալում:

Վերավորված իր ընկերոջ տմարդի վարձունքից, Մոսին երդվում է ինչ գնով էլ լինի իր վրեժը լուծել Սարոյից: Նա այլևս չի կարող հանդուրժել, որ իր քույրը սիրի խաբեության մը իրեն նամուրը գեանով աված խարդախ ընկերոջը:

Անուշը քեկ խոստանում է եղբորը այլևս չսիրել Սարոյին, բայց անկարող է դիմադրել սիրո բուռն զգացմունքին և Սարոյի հետ լեռներն է փախչում՝ արհամարհելով ազաթի կապանքները: Սահայն Մոսին, որ հին հասկացողությունների ու նազաթի մարմնացումն է, արյան վրիժառության թույնն իր սրտում հետապնդում է Սարոյին և սպանում նրան:

Սիրածից զրկված, հորից, եղբորից և ամբողջ գյուղից հալածված Անուշը խելադարվում է և իր կյանքն ավարտում ողբերգական մահով՝ նեավելով Գերեզի ալիքների մեջ:

Այսպիսով, Անուշի և Սարոյի սերն ու երջանկությունը խորտակվում են այն պատճառով, որ նահապետական գյուղի տղիտությունն ու խավարը, հին ազաթն ու բարքերը իրենց ծանրությունը ճզմում են սիրող դուռդին: Հեղինակը, հանձին Անուշի և Սարոյի մարտահրավեր է նետում տղիտությանն ու խավարին և շնայած իր հերոսների տրադիկ վախճանին, նա տանում է լիկատար հազվություն՝ այդ ողբերգական մահվան



« Անուշահ օգնականի կենտրոնական դասը անկողնային »



միջոցով ցույց տալով նահապետական գյուղի մասը իրակա-
նության խորտակման անխուսափելիությունը: Խավարին ու
տգիտությունը հակադրվող Թումանյանը հանդես է գալիս
որպես անհաշտ քննադատ, առաջադիմության շատագուցիկ և մեծ
լուսավորիչ:

Ձեռքի տակ ունենալով Լ. Թումանյանի այս գլուխ գոր-
ծոցը, Ա. Տիգրանյանը նպատակ է դնում ստեղծել երաժշտա-
կան դրամատիկական մի երկ՝ իր ռեժիսորական ժողովրդա-
կան, որքան Թումանյանի պոեմը: Ինչպես վերը նշեցինք, այդ
նպատակով նա լիբրետոն կազմելիս պոեմի գաղափարական
բովանդակությունը և դրամատուրգիական կառուցվածքը հիմ-
նականում թողնում է անփոփոխ:

Ինչպես «Անուշ» օպերան ամբողջապես, այնպես էլ նրա
լիբրետոն ունեցել են մի շարք խմբագրություններ: Լիբրետոյի
վերջին խմբագրությունը պոեմից տարբերվում է նրանով, որ
այստեղ բեմականացման նպատակով որոշ տեսարաններ
ընդարձակված և հարստացված են (աղբյուրի տեսարանը,
համբարձման տոնը, հարսանիքի տեսարանը և այլն), ավե-
լացված են նոր տեսարաններ (Անուշի և Սարոյի տեսակցու-
թյունը 4-րդ գործողության մեջ, հրդեհի տեսարանը) և երկրոր-
դական մի քանի գործող անձեր (քյոխվա, խաչեղբայր, Օհան),
բաց են թողնված Անուշի վերադարձը փախուստից հետո և
գրա հետ կապված՝ նրա հոր կերպարը, ինչպես և անցվորի
էպիգոգը:

Օպերան բազկացած է հինգ գործողությունից (վեց պատ-
կերով): Առաջին և երկրորդ գործողության մեջ կատարվում է
հիմնական երեք գործող անձերի (Անուշ, Սարո և Մոսի) ցու-
ցադրումը: Այստեղ հանդես են բերվում նաև այն նախադրյալ-
ները, որոնց վրա հիմնված է օպերայի դրամատուրգիական
կոնֆլիկտը, նրա զարգացումը և ողբերգական վախճանը:
Պրանք են՝ Անուշի և Սարոյի փոխադարձ սերը, նահապետա-
կան գյուղի աղաթը և Անուշի շարագուշակ վիճակահանությու-
նը: Երրորդ գործողության մեջ տեղի է ունենում Սարոյի և
Մոսիի ընդհարումը՝ գյուղական հարսանիքում նրանց ընկե-

բական ըմբռանալու ժամանակ աղաթի խախտման հողի վրա: Դա կոնֆլիկտի հանգուցակետն է: Չորրորդ գործողությունը ներկայացնում է կոնֆլիկտի հետագա խորացումն ու սրումը՝ Սարոյի և Անուշի փախուստը և հրդեհը: Վերջին գործողությունը օպերայի կոնֆլիկտի լուծումն է՝ Սարոյի սպանությունը և Անուշի խելագարությունը:

Օպերան սկսվում է վոկալ-օրկեստրային նախերգանքով: Ընդարձակ այդ նախերգանքը պատմողական բնույթ ունի: Նրա մեջ կարծես խտանում է օպերայի ամբողջ բովանդակությունը, երիտասարդ զույգի սիրո վշտահույզ պատմությունը: Օպերայի երաժշտությունից վերցրած թեմաների միջոցով, սեղմ, բայց ցայտուն շարիխներով տրված, մեկը մյուսին հաջորդում են բոլոր հիմնական կերպարները՝ Լոռու վեհ բնությունը, նահապետական սահմանափակ կյանքում գերիշխող աղաթը, Անուշի և Սարոյի անկեղծ սերն իր տրագիկ վախճանով: Նախերգանքի վոկալ մասը կապված է «գուշման Դերեզի» պղտոր ալիքներում իր վախճանը գտած Անուշի կերպարի հետ: Նախերգանքը եզրափակվում է վորագույրե ետևից կատարվող խմբերգերով, որոնց մեջ արտահայտիչ կերպով տրված է դժբախտ սիրո ամոսսանքը¹:

Առաջին գործողությունը բաղկացած է երկու պատկերից: Առաջին պատկերի երաժշտության կենտրոնական էպիզոդը Սարոյի սերենադն է («Աղջի անաստված»): Իմպրովիզացիոն բնույթի լայնաշունչ երգում սարերից իջնող հովիվը լիրիկական անմիջականությամբ իր սիրո հույզերն է արտահայտում: Սարոյի երգն ընդմիջվում է Անուշի և նրա մոր դիալոգով, որն այդ երգի՝ Սարոյի սիրո կանչի անմիջական անդրադարձումն է: Լսելով սիրած տղայի երգը Անուշը պատրվակ է փնտրում վրանից հեռանալու և սիրածին հանդիպելու համար: Նրա երաժշտական ֆրազները լի են սիրո թրթռուն զգացմունքներով: Սակայն մայրը, որն իր էությունը պատկերված է որպես միջավայրի բարոյական հասկացողությունների գերի, ամեն

¹ «Անուշ»-ի առաջին խմբագրություններում օպերայի նախերգանքն ավելի ընդարձակ է եղել և ուղեկցվել է փերիներե պարերով:

կերպ աշխատում է ետ պահել նրան այդ մտքից: Սարոյի վրակալ պարտիան և Անուշի ու նրա մոր դիալոգը ներկայացված են օպերային տրիոյի մի օրիգինալ ձևով, որի մեջ մտնող տարրերը, ինքնին ամբողջացած լինելով և միմյանց հաջորդելով հանդերձ, սերտորեն միահնչուվում են, կազմում օրգանական ամբողջություն՝ վերածվելով վրակալ-բեմական ծավալուն տեսարանի: Այդ տեսարանին զարգացում է տրված: Պատկերի ընթացքում Սարոյի երգը դառնում է շարունակ ափելի շերմաշունչ և հուզված, իսկ Անուշի երգի մեջ հոգեկան ներքին անհանգստության շեշտեր են լսվում:

Երկրորդ պատկերը ներկայացնում է տեսարան աղբյուրի մոտ, որտեղ հավաքված գյուղական աղջիկները (Անուշն ու իր ընկերուհիները) անմեղ հանաքներով երգում, պարում և ուրախանում են: Նրանց մեներգերը, «Ամալի տակից շուր է գալիս» լիրիկական խմբերգը և մյուս հատվածները պարզ են, անբռնազրոսիկ, էմոցիոնալ:

Անուշը Սարոյի հետ տեսակցելու համար ետ է ընկնում հեռացող ընկերուհիներից: Սպասումի երկար բուպեններին, սպազայի անորոշության նկատմամբ իր մտորմունքը Անուշն արտահայտում է «Ախ իմ քախտը կանչում է ինձ» արիայում: Նա իրեն համեմատում է «Սարի սիրուն ծաղկանց» հետ, որոնք օտորովում են ու թառամում սրտները սև ու տխուր: Անուշի՝

Andante

Ա - իկ - են - ուղ լի և ար - ցում.

Փնջուշ տխրությունը լի ֆրազան՝ հետագայում դառնում է նրա դժբախտ սիրտ արտահայտությունը:

Անուշի հողեվիճակն իր ցայտուն արտահայտությունն է գտնում պոետական գրավչությամբ լի «Ասում են ուտին» երգում:


Ասում են՝ ուտին
Աղջիկ էր ինձ պես,
Մնում էր յարին,
Ու շեկավ նա տես:
Խեղճը զողալով
Անհույս կոացավ,
Գարդից շորացավ,
Ուտենի գարձավ:
Ջրերի վրա
Գլուխը կախած
Գեռ դողում է նա
Ու լալիս կամաց,
Ու ամբողջ տարին
Մի միտք է անում,
Թե յարը յարին
Ոնց է մոռանում...

«Ասում են ուտին» երգն իր անկեղծ լիրիզմով և պարզ ու անբռնազրոսիկ մեխոգիականությամբ դարձել է «Անուշ» օպերայի ամենաժողովրդական հատվածներից մեկը:

Այդ երգին հաջորդող տեսարանում Անուշի հողեվիճակն ավելի անհանդիստ է դառնում: Դա արտահայտված է ներքին խռովությամբ, տաղնասլով ու հուզմունքով լի մեխոգիկ ունչիտատիվով («Դու ինձ շես սիրում, շես սիրում ինձ պես»):

Անուշի կասկածներին ու կշտամբանքներին Մարոն պատասխանում է իր փոխադարձ սերն արտահայտող նույնպիսի հուզումնալից երգով:

Ասաջին դործողության երաժշտությունն ամբողջապես, լիրիզմով հազեցված երգերով՝ սիրող սրտերի ջերմ, փոխադարձ և անկեղծ սիրտ արտահայտությունն է, լի հողեկան ներքին տաղնապոզ և անհանգստությամբ: Գործողության վեր-



Մանուկների և ծնողների համագործակցության օրը



չում Անուշի վոկալ սրարտիայի տարրերից սաղմնավորվում է հետևյալ մոտիվը,



որը հետագայում պետք է դառնա Սարոյի հոգեկան ծանր ապշումներն արտահայտող թեմա:

Երկրորդ զործողությունը ներկայացնում է համբարձման տոնը: Երգեցիկ խմբի, բալետի և օրկեստրի միջոցով հեղինակն ստեղծել է ժողովրդական տոնախմբության մասսայական վառ պատկերներ: Ուրախ երգն ու բարձր տրամադրությունը համակում են բոլորին, խմբական ու կենտ պարերը հաջորդում են միմյանց: Ընդհանուր ուրախությունն ավելի է ուժեղանում, երբ գալիս են մտերիմ ընկերներ Սարոն ու Մոսին: Նրանց զուետը խմբի բացազանչությունների ընկերակցությամբ նոր թափ է հաղորդում ուրախությունը: Նորից սկսվում են պարերը, երկու երիտասարդ կոխ են բռնում և ուրախությունը հասնում է իր գագաթնակետին: Ոգևորված ամբոխը ընկերական ըմբշամարտի է հրավիրում ճանաչված իգիթներին՝ Սարոյին և Մոսին: Բայց Մոսին հրաժարվում է:

Մոսիի երաժշտական ֆրազը հնչում է որպես զորեղ մի նախազգուշացում ազաթի անխախտելիության մասին: Այդ փարձ, բայց ազգու ոնչիտատիվը, հակադրվելով խմբի ուրախ

երգին, ընդհանուր ուրախության մեջ ղևսոնանս է մտցնում: Այս հակադրությունը օպերայի դրամատուրգիական լարվածության կարևոր գործոններից մեկն է դառնում:

Maestoso

Ա - դար կա՛նք - նույն մե - ժար են - ռե - տում

Ի - զքե՛ն ե - տում քն - կե ի - զ - քե - ին

զն - զն ի զ - քե՛ն ամ - բռ - ին ասույ

Երգը, պարն ու ուրախությունը շարունակվում են, աղջիկներն սկսում են վիճակահանությունը: Աղջիկների կատակախառը քառյակները և դրանց հաջորդող խմբական հատվածները («Համբարձում յայլա») ժողովրդական արագիցիոնն այդ

ծիսական խաղի անբռնազրոսիկ պատկերն են ստեղծում: Ընդհանուր ուրախությունը խափանվում է Անուշին ընկած շար վիճակով:

Պատահական այդ վիճակն ընկալվում է տրադիկ կերպով: Անուշը նրա մեջ տեսնում է իր դժբախտ ճակատագրի կանխագուշակումը: Այսուհետև նրա վեկալ պարտիայում շարունակ լսվում է ներքին անհանգստությունը: Ընդհանուր ապավորությունն ուժեղանում է Անուշի պատմվածքով պառավ դերվիշի անեծքի մասին, թե՛ «Դրա օրը լացով անց կենաս»:

Կատարվածի ազդեցությամբ փոխվում է նաև ազդիկների տրամադրությունը: Ուրախ ու թովոուն «Համբարձում յայլա»-ն դանդաղեցրած տեմպով, առանց նվազակցությունից և մեղմ հնչողությամբ տրված, խորունկ տխրության երանգ է ձևոր բերում:

Գործողությունն ավարտվում է Անուշի արիայից վերջված հատվածով (տես 51 էջի օրինակը), որն այստեղ նոր շրջապատման մեջ դրվելով դառնում է ավելի տխուր և ազդեցիկ:

ՄԵՐՈՂ զՈՐԾՈՂՈՒՅՈՒՆԸ ներկայացնում է դուռական հարսանիքի Բազմաթիվ ու բազմերանգ պարերի, խմբական ու մեներգային հատվածների միջոցով կոմպոզիտորը վարպետորեն ստեղծել է հարսանեկան ծեսի և ընդհանրապես ժողովրդական կենցաղի ցայտուն պատկերներ: Հայնորեն ներկայացված է նաև ժողովրդական հումորը: Այստեղ են օպերայի հերոսները՝ Անուշը, Սարոն և Մոսին: Սարոյի երկրորդ արիան («Ջիվան յար ջան»), որ օպերայի լավագույն հատվածներից մեկն է, հանդիսանում է նրա լիրիկական կերպարի հետագա խորացումը: Սրտառույ մելոդիայի միջոցով ընդգծվում է Սարոյի բուն սիրո ողջ խորությունը: Այս սիրերգի շնորհիվ հետագայում հասկանալի և պատճառարանված է դառնում, թե ինչու Սարոն, ողևորված Անուշի մի հայացքից, ինքնամոռացության մեջ ոտնակոխ է անում ազաթն ու անդավաճան ընկերությունը:

Օպերայի դրամատուրգիական զարգացման մեջ խիստ բեկում է առաջ բերում կոխի տեսարանը: Այն մոմենտից սկսած, երբ Անուշի հայացքով արբած Սարոն գետին է դար-

կում ընկերախաղի ելած Մոսիին, հարսանեկան ուրախությունը խափանվում է: Երգեցիկ խմբում կարծես պատահաբար, բայց ըստ էության շատ իմաստավորված կերպով հանդես է գալիս Անուշի դժբախտ սիրո թեման,

Poco sostenuto

Յէ - լա՛վ. յէ - լա՛վ. ա՛յ

Յէ - լա՛վ. Յէ - լա՛վ. Յէ. Յէ.

Յէ - լա՛վ. Յէ - լա՛վ. Յէ. Յէ. Յէ.

Յէ լա՛վ. Յէ - լա՛վ. Յէ. Յէ. Յէ.

որ ստանալով խոր դրամատիկական բնույթ, կանխագուշակում է ապագա արագեղիայի անխուսափելիությունը: Հուզված ամբոխի ծաղրական բացազանչություններն ավելի սրում են կոնֆլիկտը: Կատարվածի նկատմամբ ներկա գտնվողների վերաբերմունքը ձևավորվում է հետևյալ թեմայով,

Poco meno mosso

diminuendo

Ո՛ր մար ինչ Մա սի ջու՛ր ու նախա սի՛ճ

Ո՛ր մար ինչ Մա սի ջու՛ր ու նախա սի՛ճ

որը հանդես գալով որպես ազաթից բխող հասարակական պարսավանքի արտահայտություն, հետագայում կարևոր նշանակություն է ստանում Մոսիի արիայում (4-րդ գործողություն):

Իր եղբոր և սիրած տղայի ընդհարումը առանձնապես հուզում է Անուշին: Նա նախազգում է, որ միջազեպը լուրջ հետևանքներ է ունենալու:

Հերոսների ապրումներն արտահայտված են երգեցիկ խմբի ֆոնի վրա ընթացող կվարտետում: Ընդհանուր դրություն լարվածությունը չի թուլացնում նաև ֆինալային պարը, որն, ըստ էության, հնչում է ողբերգական երանգով:

Զորորդ գործողության մեջ տրված է դրամատիկական կոնֆլիկտի զարգացումն ու ծավալումը: Գործողությունն սկսվում է Մոսիի դրամատիկական արիայով: Արիայի նախանվագում միահյուսված են հիմնական բուրր թեմա-կերպարները, որոնց սաղմերը հանդես էին եկել նախորդ գործողություններում: Գրանք են՝ Անուշի դժբախտ սիրտ թեման, ազաթը խախտելու հետևանքով հալածված ու մեղակության դատապարտված Սարոյի հոգեմխիճակն արտահայտող թեման, ազաթի անխախտելիության և Մոսիի վրեժխնդրության համար հիմք հանդիսացող հասարակական պարսավանքի թեմաները: Անմիջականորեն կապվելով վերը նշված թեմա-կերպարների հետ, Մոսիի արիան հանդիսանում է ազաթի խախտման փորձի հետևանքով առաջացած՝ հոգեբանորեն բարդ իրադրության դրամատիկական ցայտուն արտահայտությունը: Հասարակական ամոթանքի թեման («Ամոթ քեզ Մոսի...») առանձնապես ընդգծված ձևով դրված է այս արիայի կուլմինացիայում:

Զորորդ գործողության կենտրոնական էպիզոդներից մեկը Անուշի և Սարոյի տեսարանն է: Գազազած Մոսին ժահվան սպառնալիքով արգելել է Անուշին սիրել: Անուշի համար ծանր է ապրել առանց իր սիրած էակի: Նրա երգը՝ «Օրոր»-ը համակված է խորունկ տխրությամբ: Որպես անցյալի երջանիկ օրերի վերհուշ, Սարոյի և Անուշի պարտիայում հանդես է գալիս

«Համբարձում յայլա»-ն՝ մեղմ, լիբիկական, տխուր երանգով: Սարոյի և Անուշի թեմաների միահյուսումն օրկեստրում կարծես դառնում է համատեղ փախուստի մասին նրանց որոշման երաժշտական արտահայտությունը: Մի պահ մոռացած իրենց վիճակը նրանք մտքով սշանում են դեպի ապագայի երջանկությունը՝ սիրտ վայելքը բնության գրկում: Գուետի երկրորդ մասը ուրախ բնույթ է ստանում, նույնիսկ հանդես են գալիս պարերգի ինտոնացիաներ:

Անուշի փախուստը Սարոյի հետ չուրատեսակ բողոքի նշանակություն է ստանում՝ ուղղված Մոսիի բռնակալության և ազաթի տիրապետության դեմ:


Սարոյի և Անուշի փախուստից հետո օրկեստրում խրոխտ կերպով հնչում է Մոսիի թեման: Մոսին արդեն կատարել է վրեժխնդրության առաջին ակտը, հրկիզել է Սարոյի դեզը: Փախուստն ու հրդեհը ընդհանուր իրարանցում են առաջացնում: Մավալուն մասսայական տեսարանից հետո, Մոսին հանդիսավոր երգում է տալիս գտնել Սարոյին և վերջ տալ նրա կյանքին:

Հինգերորդ գործողությունը հանդիսանում է ծավալված դրամատուրգիական զարգացման եզրափակումը՝ կոնֆլիկտի լուծումը: Գործողության մեջ կարևոր տեղ է գրավում Սարոյի ընդարձակ արիան («Բարձր սարեր»): Անուշին գյուղ վերադարձնելուց հետո Սարոն միայնակ թափառում է լեռներում՝

Օրհասն առաջին, գնդակն ետևից,

Հանգերը դժոխք, ընկերը դուշման:

Սարոյի հոգեկան ծանր վիճակն իր լիակատար արտահայտությունն է գտել վերոհիշյալ արիայում: Արդեն արիայի օրկեստրային նախանվագում հնչող նախորդ գործողություններում սաղմնավորված թեման, որպես տանջալից միայնակության արտահայտություն, ստեղծում է համապատասխան տրամադրություն:



Բուն արիան, որի մեջ Սարոն դիմելով սարերին ողբում է իր անեկանելի դրուձյունը, ցնցող տպավորություն է գործում: Սարոն հոգնել է աշխարհից, նա պատրաստ է վերջ տալ իր կյանքին, բայց այդ մտքից նրան ետ է պահում Անուշի սերը:

Այս ապրումներն արիայում ստացել են երաժշտական ճշմարտացի մարմնավորում: Սարոյի արիան բնորոշ է ժողովրդական բնույթի լայնաշունչ մեկոդիայով, խոր հուզականությամբ, զգացմունքի արտահայտության անկեղծությամբ և տնտիջականությամբ: Ծնորհիվ այդ հատկանիշների «Քարծր սարեր»-ը «Անուշ»-ի բաղմամբիվ հատվածների հետ միասին, լայն ժողովրդականություն է վայելում, դարձել է իսկական ժողովրդական երգ:

Գարան մտած Մոսիի հրացանի գնդակը վերջ է դնում Սարոյի երիտասարդ կյանքին:

Հերոսի մահն ու վաղաժամ կորուստը օպերայի երաժշտության մեջ արտացոլված է ընդարձակ պատկերով (Սարոյի մայրը և երգեցիկ խումբը), որն ավարտվում է լիահնչյուն, հանդիսավոր հրաժեշտի խմբերգով: Այս խմբերգը սովորական սգերգ չէ, այլ հնչում է որպես անդամաճան սիրո հիմն:

Օպերայի վերջին խոշոր տեսարանը ներկայացնում է Անուշի խելագարությունը և մահը: Դա օպերայի դրամատիկական դարգացման կուլմինացիան է: Բավական երկարատև այդ տեսարանում միակ գործող անձը փաստորեն Անուշն է: Խոր և ազդեցիկ դրամատիզմը արդյունք է Անուշի հոգեկան վիճակն արտահայտող երգերի ու ունչիատափվների մեծ հուզականության և սուր հակադրությունների: Հերոսուհու ներք-

նաշխարհը բացահայտելու, նրա հոգեկան ապրումների ամբողջ դիապազոնը՝ սիրած տղայի կորուստը ողբալուց սկսած մինչև խելագարություն և ապա ինքնասպանություն — պատկերելու գործում հեղինակը հանդես է բերել դրամատիկական մեծ վարպետություն:

Տեսարանը դրամատիկական մեծ զարգացում է պարունակում: Ինչպես ամբողջ օպերայում, այնպես էլ այստեղ, հոգեբանական բարդ դրությունների հիմնական արտահայտողը հրդեհ է: Նշանակալի է այն, որ Անուշի այս տեսարանի երգերն իրենց ինտոնացիայով օրդանապես կապված են օպերայի ընթացքում հանդես եկած Անուշի և Սարոյի մելոդիական ամբողջ սֆերայի հետ՝ բխելով այդ սֆերայի տարբերից և կամ միահյուսվելով դրանց: Այդ հանգամանքը որոշակիորեն նպաստում է տեսարանի դրամատիկական բնույթի խորացմանը, ավելի հիմնավորված է դարձնում հերոսուհու հոգեկան ապրումների արտահայտությունը:

Տեսարանն սկսվում է Սարոյի կորուստը ողբացող սրտաշարժ երգով («Ճա դառ, ետ, իգիթ»): Շարունակության ընթացքում երգի մեջ ներդրվում են Սարոյի սերենադայի ինտոնացիաները: Ինքնամոռացության մեջ ընկած Անուշին թվում է, թե իր յարը քնած է: Հաջորդ հատվածում նա ձայն է տալիս «ծաղկի հոտով արբած» և «անուշ մրափած» Սարոյին: Աղջիկների երգը նրան սթափեցնում է և դառն իրականությունն իր ամբողջ դաժանությամբ կանգնում է նրա աչքի առջև: Նա զգում է, թե «ինչպես հանկարծ աշխարհը փոխվեց, ինչպես դատարկվեց կյանքում ամեն բան»: Երկու-երեք հնչյունների վրա կատարվող շափազանց արտահայտիչ ռեչիտատիվը ցայտուն կերպով պատկերում է նրա վիճակի ողջ ողբերգականությունը: Հոգեկան ծայրահեղ լարվածությունը նրան հասցնում է խելագարության: Նրա երգերը, իրենց կտրուկ կերպով փոփոխվող կոնտրաստ արամադրություններով, ավելի ևս խորացնում են տեսարանի ազդեցությունը: Անուշն իր կյանքին վերջ է տալիս՝ նետելով իրեն Գեբեդ գետը:

* * *

Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի երաժշտությունը հագեցված է խոր ժողովրդականությունով և ռեալիզմով: Այն վառ գույներով պատկերում է հայ նահապետական գյուղի կյանքն ու կենցաղը իր բոլոր տիպական գծերով, դրական ու բացասական հատկանիշներով, հերոսների ռեալիստորեն գծազրույթ կերպարների միջոցով ներկայացնում է գյուղական ուղջ հասարակությունն իր կենդանի մարդկանցով:

Անդրադառնալով առանձին երաժշտական կերպարներին, պետք է ասել, որ օպերայում հատկապես լիակատար երաժշտական բնութագրություն են ստացել դիստավոր հերոսները՝ Անուշը, Սարոն և Մոսին: Սրանցից յուրաքանչյուրի կերպարը տրված է հուզական, կենդանի գծերով, զարգացման պրոցեսի մեջ, ամբողջական է և համողիչ:

Անուշի և Սարոյի փոխադարձ անդալաճան սերը հանդիսանում է նրանց կերպարների հիմնական հատկանիշը: Դա կազմում է օպերայի դրամատուրգիական առանցքը և երաժշտության մեջ տրված է զարգացման պրոցեսում՝ տարրեր էտապներում բնդունելով տարրեր երանգներ: Այսպես, օպերայի առաջին գործողության մեջ տրված է սիրո էքսպոզիցիան (առաջին պատկերում՝ Սարոյի սերենադան և Անուշի ու նրա մոր դիալոգը, երկրորդ պատկերում՝ «Ասում են ուտին» և սիրային տեսակցությունը): Հետագայում սիրո զգացմունքը ներթափանցվում է վշտով (չորրորդ գործողություն՝ Անուշի և Սարոյի տեսարանը): Դաժան իրականությունը խորտակում է նրանց երազանքը, սերը ողբերգական վախճան է ունենում (հինգերորդ գործողություն՝ Սարոյի արիան, Անուշի խելագարության տեսարանը): Անուշի և Սարոյի սիրո դրամատուրգիական այս գծի զարգացմանն են ենթարկված նրանց վեկալ համարներից բացի նաև «Ամալի տակից» և «Համբարձում յայլա» խմբերգերը, որոնք հանդես գալով որպես յուրատեսակ լեյամոտիվներ, հերոսների հոգեկան վիճակին համապա-

տասխան, տարրեր երանդներ են ընդունում՝ հեշելով մերթ պայծառ, մերթ վշտահույզ և մերթ ողբերգական:

Անուշի ամբողջ վոկալ պարտիան, որն իր մեջ պարունակում է մի շարք երգեր, արիաներ, ռեչիտատիվներ, իր հարուստ էմոցիոնալ տոնով ու բովանդակալիությունը ստեղծում է Անուշի անհատականացված, ճշմարտացի և ամբողջացած կերպարը: Այդ խոր լիրիկական կերպարի մեջ հիմնական գիծը պարզ բնավորությունն ու զգացմունքների մաքրությունն է:

Անուշի կերպարի մեջ շեշտված է նաև մի այլ գիծ. դա նախապաշարմունքն է բախտի գուշակման և ճակատագրի նկատմամբ, որը նահապետական դյուղի սահմանափակվածության և կնոջ իրավազուրկ վիճակի անմիջական արդյունքն է: Այդ բանը ռեալիստական խորությամբ տրված է Անուշի պատմվածքում (երկրորդ գործողության վիճակահանության տեսարան):

Զգացմունքների խորությամբ և անկեղծությամբ է բնորոշվում նաև Սարոյի կերպարը: Նրա մեջ լիրիկական շերտության և անմիջականության հետ միասին հանդես են գալիս արիություն, խիզախություն և հաստատակամություն: Սարոյի վոկալ պարտիայի և մասնավորապես տարրեր բնույթի նրա երեք արիաների (1-ին գործողություն՝ «Աղջի անաստված», 3-րդ գործողություն՝ «Ջիվան յար ջան» և 5-րդ գործողություն՝ «Քարծր սարեր») միջոցով հեղինակը Սարոյին բնութագրել է ոչ միայն որպես հոգեկան գեղեցիկ հատկությունների տեր, երազկոտ սիրահարի, այլև որպես իսկական իդիլի:

Այլ է Մոսիի կերպարը: Կոմպոզիտորի բնորոշմամբ նա ևս օժտված է հոգեկան դրական հատկություններով: Նա Սարոյի մտերիմ ընկերն է, նույնպիսի մի իգիթ, և նրա նկատմամբ հանդես է բերում նվիրվածություն, անկեղծ սեր և հավատարմություն (2-րդ գործողություն՝ Սարոյի և Մոսիի դուետը, 3-րդ գործողություն՝ մինչև կոնֆլիկտը): Սակայն իր կերպարի հիմնական գծերով Մոսին «հնոց աղաթի» մարմնավորումն է, նրա օրենքների անխախտելիության պահապանը: Նա ունի իդիլի արժանապատվության իր ուրույն հասկացողու-

Յյուներ և հանուն այդ արժանապատվության զգացմունքի պատրաստ է զոհել իր ցրոջ երջանկությունն ու ընկերոջ կյանքը: Հենց առաջին անգամ հանդես գալով՝ Մոսին ցույց է տրվում իր բնավորության այդ երկու կողմերով: Դեռևս Համբարձման տոնի տեսարանում, որտեղ Սարոն ու Մոսին որպես մտերիմ ընկերներ մասնակցում են ընդհանուր ուրախությունը, երբ նրանց առաջարկում են ընկերական ըմբռամարտի դուրս գալ, Մոսին իր կարճ, բայց ազդու ունչիտատիվով հանդես է գալիս որպես աղաթի անխախտելիության շատագույն: Նրա կերպարի այս դիժը հետագայում՝ շարունակ խորացվում է: Չորրորդ գործողության իր ունչիտատիվում և արիայում («Ամոթ քեզ Մոսի»), ինչպես և Անուշի հետ երգվող դուետում, վերավորված արժանապատվությունը վերականգնելու համար նա հանդես է գալիս իբրև մի կատաղի վրիժառու:

Անուշի, Սարոյի և Մոսիի փոխհարաբերությունը կազմում է օպերայի դրամատուրգիայի հիմքը: Օպերայում հանդես բերված մյուս գործող անձերը (Անուշի մայրը, Սարոյի մայրը, բոլոխան, Օհանը և ուրիշները), թեև փոքր տեղ են զբաղում, բայց նույնպես կարևոր նշանակություն ունեն օպերայի սյուժեի բացահայտման և դրամատուրգիական գծի ծավալման մեջ:

Առանձնապես կարևոր է գյուղական ժողովրդի կերպարը: Հանդես գալով ամբողջ օպերայի ընթացքում, ժողովուրդը ոչ միայն բացահայտում է գյուղական հասարակության կենցաղի տիպական գծերը, այլև ակտիվ վերաբերմունք է ցույց տալիս կատարվող դեպքերին և անմիջականորեն մասնակցում գործողությանը: Հատկապես նշանակալից են երկրորդ և երրորդ գործողությունների մասսայական տեսարանները (վիճակահանություն և գյուղական հարսանիք): Ժողովրդի կերպարն օպերայում ներկայացված է բազմաթիվ խմբերգերի և պարերի միջոցով: Վերն արդեն նշված է, թե «Ամպի տակից» և «Համբարձում յայլա» խմբերգերն ինչպիսի նշանակություն են ձևոք բերում օպերայի դրամատուրգիայի զարգացման մեջ: Պարերը դեր են կատարում նաև մյուս բոլոր խմբերգերը:

Մասնավորապես անդրադառնալով պարերին պետք է ասել, որ դրանց միջոցով կոմպոզիտորը ոչ միայն տալիս է ժողովրդի ընդհանուր բնութագիրը, այլև քացահայտում է առանձին բնորոշ կերպարներ (քյոխվայի պարը) կամ՝ դրամատիզացիայի ենթարկելով պարը, այն դարձնում է դրամատիկական սիտուացիայի բնութագրման միջոց (եբրորդ գործողության վերջին պարը՝ կոխից հետո):

«Անուշ» օպերայի մեջ համեմատաբար ավելի փոքր դեր է հատկացված օրկեստրին: Բացի նախերգանքից, պարերից և նկարագրական բնույթի մի քանի փոքր էպիզոդներից, օրկեստրը հիմնականում հանդես է գալիս նվազակցողի դերում: Սակայն այդ նվազակցությունը, չափազանց պարզ, բայց ընդհանուր առմամբ գունազեղ միջոցներով տրված, խոշոր չափով նպաստում է այս կամ այն արիայի, կամ խմբերգի գեղարվեստական բովանդակության դրսևորմանն ու խորացմանը: Ինչ վերաբերում է պարերին, ապա սրանք իրենց պարզ ու թափանցիկ գործիքավորմամբ հանդերձ, ավելի ևս գունազեղ են, օժտված են հուզական լայն դիապազոնով, մերթ նազանի, մերթ կրակոտ տեմպերամենտով և այս բանում որոշակի դեր է խաղում հատկապես օրկեստրը: Հարսանիքի տեսարանի պարերը զուրկ չեն նաև զուտ օրկեստրային միջոցներով ձևոք բերված սիմֆոնիկ զարգացման որոշ տարրերից:

«Անուշ»-ը իրավացիորեն համարվում է երգային օպերա և դա նրա առանձնահատկությունն է հանդիսանում: Հեղինակի համար արտահայտությունն գլխավոր միջոցը երգն է: Օպերայի դրամատիկական զարգացման բոլոր հիմնական հանգույցները և դրանց հետ կապված հերոսների հոգեբանական ապրումներն արտահայտված են երգերի միջոցով: Գեղեցիկ, պարզ, սրտառուչ և միևնույն ժամանակ բազմազան երգերը օպերայում շարունակ հաջորդում են միմյանց: «Անուշ»-ի մեկուրիական բազմազանությունը հիրավի թվում է անհատնելի: Նա իրոք սկզբից մինչև վերջը լավում է որպես սքանչելի մի երգ:

«Անուշ» օպերայում երգը հանդես է գալիս բազմազան ձևերով: Պարզ քառյակային երգերի հետ միասին այստեղ

հանդիպում ենք ինչպես արիողոյցի բնույթի, այնպես և ծավալուն արիայի բնույթի վրեժի ձևերի: Մեներգային համարների հետ մեկտեղ կոմպոզիտորը լայնորեն օգտագործել է երգեցիկ խումբը և բազմատեսակ վրեժի անսամբլներ, ընդ որում տարբեր զուգորդումներով հանդես են գալիս ինչպես մենակատարները միմյանց հետ, այնպես էլ նրանք երգեցիկ խմբի հետ: Այգպիսի զուգորդումների շնորհիվ որոշ պատկերներում ըստ էության առանձին, ամբողջացած երգերը միահյուսվելով միմյանց, վերաճում են խոշոր վրեժի տեսարանների: Այսպիսով բազմազան վրեժի ձևերի օգտագործման պայմաններում հեղինակը հիմնականում երգային միջոցներով արտահայտել է ոչ միայն առանձին հերոսների ապրումները, այլև կառուցել ամբողջական դրամատիկ գործողություններ:

«Անուշ»-ի վրեժի պարաիտուրայում երգի ակնհայտ գերակշռության հետ մեկտեղ, որոշակի տեղ է գրավում նաև ռեչիտատիվը: Գերազանցապես օգտագործված լինելով օպերայի դրամատիկ մոմենտներում, այդ ռեչիտատիվը հիմնված է ժողովրդական ոճի երգային ինտոնացիաների վրա, միշտ արտահայտել է և կարևոր կոմպոնենտ է հանդիսանում օպերայի դրամատուրգիական զարգացման մեջ: Օպերայում եղած մեղովի ռեչիտատիվների, ինչպես և ամբողջ վրեժի պարտիայի արտահայտչականությանը նպաստել է նաև այն, որ կոմպոզիտորը շափազանց ուշադիր վերաբերմունք է հանդես բերել խոսակցական լեզվի ինտոնացիոն առանձնահատկությունները երգով դրսևորելու նկատմամբ: Նա խստորեն հաշվի առել ու պահպանել է գրական տեքստի առոգանությունը, և դա անկասկած «Անուշ»-ի ռեչիտատիվների և մեղովիական ոճի կարևոր արժանիքներից մեկն է:

Առանձնապես կարևոր է այն, որ Ա. Տիգրանյանն իր հերոսների հարուստ ներքնաշխարհը և օպերայի դրամատուրգիան ամբողջապես քացահայտել է երաժշտական-արտահայտչական համեստ միջոցներով: Բազմազան ու հարուստ մեղովիական նյութը մշակված է հարմոնիկ ու պոլիֆոնիկ պարզ միջոցներով և տրված է գեղարվեստորեն ամբողջացած

ու գյուրըմբռնելի ձևերով: Հետո մնալով ինքնանպատակ գեղեցկացումից, հարմոնիկ ու պոլիֆոնիկ բարդություններից և օրկեստրի «էֆեկտավոր» ծանրաբեռնումից, հեղինակը հասել է իսկական գեղարվեստական պարզության:

«Անուշ» օպերայի կարևորագույն հատկանիշներից մեկն էլ նրա երաժշտական լեզվի ժողովրդայնությունն է: Դրա համար նպատավոր հիմք է հանդիսացել նախ և առաջ Հ. Թումանյանի պոեմի ժողովրդայնությունը: Իրական կյանքից վերցրած կերպարները Հ. Թումանյանն արտահայտել է ժողովրդական բանահյուսությունը հարազատ ձևերով: Պոեմի շատ հատվածներ գրված են ժողովրդական երգի ձևով, նրա ոճական առանձնահատկությունների ու լեզվի խորը իմացությունը: Տիգրանյանն իր օպերայի լեզուն ու ոճը միաձուլել է Թումանյանի պոեմի հետ: Այդ բանին նա հասել է հայկական ժողովրդական երաժշտության առանձնահատկությունների լիակատար տիրապետման և դրանց վարպետորեն օգտագործման շնորհիվ: Չնայած նրան, որ Տիգրանյանն իր օպերայում չի օգտագործել բուն ժողովրդական երգեր (բացի վերջին խմբագրության III գործ. մեջ մտցված պարերից), սակայն օպերայի ամբողջ երաժշտությունն իր ոճով խորապես ժողովրդական է և նրա բազմաթիվ հատվածներն ընկալվում են որպես իսկական ժողովրդական երգեր:

«Հյուսվելով ժողովրդական երգերի ուժեղ արդեցությունամբ,— գրում է հեղինակը,— իմ ստեղծագործությունների թեմաները համահնչյուն են դրանց: Այս հանդամանքը մի քանի հետադոտողների առիթ է տվել ենթադրելու, իբր թե «Անուշ» օպերայի մելոդիաները ամբողջությամբ փոխառնված են իմ կողմից: Սակայն այդ կարծիքը սխալ է: Ժողովրդական ոչ մի երգ ևս չեմ օգտագործել, փոխարինելով նրա տեքստը Թումանյանի տեքստով: Ծս միշտ դեմ եմ եղել ժողովրդական երգն իր հիմնական տեքստից զրկելուն»¹:

¹ SE* „Государственный театр оперы и балета Армении им. А. А. Спендиарова“ ժողովածուն, Искусство հրատարակչություն, Մոսկվա, 1939, էջ 64:

Հայկական օպերաներից և ոչ մեկն այնքան ժողովրդականացած երգեր չունի, որքան «Անուշ» օպերան: Զափազանցութուն չի լինի ասել, որ ժողովրդի կենցաղում այդ օպերայից երգվում են ոչ միայն առանձին երգեր, այլև հաճախ օպերան ամբողջությամբ՝ սկզբից մինչև վերջը:

«Անուշ»-ը խորապես ժողովրդական է ոչ միայն իր երաժրշտական լեզվով, այլև իր սոցիալական բովանդակությամբ ու դադափարական նպատակադրությամբ: Չնայած նրան, որ օպերայի երաժշտությունը հազնցված է անկեղծ ու ջերմաշունչ լիրիզմով, սակայն ըստ էության դա սոցիալ-կենցաղային օպերա-դրամա է, որի մեջ ունակիտորեն պատկերված են հայկական նախառևտրուցիոն գյուղի կյանքը, կենցաղն ու քարքերը, հողերանական խորությամբ ու վարպետորեն կերտված են հերոսների և ամբողջ գյուղական հասարակության կենդանի կերպարներն իրենց խորը մարդկային հույզերով ու զգացմունքներով, ներքին հակասություններով ու պայքարով:

Մեծ է Ա. Տիգրանյանի «Անուշ»-ի դերը հայկական օպերային ստեղծագործության զարգացման մեջ: Լինելով հայկական առաջին ժողովրդական ունակիտական օպերա-դրաման, նա խոշոր շափերով նպաստեց հայկական ազգային օպերայի ստեղծման համար սկզբունքային նշանակություն ունեցող մի ամբողջ շարք դժվարին հարցերի ճիշտ լուծմանը: Դա առաջին օպերան էր, որի մեջ ժողովրդական երաժշտության մեղրիկ, ինտոնացիոն և ռիթմական հարուստ տարրերի օգտագործման ճանապարհով լուծվեց ազգային սճի հարցը օպերային ստեղծագործության մեջ, ստեղծագործորեն յուրացվեցին կլասիկ օպերային-բեմական ծավալուն ձևերը (արիա, վոկալ տեսարան, անսամբլներ, մենակատարների և երգեցիկ խմբի դուգորդումներ և այլն), լուծվեց օպերային ունիտատիվի դժվարին՝ հարցը: Այս բուրբի շնորհիվ Ա. Տիգրանյանի «Անուշ»-ը հանդիսացավ կարևորագույն էտապ հայկական ազգային, ժողովրդական, ունակիտական օպերային ստեղծագործության զարգացման ճանապարհին: Հենց միայն այն, որ 40 տարուց ավելի «Անուշ»-ը ոչ միայն չի իջնում հայկական բեմից, այլև

հետզհետե բեմադրվում է Սովետական Միության այլ օպերային թատրոններում, վկայում է այդ օպերայի գեղարվեստական խոշոր արժեքն ու նրա շարունակ աճող ժողովրդականությունը: Լինելով հայկական ազգային օպերային կլասիկ արվեստի լավագույն նմուշներից մեկը, իր ժողովրդայնությամբ սովետահայ կոմպոզիտորների համար նոր օպերային ստեղծագործությունների կերտման բնազավառում նա մնում է որպես ճշմարիտ ուղեցույց:

Ա. Տիգրանյանի «Դավիթ բեկ»-ը պատմա-հերոսական օպերա է: Նրա սյուժեն վերցված է իրական պատմական դեպքերից: Օպերան արտացոլում է օտար բռնակալների դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի նշանակալից էջերից մեկը: Այդ պայքարի ընթացքում ժողովրդից ծնված հերոսների սիրազործությունները կազմում են օպերայի սյուժեի առանցքը: Ա. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայից հետո, «Դավիթ բեկ» օպերան երկրորդ խոշոր փորձն է հայկական պատմա-հերոսական օպերային ստեղծագործության զարգացման ու հարստացման ուղղությամբ:

Իր պետականությունը և ազգային անկախությունը կորցրած հայ ժողովուրդը XVIII դարում տառապում էր խանական Պարսկաստանի և օսմանական թյուրքիայի ծանր լծի տակ: Հողազրկության, անասնիկ հարկերի և հարստահարության հետևանքով ստեղծված տնտեսական ծանր կացությունը և ազգային ճնշումը աշխատավոր ժողովրդին մղում էին դեպի պայքար հանուն բռնակալության տապալման և ազգային ազատագրության: Նույն վիճակումն էին դտնվում նաև զրացի վրաց և ազրերեշանական ժողովուրդները: XVIII դարը հատկապես հարուստ է բախտակից անդրկովկասյան ժողովուրդների ազատագրական համատեղ պայքարի հերոսական դեպքերով:

XVIII դարի ազատագրական պայքարի փայլուն էջերից մեկը կապված է հմուտ զորավար Դավիթ բեկի օնվան հետ: Նա Կապանի (այժմ Ղափան) մելիքներից մեկի որդին էր, մանկության տարիներից ի վեր դտնվում էր Վրաստանում և

ծառայելով վրացական բանակում, աչքի էր ընկել իր քաջագործություններով: 1722 թվականին, երբ Ղարաբաղում և Սյունիքում նախապատրաստվում էր ժողովրդական ապստամբություն, հատուկ պատվիրակությունը նշանավոր գործիչ Սանփանոս Շահումյանի զլխավորությամբ դիմում է Դավիթ բեկին՝ խնդրելով նրան ղեկավարել ապստամբությունը: Նույն թվականի դարնանը Դավիթ բեկը փորձված օգնականների հետ միասին անցնում է Սյունիք, իր շուրջը համախմբելով հարյուրավոր զորականներ, սկսում է ապստամբությունը: Տեղական մելիքների ու զորքի օգնությամբ, համառ մարտերից հետո նրան հաջողվում է ազատագրել Սիսիանը, Ձանդեզուրը և Կապանը:

Ա. Տիգրանյանի «Դավիթ բեկ» օպերայի լիբրետոյի հիմքում դրված են պատմական այս դեպքերը: Ըստ հնարավորին լիակատար ընդգրկելով հարուստ նյութը, հեղինակը ստեղծել է քավական ընդարձակ լիբրետո: Հեղինակային հիմնական վարիանտում օպերան բաղկացած է հինգ գործողությունից, ութ պատկերով¹: Որպես զլխավոր գործող անձինք օպերայում հանդես են բերված Դավիթ բեկը, իշխան Ստեփանոս Շահումյանը, գյուղացի քաջ ապամիկ Սանթուրը, Շահումյանի հարսնացու Մելիքի աղջիկ Շուշանը, որոնք օպերայի հիմնական դրական հերոսներն են, Յաթալի խանը և ուրացող Մելիքը՝ օպերայի բացասական հերոսները: Վրացիները ներկայացված են հանձին Վաթիանդ թագավորի, պալատական վերնախավի, զինվորականների և ղեղեցիկուհի Բամարի, որը Դավիթ բեկի հարսնացուն է: Օպերայի գործող անձերի թվումն են նաև Դավիթ բեկի զինակիցներ Մխիթար սպարապետը և Բալանզուր իշխանը, խանի ներքինի Ահմեդը, գլխորդ և ուրիշները:

¹ «Դավիթ բեկ» օպերայի ժառին խոսելիս նկատի ունենք հեղինակային վարիանտը: Այլ Սպենդիարյանի անվան օպերային թատրոնում ներկայումս բեմադրվող վարիանտն զգալիորեն տարբերվում է հեղինակային այդ վարիանտից:

Հեղինակի արխիվում կա նաև լիբրետոյի մի նախնական վարիանտ, բաղկացած 4 գործողությունից (վեց պատկերով), որը կազմված է ըստ Բաֆֆու համանուն վեպի:

Օպերայի լիբրետոն կառուցված է հետևյալ ձևով. առաջին գործողությունն սկսվում է գուժանավոր Սանթուրի «Հոռովելով», որը բացահայտում է աշխատավոր գյուղացիության դառն վիճակը: Բեմը ներկայացնում է հրապարակ: Խանի համակրանքը շահելու և իր փառասիրական ձգտումներն իրականացնելու նպատակով ուրացող Մելիքը բերել է իր աղջկան՝ դեռատի Շուշանին՝ բռնի կերպով խանին կնության տալու: Շուշանը չի համաձայնվում, խնդրում է հորը փոխել իր որոշումը: Ժողովուրդը կարեկցում է նրան: Բայց հայրը անզրդվելի է: Բեմի ետևից լսվում է հայ գերիների խմբերգը: Բերում են գերիներին, որոնց թվումն է իշխան Շահումյանը: Ուրացող Մելիքը շարախնդում է գերի ընկած Շահումյանի վրա և արհամարհանքով հայանում, որ Շուշանը երբեք նրան կին չի լինի: Շահումյանը հուսադրում է սիրեցյալ աղջկան և խոստանում նրան ազատել: Շուշանին տանում են: Գերիներին փակում են բանտում: Աշուղի կերպարանքով ծագված Սանթուրը կազմակերպում է գերիների փախուստը:

Գալիս է Յաթալի խանն իր շքախմբով: Հայանի է դառնում գերիների փախուստը: Հայրացած խանը պատասխան է պահանջում ուրացող Մելիքից, որին հանձնված էր գերիների պահպանությունը: Մելիքը մեղմում է խանի զայրույթը, հիշեցնելով, որ ինքը կնության է բերել նրան իր աղջկան՝ բաղձիկներից ամենից գեղեցիկն ու նազելին: Նա հույս է հայտնում, որ Շահումյանն անպայման կգա և կրճնվի, որովհետև առանց Շուշանի կյանք չունի:

Ներս է գալիս Ահմեդը, որը Շուշանին ուղեկցում է դեպի խանի վրանը: Նա հուսադրում է Շուշանին: Ինքն էլ խանի ձեռքին տառապող մի հայ է, բայց հույս ունի ազատվել այդ դժոխքից: Ահմեդը հայանում է Շուշանին, որ գերիներն արդեն ազատվել են և Շահումյանը շուտով կգա նրան փրկելու: Առաջին գործողությունն ավարտվում է Շուշանի և խանի տեսարանով: Խանը համոզվելով, որ Շուշանը չի հնազանդվելու, հրամայում է քանա նետել նրան:

Եկլուրդ գործողությունը ներկայացնում է Վախթանգ Թա-


դավորի պալատը, որտեղ հանդես է տեղի ունենում զենքի հաջողության առթիվ: Ներկա գտնվողները փառաբանում են Դավիթ բեկի նոր հաղթանակը: Գեղեցկուհի Քամարը սպասումից տրտմած, իր սերն է երգում Դավիթ բեկի նկատմամբ:

Ենիորներն ավետում են Դավիթ բեկի և նրա զինակիցների գալուստը: Վախժանդ թագավորը և պալատական հյուրերը ողջունում են հերոսներին: Սկսվում է տոնախմբությունը, կենացներ, պարեր:

Գալիս են Շահումյանը և Հայաստանից եկած մյուս պատգամավորները, որոնք դիմում են Դավիթ բեկին և խնդրում առաջնորդել հայ ապստամբ ժողովրդական զորքին ընդդեմ օտար բռնակալների: Դավիթ բեկը դիմում է Վախժանդին, որպեսզի նա թույլ տա իրեն մեկնել Հայաստան: Վախժանգն իր համաձայնությունն է տալիս: Նա զդուշացնում է Դավիթ բեկին սպասվող դժվարությունների մասին և հաջողություն է մաղթում նրան:

Գործողությունն ավարտվում է Դավիթ բեկի և Քամարի տեսարանով: Քամարը շի ցանկանում անջատվել իր սիրածից և խնդրում է թույլ տալ ուղեկցել նրան: Դավիթը Քամարին համոզում է մնալ և սպասել իր վերադարձին: Քամարը հաջողություն է մաղթում իր սիրեցյալ հերոսին:

Երբորդ, չորբորդ և հինգերորդ գործողությունները բաղկացած են երկուական պատկերներից: Երբորդ գործողության առաջին պատկերում քեմը ներկայացնում է Տաթևի վանքի բակը: Լուսաբաց է: Լսվում է մեղմ զանգահարություն: Բուկում հավաքված հասարակության մեջ, որտեղ կան նաև զինված աղամարդիկ, շշուկ և անհանգստություն է տիրում՝ կասկած սպասվող մարտի հետ: Լսվում է Ասնթուրի երգը: Նա որպես աշուղ, սազն առած, փառաբանում է Դավիթ բեկի քաջագործությունները, հայտնում է նրա հրամանը՝ պաշտպանվել և պատրաստ լինել վճռական մարտերին: Դավիթ բեկի հրամանը ոգևորում է ժողովրդին: Բոլորը միահամուռ սպահանջում են հնչեցնել Տաթևի զանգը՝ որպես ապստամբության ազդանշան: Զանգահարությունն արգելելու նպատակով գլխի



Մասնաշաղկան տեսարան Հրապարակի և Արևի օպերայի շքեղ պարտեզի ժամկետը



միջամտութիւնն ավելի է բորբոքում ժողովրդին: Լսվում է զանգի հզոր ձայնը և նրա զողանջները տարածվելով հեռուները, զինված գյուղացիներին հրապարակ են հավաքում: Զանգի հնչյուններին միախառնվում է Շահումյանի գալուստն ավետող շեփորների ձայնը: Ընդհանուր ոգևորության պայմաններում Շահումյանը հաղորդում է Դավիթ բեկի մարտական գործողութիւնների ծրագիրը, նրա և Սանթուրի ղեկավարութեամբ զինված գյուղացիները շարքեր են կազմում և սկսվում է մարտական երթը:

Առաջին մարտն ավարտվում է Դավիթ բեկի և ապստամբ գյուղացիների հաղթանակով: Տաթևն ազատագրվում է խանի բռնակալութիւնից: Պատկերի վերջում բեմում հանդես է գալիս Դավիթ բեկը, որին զորքն ու ժողովուրդը դիմավորում են ցրնծութեամբ: Նա կոչ է անում շարունակել պայքարը՝ թշնամուն ժինչև վերջ հետապնդելու և լիովին ջախջախելու համար:

Երկրորդ պատկերը վարդավառի երեկոն է: Նոր տարած հաղթության շնորհիվ ժողովրդի տրամադրութիւնն առանձնապես քարձք է: Ընդհանուր ուրախութիւն են առաջ բերում պարերն ու հրավառութիւնը: Պատկերի էական մասն ուրացող Մելիքի տեսարանն է: Մելիքը, որ մարտի ժամանակ ղեկավարում էր խանի զորքը, գերի է ընկել: Ժողովուրդը պահանջում է զլխատել դավաճանին: Փրկութեան հույսը կորցրած Մելիքը հանկարծակի հարձակվում է Դավիթ բեկի վրա՝ փորձելով դաշունահար անել նրան: Անսպասելի հարվածից Դավիթ բեկին պաշտպանում են նրա զինակիցները: Ժողովրդի միահամուռ հավանութեամբ ուրացողին զահավիժում են Տաթևի ժայռերից: Դավիթ բեկը երգվում է մինչև արյան վերջին կաթիլը կուվել հայրենիքի ազատութեան համար: Ժողովուրդը միանում է այդ երգմանը:

Զորքող գործողութեան առաջին պատկերը ներկայացնում է Ֆաթալի խանի զորքերի նահանջը: Դավիթ բեկի սիրած աղջիկը՝ Թամարը՝ Վրաստանից եկել է Սյունիք՝ մարտերի վտանգավոր պահին հավատարիմ ընկերոջ հետ լինելու: Նա մուրովել է լեռներում և իր ուղեկիցների հետ գերի ընկել խա-

նի նահանջող զորքին: Խանը խմանալով, որ Թամարը Դավիթ բեկի հարսնացուն է, պատրաստվում է նրան ուղարկել իր հարեմը: Սպասվող վտանգից Թամարին ազատում է Սանթուրը, որը դերվիշի կերպարանքով ծպտված եկել է այդտեղ հետախուզության: Դերվիշը խանին համոզում է Թամարի պատճառով չգրգռել վրացական թաղավորին:

Երկրորդ պատկերում տեղի է ունենում Շահումյանի հանդիպումը Շուշանի հետ, որին խանը բանտ էր նետել: Նախօրոք որոշված ծրագրի համաձայն բերդի վրա Դավիթ բեկի հարձակման համար իբրև ազդանշան խանի պալատը պետք է այրվի: Շուշանը հանձն է առնում կատարել այդ հավատարիմ Ահմեդի օգնությունը:

Վերջին գործողությունը Զեռ բերդի պաշարումն ու գրավումն է: Առաջին պատկերում բեմը ներկայացնում է կովի դաշտը: Զորքը հանդատանում է՝ առավոտյան կովի դուրս գալու: Վճռական մարտից առաջ, Դավիթ բեկն իր զորավարների հետ խորհրդակցում է անելիքների մասին: Զորավարների մեջ են նրա հավատարիմ զինակիցներ Բայանդուր իշխանը և Մխիթար սպարապետը: Այստեղ է նաև Ռուսաստանից եկած Իվանովը, որը թեղանոթաձիգների հրամանատարն է: Հետախուզությունից վերադարձած Սանթուրը տեղեկացնում է թշնամու զորքի վիճակի և խանի պալատն այրելու ծրագրի մասին: Նա հայտնում է նաև, որ Թամարը Վրաստանից եկել և խանին դերի է ընկել: Բայանդուր իշխանը պատրաստակամություն է հայտնում ազատել Թամարին և խնդրում է մեկ օրով հետաձգել հարձակումը: Դավիթ բեկի վճռականությունն անդրդվելի է: Նա հրամայում է նշանակված ժամին սկսել հարձակումը:

Լույսը քայվում է: Հնչում է փողերի մարտակոչը: Զինված հոծ բազմությունը Դավիթ բեկի հրամանատարությունը մարտի է նետվում: Բեմական զանազան միջոցներով պատկերվում է թե՛ մարտի ընթացքը: Մարտում ծանր վիրավորվում է քաջ ռազմիկ Սանթուրը: Նրա մահը խոր ազդեցություն է գործում բոլորի վրա: Զորականները փառաբանում են հայրենիքի ազատագրության համար զոհված հերոսին:

Սրկորոզ պատկերում Շուշանն իրականացնում է խանի պալատն այրելու ծրագիրը: Դա նրան հաջողվում է իր երգով ու նվագով խանին քնեցնելու շնորհիվ: Բոցի լեզուները խավարը ճեղքում և երկինք են բարձրանում: Դավիթ բեկի ղեկավարությամբ հայկական զորքը գրոհում է Ջուս բերդի վրա: Բերդի ներսում սկսվում է իրարանցում: Սթափված խանը փորձում է վրեժ լուծել՝ սպանել Շուշանին, որը Թամարի և Ահմեդի հետ դուրս է վազում պալատից: Դավիթ բեկի զորականները վրա հասնելով կասեցնում են այդ և զինաթափ անում խանին: Հնչում է հաղթական հիմներ: Հրապարակում հավաքված ժողովուրդը ցնծում է տարած հաղթության առթիվ և փառաբանում Դավիթ բեկին:

Դեպքերով և գործողություններով հարուստ այսպիսի ծավալուն լիրբետոն կոմպոզիտորից պետք է պահանջեր ստեղծագործական թափ, հարուստ ֆանտազիա և դրամատուրգիական աչքի ընկնող կարողություն: Ա. Տիգրանյանին հաջողվել է կերտել մի ամբողջ շարք ցայտուն և խոր տպավորվող կերպարներ, որոնք օպերայի երաժշտական դրամատուրգիայի կրողները հանդիսանալով, իրենց գործողություններով և միմյանց հետ ունեցած փոխհարաբերությամբ բացահայտում են դրամատիկական գործողության ընթացքը:

Ինչպես իր առաջին «Անուշ» օպերայում, այնպես էլ այստեղ, կերպարների երաժշտական բնութագրման մեջ կարևոր նշանակություն ունի երգը: «Դավիթ բեկ» օպերան ևս հարուստ է արիաներով, մեներգերով, խմբերգերով և վոկալ անսամբլներով:

Օպերայի գլխավոր հերոս Դավիթ բեկի կերպարը բացահայտված է ինչպես իր արիաներում, այնպես էլ մյուս հերոսների և ժողովրդի վոկալ պարտիաներում, ուր Դավիթ բեկը և նրա գործը ուշադրության կենտրոնում են գտնվում: Այսպես, առաջին գործողության խմբերգում, որին մասնակցում են Շուշանը, Ծահումյանը, հայ գերիները և ժողովուրդը, Դավիթ բեկը ներկայացվում է որպես քաջ զորավար, որին ժողովուրդը իր միահամուռ կամքով դարձնում է ազատագրական շարժման

ղեկավար Այս խմբերգը պոլիֆոնիկ հնարանքներով զարգանալով, ստանում է մարտակոչի ինտոնացիաներ, որոնք հետագա գործողություններում ևս հանդես գալով բնորոշում են Դավիթ բեկի հերոսականությունը: Երկրորդ գործողության մեջ, վրացական արքունիքում, երբ մարտից հաղթանակով վերադառնում է Դավիթ բեկը, նրան դիմավորողների խմբերգը նույնպես Դավիթ բեկին բնորոշում է որպես քաջ զորավար և հերոս: Այս խմբերգը հանդիսավոր բնույթ ունի: Դրան առանձնապես նպաստում է ֆուգատոյի ձևը, որի դեպքում խմբի առանձին ձայները հաջորդաբար մուտք գործելով, զարգացնում են միևնույն հանդիսավոր թեման:

Maestoso

Tempo f

Փա՛ն՛՛մ մե՛՛հ ի՛ - իս - ելի՛, փա՛ն՛՛մ

դս - աս - փա՛ռ Դա՛վ - իթ, մե՛՛հ փա՛ն՛՛մ

Դավիթ բեկի հերոսական կերպարի բնորոշումը տրված է նաև Շահումյանի, Սանթուրի և Թամարի երգերում: Այսպես, օրինակ, Շահումյանը 3-րդ գործողության մեջ, քայլերգային բնույթի իր երգում բացահայտում է Դավիթ բեկի ռազմական

գործողությունների ծրագիրը: Այս երգը ևս զարգանալով վերաճում է ժողովրդի մարտական խմբերդին: Դավիթ բեկի հերոսականության և մարտական փառքի գովերգությանն են նվիրված նաև Սանթուրի և Թամարի երգերի շատ հատվածներ, ուր ցուցադրվում է միաժամանակ նրանց նվիրվածությունը սիրված հերոսին:

Դավիթ բեկի առաջին արիան (2-րդ գործողություն) հանդիսանում է նրա հայրենասիրական զգացմունքների արտահայտությունը: Նա չերմարեն սիրում է իր շքնազ հայրենիքը, նրան հուզում է օտար բռնակալների լծի տակ հեծող ժողովրդի վիճակը: Այս ապրումներն են դրսևորված արիայի առաջին մասում, որը լիրիկական շերտ շնչով և խոր զգացմունքով է զրված: Արիան սկսվում է հետևյալ ֆրագալով:

Մոտո

Moderato

Թ. իմ լից Եսդ

պ

սի - տն հոյ - ռն էի

pp

Արիան ավարտվում է մարտական բնույթի ինտոնացիաներով, որոնք արտահայտում են նրա ցասումը բռնակալների

դեմ և պատրաստակամությունը՝ նվիրվել հայրենիքի ազատագրության գործին:

Այս նույն զգացմունքներն իրենց արտահայտությունն են գտել Դավիթ բեկի երկրորդ արիայում (3-րդ գործողության առաջին պատկեր): Նա արդեն եկել է հայրենի Սյունիք: Հարազատ ժողովրդի ծանր վիճակը, որին Դավիթ բեկն այժմ տկանատես է, անմիջական ազդեցություն է գործում նրա վրա: Այս գործողության ծավալուն արիայի մեջ ավելի խոր ու լայն կերպով դրսևորված են թե՛ նրա հայրենասիրական անկեղծ զգացմունքը, որն ուղեկցվում է տխուր մանկության վերհուշով և թե՛ ազատագրության վեհ գործի համար նրա վճռահանությունը: Արիան ավարտվում է հանդիսավոր երգումով:

Դավիթ բեկի կերպարը լրացնում են նրա վոկալ պարտիայի մի շարք այլ հատվածներ, ինչպես, օրինակ, Քամարի հետ տեսարանը (2-րդ գործողություն), ուրացող Մելիքի տեսարանը (3-րդ գործողություն) և հատկապես նրա վերջին արիան (5-րդ գործողության առաջին պատկեր), որն արտահայտում է նրա խոհերն ու զգացմունքները վճռական մարտից առաջ: Այս հատվածներում երաժշտական-արտահայտչական տարրեր միջոցներով դրսևորված են հերոսի կերպարի տարրեր կողմերը:

Օպերայի առավել հաջողված կերպարներից մեկը Սանթուրի կերպարն է, որը բացահայտվում է առաջին և երրորդ գործողություններում նրա երգերի և հինգերորդ գործողության առաջին պատկերում ռազմիկների խմբերգի միջոցով:

Սանթուրը աշխատավոր դյուղացի-հայրենասերի ցայտուն տիպ է, օժտված հոգեկան բարձր հատկություններով: Նրա մեջ խոր լիրիզմը զուգորդված է հերոսականության հետ: Նա ժողովրդի խորքից է դուրս եկել և անդամաճան կերպով սիրում է իր հայրենիքն ու ժողովուրդը, ողջ հոգով նվիրված է ժողովրդի գործին: Միևնույն ժամանակ նա քաջ է, կենսուրախ, կատակախոս, շնորհալի երգում ու նվագում է և սիրված է բոլորի կողմից: Սանթուրի մարդկային լավագույն դժբերքը լիակատար կերպով դրսևորվում են ազատագրական պայ-

բարում, ուր նա հանդես է բերում խիզախութիւն, հնարամտութիւն ու նվիրվածութիւն և դառնում իսկահան ժողովրդական հերոս:

Սանթուրի «Հոռովել»-ը, որ օպերայի արժեքավոր հատվածներից մեկն է, ժողովրդական ոճով և լայն շնչով գրված ծավալուն մի երգ է: Որպես նախատիպ ունենալով հայ ժողովրդական աշխատանքային լավագույն երգերը՝ հոռովելները, այս երգը ես ներթափանցված է աշխատավոր ժողովրդի շյտոն վիճակն արտահայտող մտքերով ու զգացմունքներով:

Խան ու մելիք հարկ կուզեն,
Թե որ շտանք կտանջեն,
Մենք աշխատենք օր-գիշեր,
Մենք էլ մնանք պարտատե՛ր:

Խոր հուզականութիւնն ու զգացմունքի անմիջականութիւնը և համակող շերմութիւնը «Հոռովել»-ի մելոդիայի բնորոշ հատկանիշներն են: Ժողովրդական երգերի լաղերում գրգռված և նրանց ինտոնացիոն ոճը հարազատորեն վերարտադրելով, այս երգն աչքի է բնկնում իր մելոդիկ զեղեցկութեամբ: «Հոռովել»-ը պարզ ու միաձույլ կառուցվածք ունի: Նրա լայն ու շափազանց երգային մելոդիան գրված է մեկ շնչով: Անբռնազրոս կերպով հոսելով այդ մելոդիան հասնում է արտահայտիչ կուլմինացիայի հետևյալ ֆրազայում.

Andantino

poco rit.

ա - ր ա ն է՛, ա - ր ա ն է՛, ա - ր ա ն է՛ և - զ ա զ ա ն է՛.

poco rit.



Լինելով Սանթուրի զգացմունքների և միաժամանակ ժողովրդի դառն վիճակի արտահայտությունը, «Հոռովել»-ը Սանթուրին բնութագրում է որպես աշխատավոր ժողովրդի կյանքով ապրող, նրա հարազատ զավակը:

Սանթուրի կերպարի լիրիկական կողմը լրացնում է նրա «Սիրերգ»-ը, որ նա կատարում է հայ գերիներին ազատելու տեսարանում՝ որպես կույր աշուղ ծպտված հանդես գալու միջոցին:

Սանթուրի կերպարը բնորոշող կարևոր հատվածներից մեկն էլ երրորդ գործողության նրա երգն է («Աշուղ եմ ես»): Այստեղ ևս Սանթուրը բնութագրվում է որպես հարազատ ժողովրդի լավագույն մտքերի ու զգացմունքների կրողն ու արտահայտիչը: Ընչպես ամեն մի աշխատավոր գյուղացու, նրան էլ հուզում է ոչ միայն ժողովրդի ծանր վիճակը, այլև ազատագրության տենչը, բռնակալության դեմ մղվող պայքարը, ժողովրդի զավակների հերոսությունը: Տողորված գրանով՝ Սանթուրը, էպիկական հերոսների քաջագործությունները գովերգող ժողովրդական երգիչների նման, երգում է Դավիթ բեկի սխրագործությունները: Նրա երգն այստեղ պատմողական բնույթի է: Թեչխատիվային նախաբանը՝

Աշուղ եմ ես, ահանջ արեք,

Աշուղ Սյունյաց լեռների,

Ահանջ արեք սլառմեմ ես ձեզ

Վեհ գործերը քաջ Դավթի:

Վեհ ու հանդիսավոր է, իսկ բուն երգը հնչում է որպես բարձր տրամագրությամբ համակված կենսուրախ մի պատմվածք:

Երգի պատմողական բնույթը պայմանավորված է ոչ միայն բովանդակությամբ, այլև աշուղական պատմելիաձևին բնորոշ կառուցվածքով, որին լիովին համապատասխանում են թև' գործիքային նախանվագն ու նվագակցությունը, որ սաղի նվագի նմանողություն ունեն, և թև' պատմվածքի յուրաքանչյուր առդին հետևող «Էն լի լի» կրկնակները:

Moderato

Գա - ղի ր լ - կը իր Էս - լի - րով. լի լի. լի լի. լի լի. լի լի.

լի լի. ինչ րով լի լի. ինչ րով ինչ

Սանթուրի երգի բովանդակությունը, արտահայտված անկեղծ զգացմունքով, անմիջականորեն հաղորդվում է ունկընդիրներին, հավաքված ժողովուրդը համակվում է առույգ տրամադրությամբ և ձայնակցում է երգին: Այս երգով Սանթուրը հանդես է գալիս որպես ազատագրական պայքարի կազմակերպիչներից մեկը:

Օպիերայի մի շարք այլ հատվածներում, ուր մասնակցում է Սանթուրը, բացահայտվում են նրա կերպարի այլ կողմերն էլ: Այսպես, օրինակ, շորթորդ գործողության առաջին պատ-

կերում, երբ նա դերվիշի կերպարանքով ծագաված հետախուզության է գնացել խանի զորքերի մեջ, հնարամտությամբ կարողանում է հեռու պահել վերահաս վտանգից գերի ընկած Ռամարին: Երաժշտական բնութագրության տեսակետից այստեղ հետաքրքրական է հայկական և պարսկական ինտոնացիաների զուգորդությունը Սանթուրի պարտիայում. հայկական ինտոնացիաներն այն դեպքում, երբ նա շարախնդում է խանի վրա և պարսկական ինտոնացիաները՝ երբ նա հանդես է գալիս որպես խանի խորհրդատու:

Սանթուրի կերպարը լիովին ամբողջանում է հինգերորդ դործողության առաջին պատկերում, ուր նա հայրենիքի ազատագրության համար մղած մարտերում ընկնում է հերոսի մահով: Այստեղ հասկապես ընդգծվում է Սանթուրի կերպարի հերոսականությունը: Դա արտահայտված է հենց Սանթուրի պարտիայում, երբ նա մահամերձ վիճակում իր երզն ավարտում է «Հայրենիք, քեզ փառք» խոսքերով: Դա է արտահայտում նաև Դավիթ բեկի՝ զորավարի խոսքերն, ուղղված մեննոդ ռազմիկին («Սանթուր, Սանթուր, դու քաջ իմ հերոս»): Կերպարի հերոսականությունն առավել ցայտունությամբ բնութագրվում է ռազմիկների խմբերգի միջոցով («Դու վեհ արծիվ»): Գուսանական «Ի ննջմանն արքայական» երգի հիման վրա գրված այդ խմբերգն իր ընդգծված մաժոր հնչողությամբ

Andante maestoso

The musical score is for the piece "Andante maestoso". It features four vocal parts: Soprano (S), Alto (A), Tenor (T), and Bass (B), along with a piano accompaniment. The lyrics are in Armenian and are: "Այ - սր", "Խա - վիճ", "մեք սր - ան". The score is written in a key signature of one sharp (F#) and a 2/4 time signature. The tempo and mood are indicated as "Andante maestoso".

The image shows a musical score for a song. It consists of four systems of music. Each system has a vocal line (treble clef) and a piano accompaniment (grand staff). The lyrics are written in Armenian. The first system has the lyrics "ան-ձոճ" and "հե-". The second system has the lyrics "հե-րոս" and "հե-րոս". The third system has the lyrics "հե-րոս" and "հե-րոս". The fourth system has the lyrics "հե-րոս" and "հե-րոս".

և միաժամանակ խիստ ու զուսպ խնտոնացիաներով ընկալ-
 ղում է ոչ միայն որպես սոսկ մահերգ, այլև որպես քաջ հե-
 րոսին նվիրված վեհաշուք մի ձոներգ:

Օպերայի հրաժշտական առատ նյութի սահմաններում
 նրա մյուս հերոսներն էլ, թե՛ դրական և թե՛ բացասական,
 ստացել են իրենց այս կամ այն շափով ընդարձակ բնութա-
 գրությունը: Մի կողմ թողնելով առանձին կերպարների հրա-
 ժշտական բնութագրության վերլուծությունը, ցույց տանք այդ
 կերպարներից մի քանիսի բնորոշ գծերը և դրանց հրաժշտա-
 կան մարմնավորումը:

Իշխան Ստեփանոս Շահումյանը, որ օպերայում դառնում է Գավիթ բեկի մերձավոր ղինակիցը, հեղինակի մտահոգացմամբ ներկայացված է որպես ազատագրական շարժման ղեկավարներից մեկը: Նա ևս առգորված է հայրենիքի ազատագրության զազափարով և այդ գործում հանդես է բերում մեծ նախաձեռնություն, ոգևորություն և խիզախություն: Այստեղից են բխում Շահումյանի վստիչ պարտիայում մեկուղիկ դժի ներքին շարվածությունն ու թափը և արտահայտման անմիջականությունը, երբ նա մյուս հայ պատգամավորների հետ միասին գիմում է Գավիթ բեկին՝ խնդրելով ղեկավարել ազատագրական պայքարը: Գրանով են պայմանավորված Շահումյանի ունչիտատիվ ֆրազաների վճռական ինտոնացիաները օպերայի այլ մասերում: Այսպես, օրինակ, երրորդ գործողություն մեջ, երբ Շահումյանը Գավիթ բեկի ծրագիրը բացահայտելով՝ տաթեցիներին մարտի է կոչում, ունչիտատիվային սկզբունքով կառուցված նրա երգը, իր երաժշտական պարզ լեզվի և քայլերգային տեղիվ ինտոնացիաների շնորհիվ, անմիջական արձագանք է դառնում երգեցիկ խմբի՝ տաթեցիների մեջ: Սակեղծվում է մարտական բարձր տրամադրություն, որն իր արտահայտությունն է գտել երգեցիկ խմբի և օրկեստրի միջոցներով ղինամիկ հաղեցվածությամբ կառուցված ընդարձակ պատկերում: Շահումյանի հայրենասիրական ոգևորությունն ու խիզախությունը նույն ձևով արտահայտված են նաև չորրորդ գործողության 2-րդ պատկերի ունչիտատիվում, երբ նա Զևու բերդում քանտարիված Շուշանի օղնությունը նախապարաստում է խանի պալատի հրդեհը: Այսպիսով, ունչիտատիվային քնույթի մարտական երգը դրսևորում է Շահումյանի ամբողջական կերպարը:

Օպերայում ջերմ և հյուսիս երաժշտական նկարագիր են ստացել նաև կանանց կերպարները — Թամարը՝ երկրորդ գործողության «Բալլադ»-ում («Սեղ է հնում մի աղջիկ») և չորրորդ գործողության «Կավատինա»-ում, որը վերաճում է լիբիկական հոգեթով տեսարանի, և Շուշանը՝ առաջին գործողության վերջում, չորրորդ գործողության երկրորդ պատկերում և հինգև-

բորոգ գործողութեան առաջին պատկերում: Կանացի այս կերպարները միմյանցից տարբեր են իրենց երաժշտական բնութագրութեամբ: Եթե Թամարի կերպարում ավելի ընդդժված է բնքուշ կանացիությունը և սիրային զգացմունքը, ապա Շուշանին տրված են հերոսականության գծեր, հաստատակամություն և անձնազոհություն. նրա կերպարում ավելի ընդդժված է հայրենասիրական զգացմունքը: Երկու կերպարին էլ օպերայում բավականաչափ զարդացում է տրված, Այսպես, օրինակ, Թամարն իր առաջին ելույթում ներկայացվում է որպես անկեղծորեն սիրող մի պարզ ու միամիտ աղջիկ: Հետագայում, երբ նա տնային անդորրը թողած, կյանքը վտանգի ենթարկելով եկել է Սյունիք, նրա զգացմունքն ավելի խորն է: Թամարը վերապրել է սիրած հերոսի կյանքին սպառնացող վտանգները և երկար անշատումը: Այժմ նրա զգացմունքներն արտահայտված են ոչ թե սոսկ մի երգով, այլ լիբրիկական մի ամբողջ տեսարանով, որտեղ նրա վոկալ պարտիայում հանդես են գալիս թե՛ խաղաղ օրերի սիրային երջանկության վերհուշի և թե՛ Գավիթ բեկի հերոսական կերպարի հետ կապված ինտոնացիաները:

Շուշանն ընդհանրապես բազմակողմանի է ներկայացված: Եթե Շահումյանի նկատմամբ նրա սերը օպերայում կոնկրետ արտահայտություն չի գտել, ապա նրա բուն ատելությունը խանի և արդարացի գայրույթը հոր դավաճանության նկատմամբ, ինչպես և վերջինիս արժանի պատժի կապակցությամբ նրա ապրումները՝ տրված ընդարձակ վոկալ պարտիայում, ուրվագծում են մի բազմակողմանի երաժշտական կերպար: Չորրորդ և հինգերորդ գործողությունների երկրորդ պատկերները, որոնք համարյա ամբողջությամբ նվիրված են Շուշանին, զգալի շափով հարստացնում են նրա կերպարի երաժշտական բնութագրությունը: Չորրորդ գործողության մեջ, բանտում մեկուսացված, նրա հոգեվիճակն ավելի բարդ է, ապրումներն՝ ավելի խոր: Հեղինակն այստեղ ստեղծել է ծավալուն տեսարան, որի մեջ մտցված բնության պատկերների (գիշեր, փոթորիկ) նկարագիրը, խանի զորքերի՝ բեմի հան-

վից լավող երգեցողությունը, սիրացող Մելիքի մահապատժի վերաբերյալ լուրը և վերջապես Շահումյանի հետ տեսակցությունը — այս բոլորն արտահայտում են Շուշանի ապրումների բազմազանությունն ու խորությունը: Գրան համապատասխան տեսարանի երաժշտական նյութը հարուստ է և դրամատիկական որոշ հագեցվածություն ունի: Իր խոր արամազրությունը և երաժշտական պարզ ձևով աչքի է ընկնում Շուշանի արիողոն («Հալածանք, տառապանք»):

Andante

Լու - լա - ծան, ու - ու -

ղան, շա - հա - րուն ան - վեղ.

Վերջին դործողության մեջ Շուշանի կերպարի երաժշտական բնութագրությունը լիովին ամբողջանում է: Պալատի հրդեհումը նախապատրաստելու նպատակով Շուշանն իր երգով գրավում և քնեցնում է խանին: Նրա երգը («Գիշեր է մութ») նվիրված կռվի դաշտում իր սիրուհուն տենչացող մի հերոսի, շարունակության մեջ կոնկրետանալով դառնում է իր՝ Շուշանի ապրումների արտահայտությունը: Նրկրորդ կեսում «Ախ իմ հերոս, իմ անգին» խոսքերի հետ երգը մեղադրիկ դարգա-

ցում է ստանում, դառնում է ավելի անհանգիստ և հուզում-
նալից՝ հասնելով կուլմինացիայի:

Moderato

Երգի վերջում մեծ արտահայտչությամբ է հնչում Շուշանի հոգեվիճակն արտահայտող ֆրազան՝ վերցված նրա արիտմիկից («Հալածանք, տառապանք»):

Օպերայի բացասական տիպերն են Յաթալի խանը և ուրացող Մելիքը: Խանը ներկայացված է որպես վայրագ բռնակալ, զուրկ մարդկային զգացմունքից: Նա փառամուլ է, եսասեր: Նրա միակ ձգտումն է հրով ու սրով ամեն ինչ իրեն ենթարկել: Միաժամանակ նրա մեջ նստած է կրքոտ զազանք, Այսպես, օրինակ, նա պատրաստ է ներել ուրացող Մելիքին՝ վերջինիս հսկողությանը հանձնված հայ գերիների փախուստը միայն այն պատճառով, որ Մելիքը հատուկ ակնկալությամբ իր գեղեցկուհի Շուշանին խանին կնություն է առաջարկում:

Խանի կերպարի այս գծերն արտահայտված են երաժշտության մեջ:

Խանի երաժշտական լեզուն և ընդհանրապես օպերայի այն հատվածները, որոնք կապված են նրա զորքի հետ, հիմնոված են պարսկական ինտոնացիաների վրա: Խանի մուտքը, ինչպես և պարսկական զորքի երթը, ամեն անգամ ուղեկցվում է արտաբուստ ընդգծված հանդիսավորություն ունեցող, բայց, ըստ էության, չոր և բութ երաժշտական թեմայով:

Maestoso

The musical score for the Maestoso section consists of two staves. The upper staff is for the voice, and the lower staff is for the piano accompaniment. The tempo is marked 'Maestoso'. The music is in a 2/4 time signature and features a series of rhythmic patterns and melodic lines. The piano part includes a dynamic marking 'f' (forte).

Խանի վտկալ պարտիայի համար, ամբողջապես վերցրած, բնորոշ են կոշտ ու կոպիտ ուղիղաձայնները: Այս կամ այն շափով երգայնության տարրեր հանդես են գալիս միայն

Andantino

The musical score for the Andantino section consists of two staves. The upper staff is for the voice, and the lower staff is for the piano accompaniment. The tempo is marked 'Andantino'. The music is in a 2/4 time signature and features a series of rhythmic patterns and melodic lines. The piano part includes a dynamic marking 'p' (piano). The vocal line includes the following lyrics:
 - մի - բե՛ - սը - սը, այս ո - սը - րան - ան - ան -
 - մի - վա - մի մե՛ - իզ ետ - ճառ - վառ և .

առանձին դեպքերում, ինչպես օրինակ, խանի և Շուշանի տեսարանում, արիողոյի մեջ, երբ նա շողորթթևելով Շուշանին, համոզում է դառնալ իր «հարեմի զարդը» (Տե՛ս 88 էջի երկրորդ օրինակը)։

Խանի կերպարի կողմերից մեկի զծագրման մի նուրբ շտրիխ էլ հանդիսանում է առաջին գործողության այն էպիզոդը, որի մեջ նա արտահայտում է իր անզուսպ ցանկասիրությունը՝ ժամ առաջ տիրանալու գեղեցկուհի Շուշանին։

Հայրենիքի և ժողովրդի նկատմամբ դավաճանությունը, ստորությունը, խարդախությունը, փառասիրությունը, ստրկամտությունն ու քծնանքը բնորոշ են ուրացող Մելիքի կերպարի համար։ Օպերայում նրա երաշխտական լեզուն համեմված է սլարսկական ինտոնացիաներով՝ մոտ և հարազատ Ֆաթալի խանի ինտոնացիաներին։ Առաջին գործողության մեջ նրա վրակալ պարտիայի կարևոր էպիզոդներից մեկը՝ նրա արիան արտահայտում է քծնանք խանի նկատմամբ։

Andantino

դու կը - քի - նես իմ փն - ասն իմ ալ - քի յույս իմ տ - րան

Più mosso

իմ տ - րան. Ես ես գե՛ղ - օյն մ'ընտանացան

աճերցած

Խա - լա - տա - ղիմ եւ ծա - ուան, խան, միտապատմ կե - նաւ

աճերցած

Իշխան Շահումյանին ուղղված մեկ ֆրազայի մեջ ցույց է՝ տրված ոչ միայն նրա հեղնանքը, այլև ողջ աստիությունը ղեկի ազատագրական շարժումն ու նրա ղեկավարները:

աճերցած

Խա - խան Ետևուրյան Խա, Խա, Խա, Խա ու - ղիմ

Այս խրոմատիկ ընթացքը օպերայում դառնում է ուրացող Մելիքի սովորական դարձվածքներից մեկը:

Ուրացող Մելիքի ոչ մեծ, բայց ցայտուն դժագրված կիրպարը լիակատար է դառնում երրորդ գործողության ֆինալում, որտեղ նա փորձում է նենդարար սպանել Դավիթ բեկին: Ահա նրան բնորոշող ֆրազաներից մեկը:

Moderato

Առ - դա - ջի խա - նի առ - ջե՛վ, ի՞նչ՝ Խա մա

Այս պատկերն ամբողջությամբ դրամատիկորեն հազեցված է և մեծ լարվածություն է պարունակում:

Երգեցիկ խմբին: Այն արտահայտում է ժողովրդի հրճվանքը՝ տարած առաջին հաղթության առթիվ և վերջում վերածվում է շքնաղ հայրենի երկրի դովերդության:

Ընդարձակ մասսայական տեսարան է ներկայացնում վարդավառի ժողովրդական տոնախմբությունը, որի ընթացքում տարբեր բնույթի՝ մերթ քնքուշ կանացի, մերթ առույզ, առնական մենապարերն ու խմբական պարերն իրար հաջորդելով, ստեղծում են ժողովրդական կյանքի մի վառ պատկեր: Ժողովրդի կերպարը լրացնում են մի քանի փոքր, բայց ցայտուն կերպով դրված այլ էպիզոդներ: Այսպես, օրինակ, առաջին գործողության վերջում, երբ խանը շրջապատված

իրեն շողորթթող յուրայինների խմբով, տարված է իր կրքերին հազուրդ տալու մոտակա հեռանկարով, որպես տվյալ սիտուացիային ուժեղ հակադրություն ներխուժում է ազքատկնոջ դառնությունը և բողոքի շեշտերով հաղեցված էպիզոդը, որի մեջ նա մերկացնում է ուրացող Մելիքի շարագործությունները: Այս փոքր էպիզոդում ցայտուն կերպով արված է խանի և մելիքների լծի տակ տառապող ժողովրդի ծանր վիճակը:

Մի այլ էպիզոդում՝ երրորդ գործողության մեջ զանգահարության տեսարանում, հեղինակը հանդես է բերել ժողովրդական մի տիպի՝ զզրի գունեղ կերպարը: Գզիրը ուրացող Մելիքի կամակատարն է, ինքնուրույնությունից զուրկ մի վախկոտ մարդ, և իր գործն առաջ է տանում լոկ պարծենկատության շնորհիվ: Նրա բնորոշ ֆրազան է.



Իմանալով, որ Տաթևի զանգը ասպատամրության ազդանշանն է, նա փորձում է արգելել զանգահարությունը, սակայն Սանթուրն ու հավաքված ժողովուրդը նրան կապուտելով ծիծաղելի վիճակի մեջ են դնում: Հետագայում հասկանալով ազատագրական պայքարի նշանակությունը, նա վերափոխվում է, հասնելով նույնիսկ բաշագործության:

Վերը բնութագրված հիմնական երաժշտական կերպարները հնարավորություն են տալիս հետևել օպերայի սյուժետային գծի ծավալման ընթացքին և որոշակի հուշական ներգործություն ստանալ: Խորանալով այդ կերպարների և հատկապես զլխավոր հերոսների երաժշտական մարմնավորման մեջ, հանդես բերելով առանձնակի հնարամտություն, գործի զննելով հարուստ ու բազմազան երաժշտական նյութ, ԵՊավիթ բեկո օպերայում հեղինակը հասել է ստեղծագործական զգալի հաջողության:

«Դավիթ բեկ» օպերայի հեղինակային վարիանսը հրատարակված չէ, իսկ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում իրագործված բեմադրությունը դեռևս դոնվում է ստեղծագործական մշակման պրոցեսում¹։ Այս հանգամանքը մեզ հնարավորություն չի տալիս մանրամասն վերլուծության ենթարկել օպերայի երաժշտական դրամատուրգիայի հարցերը, մի բան, որն իրապես ներկա աշխատության նպատակների մեջ չի էլ մտնում։

Համառոտակի նշենք «Դավիթ բեկ»-ի մի քանի ընդհանուր առանձնահատկություններ, որոնք կազմում են նրա կարևոր արժանիքները։

«Դավիթ բեկ»-ը որպես պատմա-հերոսական օպերա ունի առանձնահատուկ բնույթ։ Նրա մեջ հերոսական թեման հիմնականում բացահայտված է լիբրիկական բնույթի երաժշտությունում։ Այսպիսի մեկնաբանությունը հերոսական թեմատիկայի բացահայտման հնարավոր ձևերից մեկն է և դա հարստացնում ու բազմապատկերում է դարձնում հերոսական օպերային ստեղծագործությունը։

«Դավիթ բեկ» օպերայի կարևոր արժանիքներից է նրա մեկուղիական ոճի ժողովրդական հիմքը, պարզ և մատչելի երաժշտական լեզուն։ Այստեղ օպերայի ինտոնացիոն ոճը չի սահմանափակվում հայկական ժողովրդական երաժշտության որևէ մեկ ճյուղով, այլ ըստ անհրաժեշտության ընդգրկում է գյուղական երգի հետ միաժամանակ նաև քաղաքային, գուսանական և հողևոր երաժշտության քնորոշ տարրերը։ Այդ ճանապարհով օպերայի ինտոնացիոն ոճը, նրա լեզուն հարստացել ու ճոխացել է։

Խոսելով «Դավիթ բեկ» օպերայի երաժշտական լեզվի ժողովրդայնության մասին, առանձնապես պետք է նշել հեղինակի կողմից հանդես բերված բացառիկ վարպետությունն ու

¹ Ալ. Սպենդիարյանի անվան թատրոնում 1950—1951 թվականների ընթացքում իրագործված է «Դավիթ բեկ» օպերայի երեք տարբեր բեմադրություն։

գեղարվեստական տակտը օպերայի երկրորդ գործողության՝ վրացական արքունիքի տեսարանի երաժշտության մեջ: Այս գործողության երաժշտությունը գրելիս հեղինակն ամենայն հարազատությամբ է վերարտադրել վրացական ժողովրդական երգի ինտոնացիոն ոճն ու յուրահատուկ կոլորիտը:

Մեկոդիաներ ստեղծելու գործում Տիգրանյանի առանձնահատուկ շնորհքը այս օպերայում էլ գտել է իր լայն արտահայտությունը: Օպերան հարուստ է բազմաթիվ արտահայտիչ և հուզական մեկոդիաներով, ինչպես նաև գեղեցիկ պարերով: Օրիգինալ մեկոդիաների հետ միաժամանակ օպերայում կան նաև ժողովրդական երաժշտության ստեղծագործական օգտագործման շափազանց հաջող օրինակներ: Նույն հուզականությունն ու արտահայտչականությունը բնորոշ են նաև ուշիտատիվներին, որոնք կարևոր ֆունկցիա են կատարում օպերայի երաժշտական դրամատուրգիայի ծավալման մեջ: Անհրաժեշտ է նշել նաև կոմպոզիտորի կողմից շափավոր կերպով օգտագործված լեյտամոտիվիզմի սկզբունքը, որը մեծ մասամբ դրական արդյունքի է բերել և օպերայի երաժշտական դրամատուրգիան դարձրել է նպատակասույց:

Ա. Տիգրանյանի աշխատանքը «Դավիթ բեկ» օպերայի կերտման ուղղությամբ, որոշ ընդհատումներով, տևել է մոտ տասը տարի: Կոմպոզիտորն այդ օպերայի ստեղծմանը վերաբերվել է բացառիկ հետաքրքրությամբ և գործադրել է ստեղծագործական մեծ եռանդ: Սակայն, ինչպես արդեն ասել ենք, նա շտեսավ իր օպերայի բեմադրությունը և չհասցրեց վերջնական մշակման ենթարկել այն: Այս պատճառով էլ «Դավիթ բեկ» օպերայի մեջ մնացել են շլուծված որոշ հարցեր, որոնք դերադանցապես վերաբերում են օպերայի լիբրետոյին, նրա կառուցվածքին, նյութի դասավորությանը և դրամատուրգիական ծավալմանը:

«Դավիթ բեկ» օպերայի լիբրետոն ծավալով մեծ է և ունի բազմապլանային կառուցվածք: Նրա մեջ տեղ են գտել մանրամասնություններ ու սյուժետային դժբեր, որոնք ծանրաբեռնում են լիբրետոն, դանդաղեցնում դրամատուրգիական զար-

դացման ընթացքը, ձգձգում գործողությունը կիրքետոյի կառուցվածքային թերություններից մեկն էլ այն է, որ նա փաստորեն ունի երկու վերջավորություն. առաջին ճակատամարտը և Տաթևի գրավումը (երրորդ գործողություն), որով, ըստ էության, ավարտվում է նախորդ ամբողջ դարդացումը, և Զուբերդի գրավումը (հինգերորդ գործողություն), որը դրամատուրգիական տեսակետից դառնում է նախորդի կրկնությունը:

Բնականաբար լիրքետոյի թերությունները որոշ շափով արտահայտվել են նաև երաժշտության մեջ:

Օպերայի բոլոր թերություններն անկասկած վերացված կլինեին, եթե հեղինակն այն մշակելու և վերջնականապես ավարտելու համար նույնպիսի ժամանակ և հնարավորություն ունենար, ինչպիսին ուներ իր անդրանիկ օպերայի՝ «Անուշ»-ի համար:

«Անուշ»-ի համեմատությամբ «Դավիթ բեկ» օպերայի մեջ կոմպոզիտորի առջև ավելի դժվարին ինդիքներ էին ծառայել, դժվարություններ, որոնք բխում էին նոր օպերայի ժանրային առանձնահատկությունից, թեմայի ընդարձակությունից և օպերայի լայն մասշտաբներից: Հաղթահարելով այդ դժվարությունները, Ա. Տիգրանյանը «Դավիթ բեկ» օպերայում հասել է տեխնիկական վարպետության մի նոր աստիճանի: Այստեղ ավելի համարձակորեն են օգտագործված հարմոնիայի և պոլիֆոնիայի միջոցները, ավելի մեծ դեր է հասկացված օրկեստրին, զգալիորեն զարգացված են օպերային սելիտաստիվի հարցում «Անուշ»-ի մեջ ձևեր բերված նվաճումները, ակնառու է ծավալուն օպերային ձևերի կիրառության մեջ եղած հաջողությունը և այլն: Այս բոլորը, օպերայի հարուստ մեկտրիկ նյութի առկայության հետ միասին, հնարավորություն են տալիս «Դավիթ բեկ»-ը դասել Ա. Տիգրանյանի լավագույն ստեղծագործությունների շարքում:



Մեծ է կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանի երախտիքը հայկական երաժշտական կուլտուրայի զարգացման գործում: Նա իր ուժերը նվիրեց ազգային ժողովրդական օպերայի ստեղծմանը: Իր «Անուշ» օպերայում նա լուծեց ստեղծագործական այնպիսի խնդիրներ, որոնք սկզբունքային կարևոր նշանակություն ունեն հայկական երաժշտության զարգացման գործում: Ժողովրդական ոճով նա ստեղծեց հերոսների երաժշտական բնմական անմահ կերպարներ: Նա իրագործեց հայկական օպերայում ժողովրդական երաժշտական լեզվի բազմակողմանի օգտագործման, ժողովրդական ոճի հիմնավորման խընդիրը: «Անուշ» օպերան իր ճշմարտացիությամբ, բովանդակության խորությամբ և հուզականությամբ, մեղրդիական արվեստի աչքի ընկնող վարպետությամբ, պարզությամբ ու մատչելիությամբ լրացրեց և հարստացրեց հայկական կլասիկ երաժշտական ժառանգությունը:

Ստեղծագործական ասպարեզ մտնելով դեռևս մեծ կոմիտասի գործունեության ժամանակ, Ա. Տիգրանյանը հանդիսացավ հայկական երաժշտության մեջ ռեալիզմի և ժողովրդայնության սկզբունքներն արմատավորող ականավոր գործիչներից մեկը: Ավելի քան քառասունհինգ տարվա ստեղծագործական և երաժշտական-հասարակական գործունեության ընթացքում նա հավատարմորեն ծառայեց հարազատ ժողովրդին, ողջ կարողությունն ու եռանդը ի սպաս դրեց հայկական երաժշտական կուլտուրայի զարգացման գործին: Սովետատահայ կոմպոզիտորների ավագ սերնդի ներկայացուցիչների շարքում նա լայնորեն ծավալեց իր գործունեությունը: Նրա ստեղծագործությունը զարձակ բազմաժանր, կապվեց սովետական կյանքի թեմատիկայի հետ և հարստացավ նոր կերպարներով: Սովետական տարիների իր ստեղծագործությունը Ա. Տիգրանյանը պսակեց պատմա-հերոսական հայրենասիրական «Դավիթ բեկ» օպերայով, որը կարևոր ներդրում հանդիսացավ սովետահայ օպերային ստեղծագործության մեջ:

Իր ամբողջ կյանքի ընթացքում Ա. Տիգրանյանը մնաց որպես մարդկային լավագույն գծերով օժտված մի ազնիվ քաղաքացի: Հասարակական պարտքի բարձր գիտակցությունը, զործին նվիրվածությունը, շափազանց համեստությունը, հոգատար վերաբերմունքն ընկերների և հատկապես երիտասարդ կադրերի նկատմամբ, — այս բոլորը նրա կերպարի բնորոշ գծերն էին: Իր բարձրարժեք ստեղծագործություններ և մարդկային այդ լավագույն հատկանիշներով նա մշտապես վայելում էր երաժշտական հասարակայնության և ողջ ժողովրդի խորին հարգանքն ու սերը:

Հարազատ ժողովրդի և նրա ստեղծագործության հետ ունեցած սերտ կապի, իր ստեղծագործության իսկական դեմոկրատական բնույթի, ինչպես և բազմարժանի կերպարանական-հասարակական աչքի ընկնող գործունեության շնորհիվ, Ա. Տիգրանյանը հանդիսացավ իսկական ժողովրդական արվեստագետ:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Յ Ն Ե Ր



Ա. ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ԱՏԵՂՄԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅՈՒՑԱԿԸ 1

ա) Երաժշտական-բեմական ստեղծագործություններ

1. «Անուշ», օպերա 5 գործ. 6 պատկերով, ըստ Հ. Թումանյանի համանուն պոեմի, լիբրետո՝ Ա. Տիգրանյանի, 1908—1912;
2. «Հելլի և Մեչնուն», երաժշտական դրամա 5 գործ., ըստ Հ. Ոսկանյանի պիեսի, 1915;
3. «Քյոն-օզլի», օպերա, լիբրետո՝ Ա. Տիգրանյանի (զբված է մեկ գործողություն), 1936;
4. «Դավիթ բեկ», օպերա 5 գործ. 8 պատկերով, լիբրետո՝ Ա. Տիգրանյանի, 1940—1949:

բ) Ստեղծագործություններ երգեցիկ խմբի և նվագախմբի համար

1. «Երթանք սարք», խոսք Հ. Կոստանյանի, եռաձայն խմբերգ, 1906;
2. «Արևելյան պար», սիմֆոնիկ նվագախմբի համար, 1915;
3. «Գուն էն գլխեն», Սայաթ-Նովայի, մշակում եռաձայն իզական խմբի համար, 1916, քառաձայն խառը խմբի համար, 1931;
4. «Նորահրաշ», մշակում եռաձայն իզական խմբի համար, 1916;
5. «Նոր պարուն», խոսք Հ. Հովհաննիսյանի, քառաձայն խմբերգ, 1918;
6. «Փայլերգ», փողային նվագախմբի համար, 1931;
7. «Մովեստական Վրաստանի 10-ամյակին», երկձայն խմբերգ, 1931;
8. «Կանտատա Հայաստանի խորհրդայնացման 15-րդ տարեդարձին», խոսք Գ. Սարյանի, քառաձայն խմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար, 1935;
9. «Արյունոտ զիշեր. 26 կոմունարներին», կանտատա խառը խմբի համար, առանց նվագակցության, 1936;
10. «Դիրքերում», քալերգ փողային նվագախմբի համար, 1944;
11. «Պարային սյուիտա», սիմֆոնիկ նվագախմբի համար, նվիրված Սովետական Վրաստանի 25-ամյակին, 1946:

¹ Ա. Տիգրանյանի ստեղծագործություններից քիչ բան է հրատարակված, իսկ նրա ձեռագիր ժառանգությունը զետես համակարգված և ուսումնասիրված չէ: Այդ իսկ պատճառով ներկա ցուցակը նախնական է և լրակատար համարվել չի կարող:

դ) Դաշնամուրային ստեղծագործություններ

1. «Արևելյան ֆանտազիա», 1931:
2. «Շիրակի զմրուխտեր» (ֆանտազիա), 1933:
3. «Պարերգ» (նվիրված Հայկական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ, դաշնակահար Լ. Տեր-Դավթյանին), 1937:
4. «Հայկական պարերի սյուիտա», 1938:
5. «Մանկական ալբոմ», 1948,
 - ա) «Իրիկեային»:
 - բ) «Սրինգ»:
 - գ) «Ծրոքոցի երգ»:
 - դ) «Վարիացիաներ»:
 - ե) «Ջայուզ»:

ը) Մեներգեր դաշնամուրի նվագակցությամբ

1. «Հովերն առան սար ու դարեր», խոսք՝ Ավ. Իսահակյանի, 1903:
2. «Ախ իմ նամփեն», խոսք՝ Ավ. Իսահակյանի, 1906:
3. «Մե աշերեն», խոսք՝ Ավ. Իսահակյանի, 1908:
4. «Սիրտ իմ լոիր», խոսք՝ Լ. Հովհաննիսյանի, 1923:
5. «Մնաք բարով», դուետ, խոսք՝ Լ. Հովհաննիսյանի, 1923:

կ) Մասսայական երգեր

1. «Շիրկանալը», խոսք՝ Լ. Հակոբյանի, 1927:
2. «Գարնան լալա», խոսք՝ Ա. Տիգրանյանի, 1929:
3. «Մարտի ութին», խոսք՝ Ա. Տիգրանյանի, 1929:
4. «Կարմիր բանակայինին», խոսք՝ Խ. Հրայրյանի, 1931:
5. «Տրակտորի ժպիտը», խոսք՝ Ա. Տիգրանյանի, 1931:
6. «Գյուղում», խոսք՝ Ա. Տիգրանյանի, 1931:
7. «Հեյ շանն շանն», խոսք՝ Ա. Տիգրանյանի, 1931:
8. «Իմ երգը», խոսք՝ Ա. Տիգրանյանի, 1933:
9. «Գարնանցան», խոսք՝ Ա. Տիգրանյանի, 1935:

զ) Երաժշտություն՝ զրված դրամատիկական ներկայացումների համար

1. «Եսավարի ճանկերում» (Տ. Հախումյանի), 1936:
2. «Արշալույսին» (Ա. Գուլակյանի), 1937:
3. «Թոնդրակեցիներ» (Ծ. Բահաթուրի), 1940:
4. «Նամուս» (Ա. Շիրվանզադեի), 1940 (1947):

5. «Գազիթ բեկ» (Ա. Փաշվորյանի), 1942:
6. «Մարտերում», 1937:
7. «Անահիդ» (Կ. Գարրիելյանի), 1941:
8. «Գիբոր» (Գիսակի; ըստ Հ. Քումանյանի), 1921:
9. «Մի կաթիլ մեզը» (ըստ Հ. Քումանյանի), 1937:
10. «Սամվել» (ըստ Բաֆֆու), 1945:
11. «Կույսի աշտարակը»
12. «Աբշը» (Մ. Ֆ. Ախունդովի), 1943:

Ա. Տիգրանյանն ունի նաև ժողովրդական մի շարք երգերի մշակումներ՝ «Ճենկատարման և երգեցիկ խմբի համար» Նրան են պատկանում նաև «Բիզնի սկարմեն» և «Լեբգիի «Ռիզոլետո» օպերաների, ինչպես և մի քանի օպերետաների տեքստերի հայերեն թարգմանությունը:

ԱՆՎ ԱՆԱՅԱՆԿ

- Աբովյան Խ.—10, 11, 13
 Ազաճյան Գ.—12
 Ախունզով Մ. Ֆ.—101
 Աղայան Ղ.—11, 13, 21, 38
 Աճբիկյան Մ.—12
 Այվազովսկի Ն.—12
 Անանյան Գ.—39
- Բահաթուր Ն.—100
 Բաղդասարյան Ե.—45
 Բաշինջանզյան Գ.—12
 Բարխուդարյան Ս.—45
 Բարսոյա Վ.—40
 Բիզե Ժ.—101
 Բըյուսով Վ.—31, 46
 Բրոնշիկ—24
 Բրուտյան Ա.—18
- Գարբընեյան Կ.—101
 Գոգսի Ն.—16
 Գորկի Մ.—31
 Գուլահյան Ա.—38, 39, 100
 Գրեշանինով Ա.—45
- Դանիելյան Ն.—39
- Եկմայան Մ.—13, 23, 25
- Թումանյան Ն.—13, 27, 28, 31, 33, 34, 38, 44—46, 49, 66, 99, 101
- Իսահակյան Ավ.—13, 19, 27 100
- Լևոնյան Գ.—32
- Սաաուրյան Ալ.—31
- Կարա-Մուրզա Ք.—13, 14, 15, 16, 20, 23, 25
 Կլենովսկի Ն.—23
 Կոմիտաս - 5, 14, 15, 16, 17, 18, 23, 25, 30, 97
 Կոստանյան Ն.—99
- Հակոբյան Ն.—100
 Հախումյան Ս.—100
 Հրաչյան Խ.—100
 Հովհաննիսյան Ն.—13, 27, 31, 99, 100
 Հովնաթանյան Ն.—12
- Մախոխյան Վ.—12
 Մայրլյան Ա.—32
 Մանուկյան Ա.—31, 45
 Մելիքյան Բ.—5, 16, 28, 31, 45,
 Մելիքյան Սպ.—18, 31
 Միրզոյան Մ.—31
 Մուրադյան Ս.—45
- Նալբանդյան Մ.—11
 Ներսիսյան Սա.—12
- Շաթիրյան Ս.—39
 Շալապուրի Ֆ.—24
 Շահվերդյան Ա.—28
 Շերամ—19, 20
 Շիրվանզադե Ալ.—100
- Ոսկանյան Ա.—33
 Ոսկանյան Ն.—99

- Զայկոսկի Գ. Ի.—24
 Զմշկյան Գ.—12
 Զուխաջյան Տ.—16

 Գալիաշվիլի Ջ.—36
 Գապայան Ն.—24
 Գաբոնյան Հ.—11.
 Գոռչյան Գ.—11, 13, 38

 Զամալի—19, 20, 91
 Զիվանի—19

 Իրևակի-Կոբսակոզ Ն. Ա.—16

 Իսյաթ-Նոզա—19, 99
 Իսրայելյան Վ.—45
 Իսրայան Գ.—99
 Իերզոբոզ Ն.—39
 Իլկենզիբայան Ա.—5, 15, 16, 32,
 38, 39, 40, 45, 67, 70, 93

 Եսենզուկյան Գ.—11, 12
 Եսրենյան Վ.—12

 Վերդի Ջ.—24, 101
 Վեսելոսկի Յու.—31

 Տալյան Շ.—29, 33, 39
 Տեր-Փազթյան Հ.—31, 100
 Տեր-Ղևոնդյան Ա.—18, 40, 45
 Տերյան Վ.—31
 Տիրբանյան Ն.—13, 18, 20
 Տիրբանյան Վ.—28

 Րաֆֆի—38, 70, 101

 Քաջվորյան Ա.—101

 Օստրոսկի Ա. Ն.—12

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
1. Հեղինակների կողմից	5
2. Ներածութուն	9
3. Արժեքն Տիգրանյանի կյանքի և ստեղծագործութան ուղին	18
4. Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերան	44
5. «Դալիթ բեկ»	69
6. Հալիլիֆադներ	99
ա) Ա. Տիգրանյանի ստեղծագործութունների ցուցակը .	101
բ) Անվանացանկ	104



Պատ. խմբագրեր՝ Ս. ԳԱՍՊԱՆՅԱՆ

Հրատ. խմբագրեր՝ Հ. ԷԼԶԻՐԵԿՅԱՆ
Տեխ. խմբագրեր՝ Մ. ԿԱՓԼԱՆՅԱՆ
Կոնստրուկտիվ խմբագրեր՝ Ա. ԱԼԱՆՅԱՆ

ՎՅ 08660 ԽՀԽ 238 Պատվեր 494 Հրատ. 1113 Տիրած 2000

Հանձնված է արտադր. 3/XII 1954 թ., ստորագրված է տպագրության
16/II 1955 թ., տպագր. 6³/₄ մամուլ \div 11 ներդիր, հրատ. 4,67 մամուլ:
Գինը 2 ո. 10 կ., կազմը 1 ո. 50 կ.

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչության տպարան, Երևան, Արսոյան 124:

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0007286

ЦЕНА

И
20185